# ՍՈՂՈՄՈՆ
# ՏԱՐՈՆՑԻ

891.99
S-26

ССРА





821.99
S-26 Աշ.

12 MAR 2011

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 194

13.08.2013
58047
…-ССР
1939
40

Согомон Таронци
СТИХИ
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.

# ՅԵՐԳԵՐ ՈՒԺԻ ՅԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ

## ՅԵՐԳ ՈՒԺԻ ՅԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ

Ահավասիկ գրի՛չն իմ առած՝ թաթախած խինդո՛վ ցողաթուրմ,
Գրիչ, վոր սիրերգնե՛ր է սրնգում և յերկնում է յերգե՛ր մարտական,

Յես, վորպես Ո՛ւժի և Գեղեցկության կարմրաթի՛րտ մի քույր՝
Յերգում եմ գունդագունդ այս յե՛րթը հաղթական:

Դուք, յերկրիս չքնաղ աղջիկնե՛ր, և դուք, տղաներ խնդուն,
Ո՛վ անընկճելի սերունդ Ներկայի մեր արևավա՛ռ.
Շառաչում եք ինչպես շեփորները շեկ ու թնդում՝ ինչպես թմբուկներ թնդուն,
Յեվ քայլում դաստա՛կ առ դաստակ—ինչպես տեղահան անտառ:

Ձեր ամեն մեկի շուքի՛ հետ՝ քայլում է կենսախինդ մի գարուն,
Ամե՛ն—մի նազանի՛ աղջիկ՝ հուլիսյան ամա՛ռ է հուրհուր,
Ամեն մի մկանուտ տղայի շնչե՛ղ թոքերում՝
Ճնչում է մեր կյանքի շռի՛նդը և ամբողջ մեր խի՛նդը վոսկեհուռ:

Դուք խինդի անսահման ծո՛վ եք և ուժի անցամաք ովկիա՛ն,
Յեվ քայլող արշալույս Ներկայի, վոր դեպի Գալի՛քն է գնում.
Դուք պայքա՛ր եք, և յե՛րգ եք, և սե՛ր եք, և կյա՛նք,
Յեվ կյանքի սկի՛զբ ու ընթա՛ցք անհատնում:

Յեվ յես նայելով ձեր յերթին՝ Ուժի՛ և Գեղեցկությա՛ն,
Խորհում եմ, վոր չե՛ն ունեցել այսքան վեհությո՛ւն ու կի՛րք—
Յեվ վո՛չ վոլիմպյան խաղե՛րը, վորից թնդում եր Հելլա՛դան,
Յեվ վո՛չ էլ մո՛ւտքը Կեսարի՝ հաղթական կամարի տակից:

Զեր զորասյուներից ճերմակ՝ թնդում են քաղաքները մեր,
Յեվ խայտում գյուղե՛րն հեռավոր և խլիրտ գյուղե՛րը մոտիկ·
Յեվ ամբողջ մի անծայր յերկիր՝ դառնում է Ո՛ւժ,
Գեղեցկությո՛ւն ու Սե՛ր,
Յեվ կապում իր մեջքին կանա՛չ և կարմիր գոտի՛:

Քայլեցե՛ք, չքնա՛ղ աղջիկնե՛ր և դուք տղանե՛ր՝ վստահ,
Թող սարսի՛ անարգ թշնամին ձեր յերթից հզո՛ր, առնակա՛ն·
Քանզի շողում է Գալիքի հորիզոնը բյուրեղի՛ց հստակ,
Քանզի ձե՛րն է կյանքը, ձե՛րն է սերը և ձե՛րն է պայծա՛ռ
Ապագան:



# ՀԵԾՅԱԼՆԵՐԸ

Շաղով ու շողով լցված —
Զմրուխտե մեր դաշտով անծիր,
Ուր գետի արծաթն է հոսում
Ինչպես մանկությունն անցյալ,
Հանգիստ ու խրոխտ, նման
Դավթի և Մուրումեցի,
Գնում են սև ձիեր հեծած
Յերկու վիթխարի հեծյալ:

Հեռվում կապույտն է մխում
Գրկած հորիզոնը գորշ,
Ն՛ա յե մեծ սահմանածիրը
Կարմիր իմ Հայրենիքի·
Նրանից ավելի հեռուն
Ցուրտ, մռայլ խավարի ներքո —
Դաշտե՛րն են, լեռնե՛րն են ու լայն
Ծովեր՛ն են ծեր Արևմուտքի:

Ձիերը խրխնջում են մերթ,
Զանգակի ղողա՞նջ է, թե՞ յերգ,
Վոր կապույտ բյուրեղն է կտրում
Լռության անհուն ու անծիր·
Ահա որոտում է իրանը
Գետամերձ շամբուտը շեկ,
Վորտեղից չի՛ անցնի այս կողմ
Յեվ վո՛չ մի գիշակեր արծիվ:

Լուռ են հեծյալներն յերկու:
Նրանց բիբերից պայծառ
Չի կարող խուսափել անգամ
Թրթռուն թիթեռը թեթև,—

Եվ նույնիսկ միջատի հյուլեն,
Վորը խավարով անձայր՝
Թռչում է և անհետ կորչում
Ծառի կամ բլուրի հետեվ:

Ձիերը գլուխնին բարձը՛ր՝
Ռունգերով խմում են անհագ
Ցրտին ալիքներն օդի,
Եվ շնչեղ թոքերով իրենց,
Խոտաբույր, դուրս հանում շոգու
Մշուշի ճողիկներ ճերմակ,
Վորոնք ցնդում են օդի
Ովկիանում և անհուն և մեծ:

Խաղա՛ղ է սահմանը կարմիր
Մեծանուն իմ Հայրենիքի:
Գնում են հեծյալներն հանդարտ
Արծաթյա, լուռ գետի ափով.
Եվ յերբե՝ գան գիշակերներն
Ափից ծեր Արևմուտքի՝
Նրանք կարշավե՛ն այնժամ
Բոլո՛ր հողմերի թափով:



# ՆԱՎԱՍՏԻՆԵՐԻՆ

Ահավասիկ առած յես գրիչն իմ յերեր,
Գրիչ, վոր յերբեմն սիրերգակ սրինգ է ու մերթ հողմի վորոտ,
Ձե՛զ եմ յերգում, ձե՛զ, մեր քա՛ջ նավաստինե՛ր,
Նավաստինե՛ր սրտոտ:

Ձեր մայրը՝ անծիր ծովն է ծավալուն.
Արևը նրա բիբը և՛ լույս և՛ կեզ,
Ձեր սերը՝ ալեկոծ ընդերքն անհուն
Եվ սրտագրավ անդորրը հեզ:

Ձեր տարերքն սպիտակ շամանդաղն է առավոտի.
Իրիկվա զունդագունդ ամպերը կայծակնավառ,
Վորոնց խարազանները դարեր անթիվ—
Ծեծել են ջրերի կնճիռը մառ:

Ո՛, կտրիճնե՛ր, ո՛, ծավալուն ծովի ծանոթ վորդիք,
Դուք քաջաբար եք շնչում և հողմաբեր ամպ,
Դուք ծնվում եք ծովի չպարփակվող պորտից
Եվ առաջ եք մղվում ինչպես զորքն ապստամբ:

Դուք ձեր սարսափով զսպում եք ջրշուններին դեղին,—
Վորոնց գործն է՝ խանձել ամեն արտ ու արոտ.
Թողնել վիթխարի վե՛րք և արցունքնե՛ր աղի,
Եվ անվորդի մայրեր, հարսի կարոտ:

Թողնել կառափների հսկայական բուրգեր,
Ու դիակներ թողնել դաշտերում ու ճամբին,
Բորենիներ թողնել, ու գիշատիչ հավքեր,
Ու բազեներ, վորոնք վայր են իջնում ամպից:

Այդ գիտեք դուք այնքա՛ն պարզ, ինչպես վոր գիտեմ յես,
Վոր բնությունը ինձ բիբ ե տվել.
Վոր նայեմ իրեն իմաստունի պես՝
Հասկանամ բոլո՛ր տարերքների սկիզբն ու ընթացքը վեհ։

Նավաստինե՛ր, ահավասիկ ձեր ծովը ծավալուն և անձկալի,
Բայց իմացեք՝ վո՛չ մի ծով չի մնում այսպես խաղաղագին,
Քանզի ամե՛ն փորձանք պատրաստվա՛ծ ե գալիս,
Յեվ ջրշունն հարձակվում ե հանկարծակի։



## ԳՈՎՔ՝ ՄԵՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Ո՛վ իմ յերկրի աղջիկներ ճկուն ու վա՛ռ,
Յեվ տղանե՛ր դուք մկանուտ և ամրակամ,
Ահա յերգում եմ ձեզ իմ այս յերգը ընկերաբար,—
Իմ յերգը խրո՛խտ և առնակա՛ն։—

Դուք չքնա՛ղ հասակներ, ձեր անցյալը մռայլ,
Յեվ Ներկան ձեր՝ իմաստուն,— և Ապագան՝ հրաշալի,
Ահա իմ յերգը լցված ձեր սիրո՛վ—շռայլ—
Յեվ ձեր փոթորկածին կյանքերով լի։—

Դո՛ւք, ո՛ յերջանկությո՛ւն, ունիք այսոր
Յե՛վ սե՛ր, և՛ աշխատանք, և՛ յերգ,
Դուք եք, դուք անկրկնելի այն սերո՛ւնդը հզոր,
Վոր պիտի բարձրացնի հատուցման սուրը մերկ։—

Յեվ բա՛խտը, բախտը—շռայլ ե ձեզ համար,
Ձե՛զ ե վիճակված տեսնել պայքարը ձեր տարեկիցների,
Այնտեղ, ուր կան շենքե՛ր վոսկեբուրգ և շենքեր մարմար,
Յեվ կան սպանող կացիններ և թոկեր խեղդամահների։—

Այնտեղ՝ անդուլ պայքարում են տարեկիցները ձեր,
Յեվ ցնցվում ե ագահ վոսկեհորթը խռովահույզ,
Նրանք պայքարում և մեռնում են բազում ու բազմաձև,
Մեռնում անաշխատա՛նք, մեռնում անսե՛ր, բայց Ապագայով
լիահույս։—

Յեվ այժմ, ձեր տոնին՝ թախծո՛վ եմ յերգում նրանց մահը,
Յեվ յերգում, ո՛վ իմ յերկրի ջահելնե՛ր,—ձեր կյանքը—սիրո՛վ,
Ձեր ուժը, վոր անվախճան ու անմահ ե,
Յեվ պսակված ե յերգով ու սրով։

Ձե՛րն է հնձանը խաղողի, և արտը վոսկեհասկ,
Յեվ գործարանը վիթխարի, և արշալույսն անբիծ,
Ձե՛րն է վերջալույսը ծիրանագույն, և յերկինքն անհաս,
Յեվ յերկրիս հորիզոնները անպարագիծ:

Արդ, իմ յերկրի աղջիկնե՛ր ճկուն ու վառ,
Յեվ տղանե՛ր ամուրմեջք և ամրակամ,
Յերգեցե՛ք կարմիր հաղթանակի ձեր յե՛րգը սրավար,
Քանզի ձե՛րն է կյանքը, ձե՛րն է սերը, և ձե՛րն է չքնա՛ղ
Ապագան:



## ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Ո, դուք, վոր ճկուն եք, ինչպես ուռին,
Մատաղ, ինչպես մորճը, կանաչ, ինչպես ծի՛լը գարնան,
Ահա լսում եմ ձեր ծիծաղը՝ ինչպես գուռի,
Ինչպես ավազանի մեջ թափվող շատրվան:

Դո՛ւք եք զվարթությամբ լցնում դաշտերը բամբակի,
Յեվ ցորենի արտերը մեր անսահման,
Յեվ գործարանները մեր ահագին,
Յեվ ճամբաները մեր վոսկեման:

Դո՛ւք եք զարդարում քաղաքն ու դաշտը, կյանքը և սիրտը մեր,
Յեվ վոչ մի գարուն այնքան գեղեցիկ չէ և հրապուրող,
Վորքան ձեր նազա՛նքը, ձեր քնքշությո՛ւնը, ձեր սե՛րն անմեռ,
Վոր լցված է բոլո՛ր գարունների բույրով:

Դո՛ւք, անխուսափ յեռանդն եք յերիտասարդների,
Յեվ տալիս եք կարոտներ ու ձգտումների գրգիռ·
Նրանց՝ սիրտը կախում զանգրազանգուր ձեր ողակներից,
Յեվ մերթ հեռու յեք լինում յերկի՛նքն ինչպես, և մերթ մոտ՝
ինչպես յերկիր:

Դո՛ւք, կարոտալի կարո՛տ եք, և աստղանման գիշե՛ր:
Շլացուցիչ ցերեկ և ժա՛մ ցանկալի·
Գոյության գրավական՝ և աննինջ հո՛ւշ եք,
Սափորներ բնության տարերքով լի:

Յեվ ձեզ բոլորի՛դ է վիճակված լինել հարսներ,
Պտղաբարձ ծառեր լինել ամառային·
Լինել կյանքի շենքը ամուր և հար պահող սյուներ,—
Յեվ միշտ նորոգել—կյանքը հի՛ն:

Ո՛, ապագա մայրեր մարտիկների բյուր և անքանակ,
Դուք ճկո՛ւն եք, ինչպես մորճը, ինչպես ուռին:
Քանի արև՛ը կա, և քանի կաք դուք՝ վո՛չ մի խորշակ
Չի՛ դիպչելու կյանքի կանա՛չ ծառին:

# ԿԱՐՄԻՐ ԱՔԻԼԼԵՍՆԵՐ

Այս առավոտ, թող բոլո՛ր մեղկությունները հեռանա՛ն,
Եվ բոլոր յեղկություննե՛րս ցնդեն, ինչպես ամպ.—
Եվ թող հոսի իմ մեջ ձեր ո՛ւժը աքիլլեսյան,
Ծովերի՛, գետերի՛ և բոլո՛ր ջրվեժների սաստկությամբ:

Եվ թող՝ կրեմ այս առավոտ ձեր յերիտասարդի
Ո՛ւժը՝ ծանրածա՛նր վահան, վորպես զինվո՛ր վերջին,
Վոր մղում տանա բաբախն իմ սրտի,
Եվ բաբախը՝ սրարշավ հողմի պես՝ սուրա և շառաչի:

Հիացմունքո՛վ ու քա՛ղցր յերկյուղով՝ ինչպես շլացած յերեխա
Մոտիկից նայե՛լ եմ յես Առաջնորդին մեր արեգակնածով,
Յերբ հոսում եր նրա առաջից բազմությո՛ւնը խայտախայտ,
Լցված պայքարի և հաղթանակի անհո՛ւն զգացումով:

Հիացմունքո՛վ նայել եմ մեր արտերին բազմաբերք,
Մեր գործարանների շինդին շանթասլաց,
Եվ խմել առորյայի արշալույսը, և վերջալույսը՝ իբրև յերգ,
Վոր սարսուռ ե թափում մայր հողին և՛ բերրի՛, և՛ թաց:

Նույն այդ հիացմունքով ել նայում եմ ձեզ վրա՛՝
Եվ ձեր ուժը կայծակի թափով յեռում ե իմ հոգում,—
Ծաղկեցնում գեղեցկության բողբոջնե՛ր հուրհրան,
Եվ կա՛մքս զինում, և կռվի տե՛նդս բորբոքում:

Ձեզանով կարող են պանծալ ձեր մայրերը զոհ,
Եվ մայրերի մայրը՝ հո՛ղը, և դասակա՛րգը ձեր,
Վորոնք սնեցրին իրենց անկշռելի ուժի ստինքով,—
Եվ կոփեցին ձեզ, վորպես կարմի՛ր Աքիլլեսներ:



Դուք Աքիլլեսնե՛ր եք, Աքիլլեսնե՛ր կարմիր,
Մեր դասակարգի պարծա՛նքը և պարծա՛նքը մեր հողի՛,
Դուք Աքիլլեսնե՛ր եք, Աքիլլեսնե՛ր կարմրազարմիկ.—
Անարկու նետեր՝ մխրճված մեր անա՛րգ թշնամու կողին:

Մենք բոլո՛րս, բո՛լորս պարտավոր ենք քայլել ա՛յն ճամբով,
Վորով ուժ պետք ե ամբարել և դառնալ սո՛ւր,—
Եվ դառնալ զնդա՛կ, և մկա՛ն, և դառնալ մեծ սի՛րտ՝ մեծ տրոփո՛վ,
Հանուն Գալի՛ք պայքարի և հաղթանակի մեր սուրբ:

Ո՛վ Կարմիր Աքիլլեսներ, ո՛վ բռունցքնե՛ր աններում,
Ուսուցե՛ք մեզ՝ հավաքել ո՛ւժ արեվակամ,
Վոր մե՛ր, վոր մե՛ր բոլորիս աչքերի՛ ովկիաններում
Շողշողա Գալիքի պայծա՛ռ յուսընկան...

1939 Նկ

## ՊԱՅԾԱ՛Ռ ԿԵՆԱՑ

Սի՛րտ իմ, զա՛րկ ծնծղադ, ահա կարմիր գինի,
Թմբուկն՝ այսօր խինդ է, շեփորը՝ հաց·
Եվ յե՛կ, բարձրացնելով բաժակները հիմի,
Խմե՛նք հայրենիքի պայծա՛ռ կենաց։—

Այս յերջանի՛կ ժամին, այս սրբազա՛ն պահին
Երբեք չհիշենք մեր կյանքը անցած,
Եվ Ներկայից նայենք բյուրեղ Ապագային,
Խմե՛նք հայրենիքի պայծա՛ռ կենաց։—

Գինու ամեն կաթիլն արշալո՛ւյս է հեղեղ,
Իսկ մենք՝ յերկինքներ ենք լազուր ու բաց·
Հիացած այս որվա շքեղությա՛մբ շքեղ՝
Խմե՛նք հայրենիքի պայծա՛ռ կենաց։—

Սի՛րտ իմ, հագի՛ր բոլոր հանդերձներըդ վոսկի
Եվ շողշողա շքեղ, շուշանացած·
Այսօր ցնծություն է հաղթանակող բազկի,—
Խմե՛նք հայրենիքի պայծա՛ռ կենաց։—

Վե՛ր բարձրացնենք հպարտ՝ բաժակները բուրյան,
Հանուն հաղթանակի շքեղության՝
Կրկի՛ն անգամ, կարմիր տոնին Հոկտեմբերյան,—
Խմե՛նք հայրենիքի պայծա՛ռ կենաց։—



## ՏԱՂ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Առնեմ գինու բաժա՛կը ու քո կենա՛ցը խմեմ,
Քո ազատ ու կապտաչինջ յերկնքի բա՛ցը խմեմ։

Ընկնեմ հանդեր ու սարեր, անտառներ խոր ու մթին,
Ծաղիկների՛դ, ծառերի՛դ շաղերի թա՛ցը խմեմ։

Վորդիներիդ քաջազարմ շարքո՛ւմ լինեմ ամեն ժամ,—
Ուրախության կանչերն ու տխրության լա՛ցը խմեմ։

Հոգուս հոգնած թևերը միշտ նորոգեմ նո՛ր ուժով՝
Առավոտի՛դ իմաստուն արևի կա՛յծը խմեմ։

Եվ Ներկայի գագաթից նայեմ հեռո՛ւն, միշտ առա՛ջ,
Տեսանելի՛ ու չքնաղ փայլքիդ ա՛յգը խմեմ։

## ՄԵՐ ԳՆԱՑՔՆԵՐԸ

Մեր յերկրի դաշտերով արձակ ,ձորերով ու լեռնանցքներով,
Ուր դանդաղ ճռռնչում եյին փայտաշեն մեր հին սայլե՛րը,
Ինչպես հաղթական յերթեր՝ լցված ուժով ու սիրով՝
— Գիշեր ու ցերե՛կ—աներնդհատ—սուրում են մեր գնացքնե՛րը:

Այն, ինչ վոր յերազում եյինք մեր մտքի մանկության
դարում,—
Յոթը ծով, յոթը սար կտրել, յերազում միշտ թռչել վե՛րը,
Այսոր՝ յերազն այդ արդեն հագել ե միս, վոսկոր և արյուն,
— Գիշեր ու ցերե՛կ—աներնդհատ—սուրում են մեր գնացքնե՛րը:

Վարում են ընթացքը նրանց յերկաթյա բյուր ձեռքեր ամուր,
Նրանց դեմ կքվում են լեռները, լայնանում են նեղլիկ ձորերը,
Մեր յերկրից մինչև ցուրտ տայգան, մինչև Արեվելքը հուր,
— Գիշեր ու ցերե՛կ—աներնդհատ—սուրում են մեր գնացքնե՛րը:

Ահա տեսնում ենք, զգում վոր այս ընթացքը ներկա—
Զգվում ե գալիքի չքնաղ, ցանկալի, բիլ գագաթնե՛րը,
Վողջո՛ւյն ձե՛զ, ո՛վ վարող ձեռքե՛ր, ահա ձեր բորբ ուժով
առկա՝
— Գիշեր ու ցերե՛կ—աներնդհատ—սուրում են մեր գնացքնե՛րը:



## ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Ո՛վ փառքով ու պատվով պատմունանված պատանի՛,
Թույլ տուր իմ այս գրչով յերգել քո արձա՛նը գրանիտյա,
Յերգել քե՛զ, վորպես նոր կյանքի յերակը կենդանի,
Յեվ վորպես պայքարի և յեռանդի աղբյուր հակնթյա:

Ծաղկահասա՛կ հերոս, դու ըմբոստացման հո՛ւր,
Վոր կաթեցիր յերթիկներից մեր հայրենական,—
Յեվ մեր կյանքի վրա, վոր յերկար դարեր ահազարհուր
Խավարի մեջ ապրեց և խավարի մեջ կոփեց վոգին իր առնական:

Դեռ տարիներ առաջ՝ յես յեղել եմ Արգինայում,
Վոչ վորպես հերոս, այլ վորպես մի խեղճ աղունատեր.
Ուր բարդիների մեջ մի ջրաղաց եր դառնում,
Վորի սպիտակ ձայնը իմ ականջումն ե դեռ:

Գուցե յես քայլել եմ այն տեղերով, ուր դու հերոսաբար,
Անհավասար մարտ մղեցիր այն խուժդուժ խմբի հետ.
Յեվ ընկար, վորպես Սպարտա՛կը, արի և անբառ,
Յեվ ընկար, վորպես ազատության մի կարմի՛ր ասպետ:

Արցունքո՛վ չե, վոր նայում եմ արձանիդ, քա՛ջ պատանի,
Արցունքո՛վ չե, վոր յերգում եմ քեզ և վոչ իսկ մորմոքով.
Հերոսը՝ չի՛ սիրում արցունք... Քանզի մնում ե կենդանի
Մահվան մեջ իբրև՛ կյանք—պսակված դարերի՛ փառքով:

# ԴԱՎԹԻ ՓԱՌՔԸ

Անհամասին դարերի խորքից յելել է կրկին,
Կապած զենքեր ու զրահ, հագած համբավ ու շառաչ,
Ժողովրդի զավակը՝ մեր Դավիթը թանկագին,
Մեր Դավի՛թը զանգրահեր, մեր քաջ Դավի՛թը սևաչ:

Նա քայլել է արագոտն Աքիլլեսի հետ բրոնզ,
Ծանրամարմին Ռոստոմի—մինչև այսոր նորորյա,
Պատվանդանին դարերի վեր խոյացել է հերոս—
Հազարավո՛ր սրտերում—իբրև արձան մարմարյա:

Մեր ժողովո՛ւրդն յերջանիկ, լցված խինդով սիրավառ,
Յերբ տոնի փառքը անմահ իր քաջ Դավթի խանդակաթ՝
Հազար սրինգ կհնչեն, հազար քնար վոսկեբառ—
Տղաները քաջակուռ, աղջիկները վարդամատ:

Կանցնի Դավիթը հեծած հաղթ նժույգն իր սպիտակ,
Թուր—կայծակին ձեռքի մեջ, սաղավարտով պողպատի.
Մեջքին, գոտին քաջության, արիություն կրծքի տակ,
Կործանարար ո՛ւժ իբրև ընդդեմ չարի ու վատի...

Նրա հետքով կընթանան հազար զարուն վարդաբուխ,
Հազար արի ու հերոս՝ փառքը բռնած ջահի պես,
Ու կժայթքի քաջությունն իբրև հրշեկ հրաբուխ—
Մեր լեռներում բարձրաբերձ, մեր դաշտերում արևկեզ:—

Հազար տղա կընթանան նրա հետքով լուսարագ,
Հազար ծերուկ ու տարեց նրա շուրջը կպատեն,
Հազար աղջիկ թխամազ, իբրև բախտի նշանակ—
Հաղթանակած քաջ Դավթին—սիրո խնձոր կնետեն:—



Կզարդարի նրա փառքն ամեն խրճիթ ու պալատ,
Մեր գյուղերը միասին, մեր քաղաքները ամբողջ
Կերգեն նրա մասին միշտ աղջիկները սիրաշատ,
Ծերուկներն ու տարեցներն ու մանուկները բոլորը:

Իսկ նա՝ Դավիթն իր ծնող ժողովրդի հետ մեկտեղ՝
Կպահպանի չար աչքից հայրենիքը թանկագին,
Յեվ մա՛հ կտա վոսկեշորթ Կոզբադինին խելահեղ,—
Ժողովրդի՛ թշնամի խարդախ Մսրա—Մելիքին...

## ԼԵՆԻՆ

Ո՛վ անմահ Առաջնո՛րդ, մեծությո՛ւն մեծերի,
Թող պահ մի կարոտ մեր աչքերը, կրկին անգամ,
Իբրև շունչ մեր դաշտի՛, մեր ծովի՛ ու մեր բարձր լեռների,—
Հանե՛ն ննջի ովկիանից կյանքդ արեգական։

Բոլորի՛ս համար քո դամբարանը մարմարյա
Արևմո՛ւտք է, իսկ դու՝ արեգակ, ուրկից առած յելք
Ու հազա՛ր ճանապարհ,—մեր կյանքում առորյա—
Ճառագում ես, վորպես արևելք։

Հավերժորե՛ն ննջած անհո՛ւն Առաջնո՛րդ,
Դարբնապետ այս կյանքի մեծ այգի գվարթուն,
Այս կյանքի՛ ուր անհրաժեշտությո՛ւնն արդեն
Դառնում է անծայր ազատություն։

Դու անկորուստ կյանքի բարձրա՛բարձր գագաթ,
Ուրկից իրենց աչքերի լուսարձակով անծիր՝
Ներկայի սերունդները բազմաքանքար՝
Գալիքի ովկիանի հատակը նկատեցին։—

Դու անվախճան սկի՛զբ, նոր պատմության կռանո՛ղ,
Նոր պատմությա՛ն արշալույս և մեծագոր մարդ,
Յեվ առաջին անձրև, և առաջին հո՛ղ,
Յեվ առաջին կյանք—անհունո՛րեն գվարթ։—

Դու բոլո՛ր դարերի նորտերի և սրտուկների
Անընկալված սկզբունք և ուժի կենտրոն·
Խոլապտույտ հորձա՛նք նրանց ցասումների,
Յեվ արդար հատուցմա՛ն սուր և սրբազան դրո՛շ։



Մահը՝ այնժա՛մ է մահ, ո՛վ անմեռանելի Առաջնորդ,
Յերբ տարրերը չլինեն իրարամերժ,—
Յեվ նրանց ներհակությունը չմղի այն ուժը հորդ,
Վոր կյա՛նք է կոչվում և տևում է հավերժ···

Կյանքը՝ կա՛, Առաջնո՛րդ, և հիշատակը մեռյալների՝
Ապրում է մարդկանց մեջ և յերկրի վրա·
Ահա—քեզ կրում է իր մեջ հանճարե՛ղը հանճարների՝
Մեծագույն Ստալինը պողպատյա։

Նա՛ յե մեր աչքերը պննել նոր կյանքի ա՛յն գեղեցկությամբ,
Վորին դու կռեցիր կռանով քո յերկաթի՛·
Նա՛ յե մեր վոգեշունչ վոգին, մեր հոգին և լուրթ և անամպ,
Փա՛ռք, հազա՛ր փառք Ձեզ, ովկիաններ կռվի և խինդի···

Ո՛վ անմահ Առաջնո՛րդ, սերունդից—սերունդ—
Կապրեն քո գործն ու հիշատակը կրակ,—
Յեվ կյանքն իբրև տիեզերք, և դու՝ իբրև արևագունդ՝
Կշողշողա՛ս մարդկային անտառների վրա։

# ԱՐԵՎԻ ՊԵՍ

Արևի պես սկիզբ տվող, հավերժ տևող շո՛ղ ես դու,
Մայրերի մայր սիրավառող, կյանք պարգևող հո՛ղ ես դու,
Միլիոն սրտեր իրար կապող լուսափողփող ո՛ղ ես դու,
Կյանքի արմատը սաղարթող, զվարթ թրջող ցո՛ղ ես դու։

Քեզնից առաջ հազար մեծեր յեկել, անցել են կյանքում,
Սրտերն իրենց կռել, թրծել դարի բորբոք կրակում,
Տքնել կռվել ու ծերացել, ապրել և՛ փառք, և՛ անկում,
Անձնագործ անմահ կոթող, հավերժ հնչող տո՛ղ ես դու։

Մեծերի մեծ, պայծառ ու վառ, չկա քեզ պես հասարակ,
Մեկ են արև աչքիդ համար թե՛ գիտնական, թե՛ սարակ,
Խրճիթին՝ խինդ, պալատին՝ մառ–ահ ու մահ ես դու կրակ,
Չար թշնամու չմրափող, հոգին տանջող դո՛ղ ես դու։

Ամեն ինչին մահ կա կյանքում, միշտ հաստատ են կյանք ու մահ,
Թե կա՝ սկիզբ, կա և հանգում, դա օրենք է և հիմա,
Միայն մեկին չկա անկում— ժողովուրդն է դա անմահ,
Նրա մեջ հար հուրհրատող, հար ճաճանչող շո՛ղ ես դու։

Քո անունն է հիմա հնչում յերկրագնդում ամեն մարդ,
Քո անունով շնչում, ապրում, պնդում վոգին անկաշկանդ,
Տարոնցին էլ քո յերգո՛վ է գնացել միշտ դեպի մարտ,
Հաղթանակի ուղի հարթող, կռվի կանչող փո՛ղ ես դու։



# ՔԵԶ ԵՄ ԲԵՐՈՒՄ

Քեզ եմ բերում իմ յերկրի վողջ աշուղների սա՛զը յես,
Հեզաճկուն ու քաջառողջ աղջիկների նա՛զը յես,
Դեռ չծնված կանաչ ու մորջ հուր սրտերի մա՛սը յես,
Արեգակի շողով առողջ խաղողների վա՛զը յես։

Ամենամեծն աշխարհի մեջ դո՛ւ յես միայն, Առաջնորդ,
Մեր խնդությունն արեվառեչ դո՛ւ յես միայն, Առաջնորդ,
Ցերջանկության լուսավոր եջ դու յես միայն, Առաջնորդ,
Քե՛զ եմ բերում վառ ու անշեջ իմ տաղերի խա՛զը յես։

Աշխարհում վո՛ր իմաստունը դարձըրեց կյանքն այսքան լավ,
Վոչ աստվա՛ծը և վոչ արքան դարձրեց կյանքն այսքան լավ,
Միայն ձեռ՛քը քո իսկական—դարձրեց կյանքն այսքան լավ,
Քե՛զ եմ բերում կանաչ ու մեծ մեր բաղերի խա՛սը յես։

Քանի աշխարհն արև ունի՝ արևի հետ կապրես միշտ.
Ու կշնչես մեջն անհունի, հար ու հավետ կապրես միշտ,
Կյանքը քո մեջ արև ունի, դու կյանքի գետ, կապրես միշտ,
Քե՛ք եմ բերում հրագինի մեր թաղերի թա՛սը յես։

Ինչ վոր կյանքում լավն է, թող այն անկեղծ սրտով քե՛զ տամ, մեծ,
Ինչ վորն ապրում է հավիտյան՝ լի կարոտով քե՛զ տամ, մեծ,
Թույլ տուր հզո՛րդ արեգական, հատու շեշտով քեզ տամ, մեծ,
Սողոմոնի աշուղական խաս խաղերի սա՛զը յես...

## ԴՈՒ ՔԵԶ ՊԱՀԻՐ

Դու քեզ պահիր պինդ, անկոտրում յերկաթի ու քա՛րի պես,
Կյանքի ձայնին ականջ արա գլուխը կախ գա՛ռի պես,
Ծառըդ կանաչ կմնա միշտ մշտադալար ծառի պես.
Այն ժամանակ կփայլփլես արեգակի վա՛ռի պես:

Քանի գնում՝ խորանում է կռիվն յերկու դասի մեջ,
Ե՛յ դու, անխե՛լք, ջուր մի լցնի կարմիր գինու թասի մեջ,
Իմաստ չկա մի ամբողջից անմիտ զատված մասի մեջ,
Կռվի պահին մի՛ մթնի դու գիշերային մա՛ռի պես:

Կյանքը իրա ճամբով կերթա՝ Կռվեն պիտի նորն ու հին,
Հինը անդարձ մեռնի պիտի—տալով իր տեղը նորին,
Մի լուսեղեն ապագա յե սպասում վողջ աշխարհին,
Հնի համար վերջ պատրաստիր՝ մահ կոչված խիստ բա՛ռի պես:

Քո սիրտը միշտ կարմ՛իր պահիր ամեն վարկյան, ամեն ժամ—,
Մարդը նա՛ յե, վոր տանում է թե խինդ և թե տարաժամ.
Գարիդ համար ա՛յն ժամանակ դու կլինես անարժան,
Թե չփայլես արևագույն դրոշակի շա՛ռի պես:

Դո՛ւ, Սողոմո՛ն, կարդացել ես հազար գիր ու գրություն,
Կյանքում չկա անփոփոխ ու անշարժ իր ու դրություն,
Վո՛չ մեկի մոտ չտեսար դու վոչ մի լիր ու լրություն,
Յեվ վոչ մի գիր իմաստուն չե՛ ՍՏԱԼԻՆԻ նառի պես:



## ՓԱ՛ՌՔ ԿԻՐՈՎԻՆ

Նա քարձրանում եր ամբիոն, ինչպես արևն է ծովին բարձրանում փայլուն.
Նա մարտի՛կ եր մեծազոր, հերոսակա՛ն բոլշևիկ, կարմիր տրիբո՛ւն:

Նա նետվում եր պայքարի դժվար դիրքերն առաջին, բոցավառ վոգով.
Զե՛ր թեքում սեգ գլուխը վո՛չ մի շաչ ու շառաչի, հարվածի ներքո:

Միլիոնների կրակով նրա սիրտը բռնկված, իբրև բոցե շերտ.
Ցոլում եր լայն ստեպում, ինչպես ասպետ մեծապանծ, դեպի կռվի յերք :—

Կուռ կռանի՛ պես հատու՝ նա զարկում եր և փշրում ամեն մի նենգ
Թշնամական չար յերախ, վոր ատամներ եր սրում նո՛ր մարդկության դեմ:

Յերևաց նա մեր յերկրի վեհ լեռներում բարձրաբերձ, դաշտերում անծիր,
Ծիածանի՛ պես շողաց, ծիածանի պես զուգեց մարդ, ծաղիկ ու ծիլ:

Նա մանուկնե՛ր եր սիրում, և ծաղիկնե՛ր եր սիրում, և՛ կյանք, և՛ կռիվ.
Նա տեսնում եր մեր մանկանց լուսաժպիտ աչքերում—ապագան լրիվ:

Ու քանի կա ժամանակն, ու կա հո՛ւրը արևի, քանի կյա՛նքը կա՝
Կյանքի կանաչ ծառի՛ պես—մեր թանկագի՛ն Կիրովին—մահացում չկա՛:

# ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ժողովո՛ւրդ, դու չես թողնի՝ անջուր ուռի դառնամ յես,
Արմատս հողից դուրս ընկնի և սաղարթըս մոխրանա.
Յեվ փլչի իմ յերազը—հոդս ցնցող բերդի պես,
Յեվ թշնամին իմ՝ հրճվի և չարությամբ լիանա:

Յես տեսնում եմ՝ ահա իմ թուխ աչքերի մթնոլորտում,—
Կապույտ ջրով լվացված, ինչպես մաքուր արեգունդ,
Ներկայիդ լույս գագաթից՝ Ապագան է շողշողում,—
Առավոտով ադամանդ, իրիկունով կապտագույն:

Յերբ դողդոջ գրիչն իմ—յերգ է բերել քեզ ընծա՝,
Յերբ յեղել է նա մերթ, ինչպես մանուկ անտարբեր՝
Ների՛ր, չէ՞ որ ամեն մայր ունի այդ հո՛ւյզը պայծառ,
Զի ներումը հասակին պարարտ հողն է կենսաբեր:

Յես՝ հյուլե՛, դու՝ տիեզե՛րք, յես՝ բաժա՛կ, դու՝ լայն ովկիա՛ն,
Փոքր է յեղել իմ հոգին ամփոփելու գործը քո՛,
Անցյալը քո՛, խինդը քո՛, առոդյան քո՛ մեծակյանք,
Յեվ Ապագան— քո եղի հրաշալի հրաշքով:

Մի բան կա ինձ սփոփող, այն, վոր յերգիցն իմ անկեղծ,—
Յերբ սերունդն ապագա՝ ընկալի լոկ մի հնչյուն
Այս տքնությա՛նց, պայքարի՛, այս գործերի՛ փոքր ու մեծ,
Յես՝ յերգիս մեջ՝ չեմ զգա վո՛չ խղճի խայթ, վո՛չ զղջում:



# ԱՅՍ ԳԻՇԵՐ

Այս գիշեր՝ իմ սիրտը թող բացվի՛, մեծանա և լինի պայծառ,
Ինչպես ա՛կն արևի անբիծ, ինչպես լո՛ւրթը խաղաղ դաշտերի,
Քանզի, այս գիշեր՝ տալիս եմ յերկրին իմ անձայր՝
Ի սրտե-խոսքեր մտերիմ:

Խոսքերն իմ առել եմ հովի՛ց, ծաղկի որորվող ծովի՛ց,
Գետից, գետակից, առվից, աղբյուրից ամենացնծուն,
Յեվ խոսքեր՝ ընդերքի՛ց հողի, խլված արևի բովից,
Յեվ մարդուց՝ խինդերի խնդությամբ լեցուն:

Յեվ արդ՝ սրինգս հանած՝ նստել եմ յես մենակ, ինչպես
Նստում է յերջանիկ հովիվն ալմաստե մի ժայռի գլխին —
Ու յերգում արշալույսն անհուն, ու յերգում վերջալույսը հեզ,
Բնության տարերքից բղխած յերազը իր սիրո ուղխի:

Իմ շուրջը խո՛ր լռություն է: Գիշեր է, ծավալո՛ւն, անձա՛յր,
Յեվ կապույտ աստղի անապատն ա[illegible]ա՛ն խորունկ է զնգում,
Վորի հետ չես փոխի վոչ մի հուշ և վոչ մի անրջանք պայծառ,
Վոր գուցե միայն ջահել մարդուն է տրվում կյանքում:

Իմ սիրտը հանգի՛ստ է այնպես: Յեվ յես, հարդագող Վահագնի՛
նման,
Կյանքիս յերկնքում ցանած հազար ծիրկաթնի առու՝
Յեվ հազար հույզեր և հույսեր աստեղահմա՝
Խնդությամբ եմ սիրտս վարարում:

Այս խաղա՛ղ, այս չքնա՛ղ գիշերից—կծնվի առավոտ քաղցր,
Կկանգնի գունատ, ինչպես յեռորյա հարսնացած աղջիկ.
Յես, կառնեմ սրինգս կրկին, կդիմեմ նորից բարձր,
Դեպի անսահման դաշտեր, դեպի կատարներ վճիտ:

Եվ կերգեմ հնձանները չեկ, և կերգեմ ամբարները անվերջ.
Քրտինքը ամուր ձեռքերի՝ հնձեցին միասին վորունք,
Մայրերին սիրաշատ և մեր հարսներին ու զուգված ու պերճ.
Վորոնք մեր մանուկներին տալիս են ստինք ու գորով:

Նրանք, վոր պարգև են տվել այսպիսի մի գիշե՜ր չքնաղ.
Ինձանից կարող են ուզել իմ սի՛րտը, իմ կյա՛նքը հիմա,
Եվ խտրիտուր տրված գիշերի այս վառ ու խաղաղ՝
Պատրա՛ստ եմ բնդունել— ամե՛ն մի մահ:

—•—

# ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Եվ քնքուշ թաթիկը բռնած՝
Ահա պտույտ ենք անում
Ես ու իմ խարտյաշ տղան.
Ինչքա՜ն զվարթ է ուղին,
Ինչքա՜ն ներմակ է ճամբան,
Ինչքան թեթև է գնում
Ճշմարիտ այս մանկությունը —
Անեղծ և ուղիղ:

Վորքա՜ն կուզեյի ապրել
Աներկրորդ այս հասակը մորն,
Մանկանա՛լ մի ակնթարթում,—
Ապագան տեսնելու լրիվ.
Մանկանա՛լ, ինչ՜ տենչանք,
Եվ կրել այն շուքը, վոր
Ծիրանի ծխի պես ցնդեց
Հռնդուն հողմերից ցրիվ:

Ա՜խ, ի՛նչ ջերմություն ունի
Այս փոքրիկ զանգուրը, ո, կյանք,
Եվ այս աչքերը խեյոք
Երկու հրաչյա հուրեր,
Ամեն մի շարժումը ջերմին
Գորով է, գգվանք է, գրգանք.
Դեպի իմ սիրտը ձգվող
Շառագույն ու մաքուր սերեր:

Ճիշտ այսպես բռնել է ձեռքս
Իմ հայրը ծեր ու բազմատանջ,
Երբ հողմն եր աշխարհը այրում,—
Փախուստ կար խուճապի, զաղթի,

Յերբ յերգը բիլ յերջանկության՝
Դարձած վիրավոր մի կանչ՝
Մեռնում եր ծծկերի կոկորդում
Փոխարեն մայրական կաթի։

Բայց կյանքը խիստ իմաստուն է։—
Նա գիտե, նա գիտե, վոր յես
Չեմ ապրել մանկությունն այսպես,
Յեվ, ի տրիտուր դրա,
Իմ չապրած յերջանիկ որերն
Ինձանից առնելով անտես՝
Իբրև խնդության անձրև՝
Շաղ տվել իմ մանկան վրա։

Յեվ յես, մի ջերմին սիրով,
Ասում եմ՝ վառ պահի՛ր, արև,
Ծիլը իմ խարտյաշ մանկան
Բախտավոր մեր մանկանց շարքում,
Իբրև մի յերջանկություն,—
Ճշմարիտ մանկություն իբրև,
Վոր յերբե՛ք, յերբե՛ք ու յերբե՛ք
Չի յեղել մեր անցյալ կյանքում։



# ՃԱԽԱՐԱԿՆԵՐԸ

Գյուղի յեղեգնածածկ
Զարդախների ներքս,
Վորպես ճանճրույթի որ
Տարտամորեն անծայր,—
Դանդաղ դառնո՛ւմ եյին—
Ճախարակնե՛րը գո՛ս,
Ճախարակներ՛ը չո՛ր,
Ճախարակնե՛րը հի՛ն։

Պառավների ձեռքով
Ու հարսների գունատ,—
Ճռինչով բութ ու սուր,
Միորինակ հանգով,
Դանդաղ դառնո՛ւմ եյին —
Ճախարակնե՛րը լու՛ռ,
Ճախարակնե՛րը գո՛ս,
Ճախարակնե՛րը հի՛ն։

Հյուսում եր պառավը
Իր անեծքը թելի՛ն.
Ու թախծով առավել,
Ձայնով մեռելային —
Դանդաղ դառնո՛ւմ եյին —
Ճախարակնե՛րը չո՛ր,
Ճախարակնե՛րը գո՛ս,
Ճախարակնե՛րը հի՛ն։

Պապը մնում եր մերկ,
Թոռնիկները բոբիկ,
Ու, վորպես ցավի յերգ

Վոքքի՛, անփոփի՛,
Դանդաղ դառնո՛ւմ էյին,—
Ճախարակնե՛րը բի՛րտ,
Ճախարակնե՛րը մե՛րկ,
Ճախարակնե՛րը հի՛ն:

Հին գյուղի անփոփ
Յե՛րգն էր այդ վշտամեջ.
Մինչև մեր նրաքորք
Ո՛րը արեվառեչ՝
Դանդաղ դառնո՛ւմ էյին —
Ճախարակնե՛րը վո՛րք,
Ճախարակնե՛րը խե՛ղն,
Ճախարակնե՛րը հի՛ն:



# ԾԻԱԾԱՆ

Աղջիկների մազերի պես՝ անձրևի
Ջրաքրեշում հյուսկենները իջան ցած.
Փախուստ տվին ճառագայթներն արևի
Համայնական մեր հանդերից լայնաքաց:

Սարն ու դաշտը կանաչավո՛ր, հեռավո՛ր,
Զվարթացան արծաթավառ անձրևից.
Վողջունեցին իրար ջերմ ու սիրավոր
Ծաղիկնե՛րը և ծիլե՛րը ցնծալից:

Ապա կապեց ծիածանը աղեղն իր
Ամպերի մեջ—հորիզոնից հորիզոն,
Ու թվաց, վոր, աշխարհը խո՛րն ու անծիր,
Լցվեց մի պերճ, կախարդական յերազով:

# ՇՆՈՐՀՔԸ

Տղա՛ս, իմ խինդի թմբկահա՛ր, թող աչքերդ ճանաչեն,
Մեր յերկրի հունը լայն է, հողն արգասաբեր և հունտն առատ:
Թող մարդիկ— առանց ինձ՝ քեզ—միայն քեզանո՛վ ճանաչեն,—
Յես սարի ստորոտ լինեմ, իսկ դու բարձրաբերձ գագաթ:

Անցյալը կկարդաս միայն... բայց զգա՛՝ ինչպես յես— յերբե՛ք,
Անցյալը շատերի հոգին և շատերի լեզուն
Կտրում էր, ինչպես շամբուտի յեղեգնը դյուրաթեք,—
Յեվ թողնում շատ անգամ ամո՛ւլ և շնորհազո՛ւրկ ...

Տղա՛ս, աչքերդ—շնորհքով լցրո՛ւ, ձեռքերդ— շնորհքով զինի՛ր,
Զի շնորհքն այսոր դարձած հորդուն յերկրային ակունք՝
Չի՛ հոսում ինքնանպատակ, չի հոսում նանիր,—
Այլ վորպես արծա՛թ շատրվան՝ լցվում է գուռի մեջ հոգու:

Կյանքը սիրառատ մոր պես՝ բաշխումն այդ գանձը անգին—
Յեվ գանձն այդ անհո՛ւն է, անծա՛յր.—գտնումը ջանք է և խոնջենք:—
Զգտի՛ր քո դարի փառքի ծիրանուն,— ջանքով ու պայքարով՝ հագի՛ր,
Թող մարդիկ առանց ինձ՝ քեզ—միայն քեզանո՛վ ճանաչեն:

Թող նրանք չասեն թե,— Սա՝ վորդի՛ն է Տարոնցու:
Յես՝ սարի ստորոտ լինեմ, իսկ դու՝ բարձրաբերձ գագաթ—:
Անսահման լայնահուն դաշտ է յերեկվա շնորհքի ածուն,
Շնորհքով զինվի՛ր, ո՛, տղա՛ս,—և դարձիր Մար՛դ:



# ՄԻՐԱԺՆԵՐ

Ինչպես միրաժներ ներմակ, հանկարծ տեսլացած ոդում,
Ժամի փայտաշեն դռնից ներս մտան՝ շուրթերին աղոթք՝
Մի քանի պառավներ կարկամ, մի քանի ծերուկներ աղոտ,
Յեվ մնաց ամայի բակը լցված տրտմությամբ տրտում:

Վառվում են մոմերը դեղին, այրելով բարբառը խունկի,
Պատերից սառնությամբ նայող սուրբերի պատկերին հլու՝
Քահանան յեղերերգում է տխրաբառ տաղ ու ալելու,—
Ցրտին վոլորտում մեռնող չեղյալ աշխարհի յերգեր:

Վորքա՛ն խղճալի՛, խե՛ղճ են, և վորքան նման են մահի
Յեվ ծեր քահանան, և ծեր ստվերներն այդ արդեն աղոտ,—
Վորոնք դարձել են համակ մրմո՛ւնջ, տրտո՛ւնջ ու աղո՛թք,
Առաքված տենչերով իրենց յերկնքի անսգյուտ գահին:

Մինչ զանգը հնչում է նորից ու լռում գմբեթի մութում
Վորտեղ ո՞վ գիտե քանի՛ տրտունջ-մրմունջ է սառել,
Յեվ հետո՝ բակի մեջ ժամի՝ լսվում են մի քանի բառեր՝
Անշտապ ցնդում են նրանք—ինչպես միրաժներն ոդում:

## ԳՅՈՒՂԻ ԻՐԻԿՈՒՆԸ

Բոլոր հնձվորները դաշտից վերադարձան
Յեվ բերեցին դեմքեր կուռ ու արևավոր,
Ուր ցոլում են վոսկի, ճույլ հասկերը դեղձան,—
Դաշտի թխությունը և որն արգասավոր:

Խաղաղ իրիկունը իջավ խորն ու հեռուն,
Փռվեց գյուղի վրա աստղանկար մով չիթ·
Յեվ ինչպես մի հնձվոր, աստղային արտերում,
Կանգնեց լուսնեղջյուրի կեռ մանգաղը վճիտ:

Քուն են մտնում ամեն թուփ ու թռչուն ու ծառ,
Յեվ որոր են ասում աղբյուրները զնգուն,
Յեվ գիշերվա թևը՝ թեթևաշունչ, պայծառ,
Ծավալվում է բոլոր հոգնածների հոգում:

Բոլոր յերակները, վորոնք վողջ որն անդուլ՝
Կոմբայն եյին վարում, մանգաղ ու գերանդի՝
Թևերի մեջ հավաք վաստակ ու հոգնություն՝
Արյուն են հավաքում մղման նոր յեռանդի:

Գյուղը լո՛ւռ քնել է: Յերազ է տեսնում արդ,
Վոր արևն յերկնքում, առավոտյան հովին,
Հնձում է աստղալի անծայրածիր մի արտ
Յեվ մրցման է կանչում բոլո՛ր հնձվորներին:



## ՅԵՐԳ՝ ԽՈՐՀՈՒՐԴ ԲԱՌԻ ՎՐԱ

Ո՛, խորհո՛ւրդ քո խորհուրդը խարխլում է կյանքը հին,
Ամեն վայրկյան, ակնթարթ ու ամեն մի ժամանակ
Պահանջ ես դու դարձել սուր՝ ուղեկոյույս աշխարհին,
Վորպես քաոսն արևող անեզրական արեգակ:—

Վորպես հողը, վոր բոլոր մայրերի մայրն է ազնիվ,
Հացը վորպես մաքրանուն, վոր պահում է կյանքն անմահ՝
Խորհո՛ւրդ, շողըդ աշխարհի չորս ծագերին թող հասնի,—
Խրճիթներին լինի կյա՛նք, պալատներին լինի մա՛հ:

Վոսկեղենիկ դու հի՛ն բառ, լցված մութի մշուշով,
Վոր Լենինի հանճարով՝ արդարադատ սուր դարձար—
Յեվ մարդկության ուղենիշ, կախարդական, վորպես շող,
Դարձար բոլո՛ր դարերի արցունքների ծիածան :

Իմ հայրենի արնահագ դաշտի վրա բացված ա՛յգ,
Մեր գետերը ժանգ եյին, և մեր ողը արնաթույն,
Մենք չունեյինք տուն ու սիրտ և հացաբաշխ դաշտորայք,
Յեվ սրտից սիրտ չեր վառվում գեթ մի հյուլե խնդություն:

Ո՛, խորհո՛ւրդ, ո՛, կյանքի մա՛յր, ո՛, արշալո՛ւյս դու մեր
շեկ.
Մեր արնախեղդ դարերից ծնված անմահ վոսկեդար.
Մե՛րն է հացը հանապազ, մե՛րն է հնձանն հրաշեկ,
Մե՛րն է խաղողը վոսկյա, մե՛րն է դաշտերգը արդար:

Յեվ կպահենք այն ամենն, ինչ վոր դու յես բաշխել մեզ:
Մենք ապրողներս ու գալիք սերունդներ, վոր պիտի գան՝
Մինչև վերջին մութի մեջ կմխենք քո սեպը կեզ,
Վոր շողշողա՛ ծեգից ծեգ նոր մարդկության ապագան:

## ՅԵՐԳ՝ ԴԱՓՆԻ ԾԱՌԻ ՅԵՎ ՓԱՌՔԻ ՎՐԱ

Պենեոս ծերունու դու չքնա՛ղ աղջիկ,
Ապոլլոնն ստեղծեց քեզ դափնի մի ծառ,
Վոր պննես վաստակած ճակատներ վճիտ
Յեվ արժանների ճակատներ սնափառ:—

Քեզանով Կեսարն իր ճաղատն եր ծածկում,
Յեվ ապուշ Ներո՛նը, և Կալիգո՛ւլան խենթ,
Յեվ հանճար Վիրգի՛լը, և Դանտե՛ն ահարկու,
Վոր դարե՛ր կապրեն դեռ իրենց փառքի հետ:—

Չի կանգնում սակայն հար և վո՛չ մի կանաչ ծառ,
Ինչպես և չի մնում վոչ մի փառք անթառամ,
Յերբ չի նվաճված քրտինքո՛վ պայծառ,
Յերբ կյանքն ե դրել ճակատին զառամ:—

Յես գիտեմ, ո՛, դափնի՛, շատերին դու անմերձ;—
Չես իջնում դու միայն ճակատի՛ց հանճարեղ,
Յեվ նրանց, վորոնք վոր կերտեցին այս մեծ
Դափնեվոր Ներկան ու Գալիքը լուսեղ:



## ՅԵՂՆԻԿՆԵՐ

Ինչպես մարդու մանկության չքնաղագույն յերազներ՝
Առավոտյան անուրջում, արագորեն սլացող,—
Իմ առջեվով, սրընթաց, անցան լուսաչք յեղնիկներ,
Մորթիներին հագցրած կպչուն սեզ ու հստակ ցող:

Նրանց ընթացքը այնքան վայրի յեր և այնքան վառ,
Յեղջյուրները խիստ փոքրիկ և աչքերը խիստ հստակ.
Յեվ կճղակները մաքուր ու սև, ինչպես կայծաքար,
Հայացքները գյուղական աղջըկանց պես անվստահ:

Նայում եյի յես նրանց,—զարմանալի բնության,—
Արագաշարժ ու արթուն քնքուշներին ձյունաջինջ,
Վորոնց սերը, դեռ կորած որերում իմ մանկության—
Լեգենդներումն եր փայլում ու մնում եր կախարդիչ:

Վո՛չ ձին, վո՛չ շունը անշահ՝ այն հմայքը չունեյին
Յեվ չունեն հիմա նույնիսկ սիրող աչքումն իմ յերբեք,
Ինչպես չքնա՛ղ յեղնիկները, իմ յերազնե՛րը այս հին,
Հայացքներով լուսավոր, մարմիններով դյուրաթեք:

Յեվ կուզեյի՛, կուզեյի՛ յեղնիկների նման այս՝
Գործում լինել դյուրաշարժ և աչքերով լուսավոր.
Բայց չունենալ յերկյուղի և ահի վոչ մի յերազ,
Լինել արթո՛ւն նրանց պես ամեն վայրկյան, ամեն որ:

Ո՛, յեղնիկնե՛ր, քնքուշնե՛ր, ո՛, արթուննե՛ր լուսատես,
Թիփից քարից ու ժայռից արագորեն սլացող.
Կհանդիպե՞մ յես արդյոք, կհանդիպեմ նորից ձեզ
Քոշաքարում—զմրուխտե յերազների զնգոցով:

# ԿՈՒՅՐԵՐԻ ՄՈՏ

Ահա կույրերի բազմությունը, ահա նրանց դեմքերը խնդո՛ւն,
Ամեն հասակի կույրեր, և կույրեր ամեն տարիքի·
Վոմանք տեսել են լույսը՝ մի ակնթարթում,
Յեվ վոմանք չեն տեսել լույսը—բարիքն այս անգին:

Նրանք խոսում են բարձր, և ձա՛յնն է սփոփիչը նրանց·—
Յեվ լարված ականջը ուշիմ, վոր բիբն է ամեն մի կույրի,
Մտքի լարումը անսպառ, վոր ամեն մարդու չի տրված,
Յեվ ճաշակը—ամեն մի բույրի:

Ո՛, կույրե՛ր, ձեզ վիճակված չե՛ կյանքում—
Տեսնել արևի ծագումը և վերջալույսը գեղեցիկ,—
Յեվ կախարդական ծիածա՛նը յոթընգույն,
Յեվ դաշտեր լայնանիստ, և լեռներ սպիտակ ու ցից:—

Ձեզ վիճակված չե՛ տեսնել աղբյուրի ընթացքը խաղաղ,
Յեվ գետերի ընթացքը մոլի և ծովի ընդերքն ալեկոծ,
Յեվ աշունը պտղուն, և գարունը իբրև ջահել մի տղա,
Յեվ ամառը կրքերով հղի, և ձմեռը պսակված սպիտակ ալիքով:

Ձեզ վիճակված չե՛ տեսնել պայքարի ժամը մոլեգնած,
Ամոթահար փախուստը թշնամու, վայրկյանը կյանքի ու մահու·

Յեվ, ավա՛ղ իբրև յերկրային գանձ՝
Ձեզ վիճակված չե՛ տեսնել դեմքը սիրուհու:

Դուք միայն զգո՛ւմ եք, միա՛յն:—Դուք գիտեք, վոր դարը մեր մեծ,—
Լցված է պայքարի հրով,—քանդում է և անխոնջ կերտում:



Յեվ կռվում են դասակարգերն այնտեղ, շահերով իրար անմերձ,
Յեվ Թելմանը՝ նստած է բանտում:

Դուք լսում եք մեքենայի հնդյունը, և զգում բույրը ցորենի,—
Թեև չգիտեք՝ վորտե՛ղ, և բերում են՝ վո՛ր ճանապարհով·
Չգիտեք՝ ի՛նչ է հորիզոնը, բայց գիտեք՝ մեր հորիզոնին
Բարձրանա թշնամին յեթե,—կգա հրով ու սրով:

Դուք գիտեք ամե՛ն ինչ, ամե՛ն, և ավա՛ղ, լույսին եք անհաղորդ միայն·
Յես չեմ խղճում ձեզ, քանզի, մեր հողի վրա, մեր յերկրում,
Ձեր հոգին անկույր և հրանման՝
Բոլո՛ր լույսերի լո՛ւյսն է կրում:

## ՆՈՐ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ

Արդ՝ ինձ ժպտում ես, վոգի՛, թույլ տու՛ր քո դեմքը դիտեմ,—
Ո՛վ անմեռ աղբյուր դու զուլալ, ո՛վ արև ինքնահան,
Քո առաջ ի՞նչ է այն չքնաղ, դիցուհի լույս Աֆրոդիտեն,
Վորին պաշտել է Հելլեն ժողովուրդը ներմակավահան:

Ո՛, համակ նո՛ր գեղեցկություն,—ծնված մեր յերկնի տակ
անամպ,
Քաղաքից քաղաք, գյուղից գյուղ սուրացող համբավ անլռին.
Թույլ տուր իմ աչքը պննեմ գեղեցիկ քո գեղեցկությամբ,
Քեզանով թող ծաղկի յերգիս նորընծյուղ ուռին:

Ահա քեզ եմ մատուցում յերգս և՛ անզարդ, և՛ մերկ,
Խոհերիս քո կնի՛քը դիր, հույզերիս քո կնի՛քը դիր.
Յեվ թող այսուհետ յերգս աշխարհում չհնչի բեկբեկ,
Յեվ վոգիս—չլինի անգեղ վոգուն ունկնդիր:

Քո ձայնը հնչում է, վոգի՛, առորյա մեր կյանքում համայն,
Ամեն վոք՝ ով կյանք է կռում՝ դեպի քեզ է դիմում նա արդ՝
Դեպի քեզ եմ գալիս յես էլ անալի գառնուկի նման,
Վոր աղըդ ուտեմ և զգամ ինձ առո՛ւյգ, ամո՛ւր և զվա՛րթ:

Յեվ թող՝ փայլածին փայլդ փայփայի իմ յերգը անփայլ,
Յեվ միտքդ՝ իբրև զորավար՝ ռահվիրա լինի իմ հույզին.
Թո՛ւյլ տուր, գեղեցի՛կ Ներկա,—նշմարեմ—Ապագան
անպարտ,—
Սյուներով ամենանշմար, ամենախմաստուն լույսիդ:



## ՆՈՐ ՅԵՐԳԻ ԴԻՑՈՒՀՈՒՆ

Ո՛վ Դիցուհի՛, Արվեստից մեր բազմաբարբառ,
Առաջնորդի՛ր մեզ՝ յերկարի՛ր քո հովանավոր ձե՛ռքը.
Ժամանակն է վառել Գեղեցկի հրաչյա ատրուշանը վառ,
Յեվ յերգել նոր կյանքը նորզգեցիկ և նրա պայքարի յերգը:

Մեր քնարները, սրինգները ու տավիղները մեր—
Չեն կերտված լացող ուռենուց և վոչ էլ յեղեգնից տխրերգ.
Մենք՝ նոր գուսաննե՛ր ենք, մենք՝ նոր յերգիչնե՛ր,
Մենք շեփո՛ր ունենք և ծնծղա, և պողպատյա քնարներ ունենք:

Լարերը մեր քնարների՝ յեղել են պղնձյա և պողպատի,
Մենք յերգել ենք պայքարը, յերբ դասակարգերն ընդդեմ
Կռվում եյին՝ սուր սրի և ճակատ ճակատի,
Յերբ մեր յերգը հողմ պիտի լիներ և վորոտ, և շուրջը շառաչեր
շանթեր:

Մենք յերգել ենք մեր հաղթանակն և ջախջախումը թշնամու,
Դեպի հողն ու գործարանն ընթացող յերթը մեծ.
Վերականգնո՛ւմը յերկրիս, շինարար ձեռքի թափը ամուր,—
Վոր կերտեց այս հզո՛ր Ներկան և պայծառ Ապագան կերտեց:

Բայց մեր յերգը յերկնելիս, Դիցուհի, հաճախ կոփել ենք
անտաշ.
Տեսնելով գեղեցկի հունը—անգեղ, քանզի մեր ձեռքն եր դողդոջ.
Յեվ կյանքը անգրկելի, և հաճախ անթափանց անտառ,—
Յեվ հաճախ հազիվ նկատել նոր հույզը՝ բողբոջ առ բողբոջ:

Մեր սեվեռ միտքը ընթացել է նորի հետքերով,
Մենք վորոնել ենք, և այդ վորոնման ժամին՝
Մեր քնարները, վոր թեև շնչում եյին պայքարով ու երով՝
Չեն յերգել բազմաձև բնությունը... լուսինն ու քամին...

Բայց մի՛շտ, բայց մի՛շտ մեր ամեն յերգի մեջ՝ մեր վոգին
մնացել ե կուռ,
Աննահանջ ե յեղել մեր արշավը, և՛ անհաշտ, և՛ աններում,
Փողփողել ե մեր յերգի դրոշը, սրբազան և ահարկու,—
Մեր ի՛սկը, մեր ի՛սկը ձեռքերում:—

Մեր յերգը սերում ե հողի ընդերքից և գործարանի թինդից,
Յեվ հաղթանակից մեր յերկրի, պայքարից մարդկանց մեր
հեռու·
Մեր յերկրի ջանքից և սերից, և այն անօրինակ խինդից,
Վոր վոգու մղիչ և դարձել ե մղում ե մեզ դեպի մաքառում:

Յեվ այժմ ավելի քան հուժկու մեր քնարները, սրինգները ու
տավիղները մեր
Հնչում են մեր յերկրում, ուր չկան տերեր և վոգին
ճորտության·
Արդ, մեր կարմիր յերգերի թափորը խոհերով և հույզերով
ջեռ,—
Ո՛վ Դիցուհի՛, առաջնորդի՛ր դեպի Մեհյանը Գեղեցկության:



## ՀԱՅԱՑՔՆԵՐ

Իմ հայացքը սուզվում ե քո հայացքում, ինչպես վոր
Ծարավ շուրթերն են սուզվում ջրի մեջ սառն աղբյուրի·
Ի՞նչ, կարծում ես բերում եմ յես—յերազնե՞ր վիրավոր,
Թե՞ կարոտած կարոտներ—քնքշանքի ու համբույրի:

Մի՛ սարսռա, սիրելի՛ս, հայացքն իմ ժանգ չե թունոտ,
Ժանգ ել լինի յեթե նա, ի՞նչ փույթ արծաթ հայացքիդ:—
Ժանգոտվում են միմիայն ողն ու յերկաթն իրար մոտ·
Ո՛վ մեր կյանքի յեռներից սերած մետաղ թանկագին:

Ամեն անգամ նայելով՝ փնտռում եմ քո դեմքին յես
Անդրադարձումն հոյակապ առօրյայի հրավառ,
Վոր գուցե իմ աչքերով վորսամ կայծեր բոցագեռ,
Ո, յեթե վոչ կայծեր, գեթ մի կա՛յծ առնեմ ինձ համար:

Յեվ միմիայն հայացքի ծանրությունից նշտորեն,—
Լինի խինդով առլցուն. թե խաշխաշով դառնության,
Կարելի յե հասկանալ և՛ կյանք, և՛ մահ, և՛ որենք·
Զի հայա՛ցքն ե հայելին—ներաշխարհի միմիայն:

Արդ՝ սուզելով հայացքն իմ՝ քո հայացքում լուսակերտ,
Ուր ցոլում ե բազմաձև պայծառափայլ մեր Ներկան,
Զուլվում եմ քո անապակ, կենսապարփակ շողի հետ,—
Լույս սյուներո՛վ ընդյերկար—նշմարելու Ապագան:

# ԻՄ ԱՉՔԵՐԻՆ

Ի՛մ աչքեր, յես ձեզանից անչա՛փ գոհ եմ, անչա՛փ գոհ,
Չի դուք, ուզած վայրկյանին, դարձած ուռկան ու կարթեր՝
Ափ եք հանում վոսկեձուկ իմ մանկությո՛ւնը անգո,
Մանգաղների պես հնձում գեղեցկության պերճ արտեր։

Մերթ դառնում եք ճառագայթ, մերթ՝ լուսալի լուսարձակ,—
Թափանցում մութ անցյալը և գալիքը հեռալույս·
Դուք ձեր փոքրիկ բիբերում ամփոփում եք լայնարձակ
Դաշտե՛ր, ծովե՛ր, յերկինքնե՛ր, արշալույս ու վերջալույս։

Միմիայն յե՛ս եմ զգում, թե դուք վորքան քնառու
Բոցեր ունեք՝ ձեր խորքում թշնամու դեմ, փոքրության·
Բարեկամի հանդեպ մինչ՝ ձեր հանդարտիկ նեղ առուն՝
Իրեն հունից դուրս գալով՝ դառնում է գետ խնդության։

Յեվ դուք վորքա՛ն բախտավո՛ր, յերջանի՛կ եք, ի՛մ աչքեր,
Վոր մոտիկից եք տեսել Առաջնորդին՝ դազգաղում.
Առաջնորդին կենդանի, վորի փառքը յերկնաքեր՝
Իբրև խինդի անձրև՝—ձեր գուռերի մեջն է խաղում։

Ի՛մ աչքեր, դուք մինչ այսօր տարել եք ինձ կյանքի բարդ
Ուղիներով, և յեղել մտքիս անկոր ուղեկցող,
Յեվ ընդունել վանելի տգեղությո՛ւնը սև սարդ,
Գեղեցկությո՛ւնն ըղձալի—իբրև ջուր և ծարավ հող...

Օ, ինչեր եք տեսել դուք... Յեվ դեռ ինչո՛վ ու ինչո՛վ
Կծանրանան ձեր բիբերն, ինչե՛ր պիտի տեսնեք դեռ.
Ի՞նչ է ձեր վարձքն։—Ու մինչդեռ դուք ասում եք շշունջով,—
— Յեվ տեսածն ու տեսնելին,—մեր արդար վա՛րձքն է արդեն...



# ՄԽՈՀ

Հաճախ յերբ հիացած նայում եմ այս պայծառ
Բնության ու կյանքի բազում շքեղությանց՝
Խորհում եմ.—Յես պիտի մի օր՝ անշունչ դարձած՝
Թողնեմ այս ամենը, իբրև լքյալ մի գանձ,
Յեվ հեռանամ ընդմիշտ անտարբեր ու անձայն։—

Յեվ հեռանա՛մ պիտի՝ չտեսնելու յերբեք
Վո՛չ ծագումն արևի, վոչ գիշերը պայծառ,
Վո՛չ կյանքի գեղեցիկ յերգը շռնդահեվք,
Վո՛չ դաշտի զմրուխտը, վո՛չ ծովի ծիրն անծայր·
Վո՛չ իսկ չքնա՛ղ կանանց նազանքները բեկբեկ։

Յեվ հեռանա՛մ պիտի... Սակայն, օ՛, կապտավուն
Իմ մտքի բոց, հանգի՛ստ ... Յերթե չլիներ արդ՝
Մահը իբրև կյանքի ժխտո՛ւմը բնահուն,
Քո կարճ ճանապարհը չեր թվա քեզ զվարթ,
Չեյիր զգա կյանքի քաղցրությունը անհուն։—

Օ՛, ամեն ինչ, ամեն, խորքից ծով բնության
Գալիս է ըսկզբով, ընթացքով ու վերջով·
Յեվ հար գոյությունը՝ մա՛յրն է անգոյության,
Անգոյությունը—լի գոյացության շնչով·
Մեկը մեկին—ժխտող, մեկը մեկին— խթան։—

Բնությունն է վառում ջահելությունը ջեռ
Ու վարում մեր նավը վերջին նավահանգիստ.
Գիտե, վոր ծերությունն, — իբրև ծանր մի բեռ,
Պետք չե՛ վոր ծանրանա նավի վրա կյանքի ...
Յեվ սկիզբն ու վերջը՝ անընդմե՛ջ են, անմե՛ռ։

Յեվ այս բոլորից վերջ՝ թող առնի՛ իմ կյանքը
Բարի բնությունը իր սերերով առատ —
Յեվ վոլորտից — վոլորտ, իբրև հյուլե՝ ձգե․
Միայն թե, ինձ շնչից դատարկելուց առաջ,
Թույլ տա ասելու,—վոր․— կյա՛նք, դու գեղեցի՛կ ես։—



# ԻՄ ՔՆԱՐԻՆ

Բանի դեռ ջահել ու վառ ենք մենք՝
Յե՛վ պայքար, և՛ խոհ, և՛ հույզ յերգենք։—

Դու գիտես՝ վոչինչ չկա անմար․
Կկանգնենք մե՛նք էլ հողմի դեմ ննջ,—
Կիջնի ծերության ձյունը մարմար,—
Յեվ անցած կանա՛չը կվորոնենք։

Բանի դեռ ջահել ու վառ ենք մենք՝
Յե՛վ պայքար, և՛ խոհ, և՛ հույզ յերգենք։

## ՍԵՐ

Յես սիրում եմ այ՛ն պոետին,
Վոր հույզն ու միտքն իմի արած՝
Հոսում է խենթ ու վարարած,—
Ինչպես յերթը գարնան գետի·
Յեվ սիրում եմ նրա նետի
Ձա՛րկը, վորից արհավրած,—
Բիրտ թշնամին գնում է ցած
Անգամ իրեն զե՛նքը յետին:



## ՄԻՆԵՐՎԱՅԻՆ

Ո, Միներվա՛, արդ,
Քո մտավար Բուն —
Թող տա ինձ զվարթ,
Վառ իմաստություն:

Մանկան պես, գիտեմ,
Ձես նետի ինձ վայր՝
Դարձել եմ արդեն
Հասուն ա՛յր և հա՛յր:

Միներվա՛, տո՛ւր ինձ,
Ո՛վ աստվածուհի,—
Բիբերն անթախիծ
Իմաստուն Բուի:

## ՎՈՂՋՈ՛ՒՅՆ

Վողջո՛ւյն անշեջ արևին,
Վողջո՛ւյն շրշող տերևին,
Ոդին, հողին ու ծառին,
Գարուններգակ ծիծառին,
Դաշտին, հովին ու զառին:—
Վողջո՛ւյն ծովին ու քարին,
Ու նո՛ր մարդու բարբառին,
Նրա կյանքի անտառին,
Վոր թե՛ լույսին, թե՛ մառին՝
Շունչ են տալիս իմ բառին,—
Իմ սրտահո՛ւյզ քնարին:



## ԱՅՑ

Մատներով իր բյուրեղ, մաքուր,—
Սրտիս դուռը ծեծեց նա լուռ,
Յեվ ներս մտավ դեմքով իր հուր,
Հագած հագուստն իր վոսկեհուռ,
Թեթև, ինչպես ամպ ու փետուր,
Ժպիտներով և՛ պարզ, և՛ սուր,—
Սրբեց բոլոր մտքերն իմ մուր,—
Յեվ ինչ վոր կար և՛ մութ, և՛ կույր:

Վողջո՛ւյն, Մուսա՛, վողջո՛ւյն, իմ քո՛ւյր:

## N-Ի ԱԼԲՈՄՈՒՄ

Դու խորհում էյիր, վոր ահա մի որ
Կփանդես հինը հիմքից բովանդակ.
Բայց մոլուցքիդ մեջ՝ մնացիր անզոր,
Մի անճանապարհ, անշող մոլորակ:—
Թո՛ղ մամուռապատ նեղ հուն ու յեզերք,—
Մտի՛ր պայքարի ովկիանոսն անհուն,
Այնժամ կդառնաս և՛ ուժ, և՛ տարերք,—
Հազա՛րաչքանի և հազարանո՛ւն:



## ԼՌՈՒԹՅՈՒՆԸ

Ճաղատ ծերուկի պես նստեց լռությունը
Հանդարտորեն հանդարտ,—
Յեվ անձկատ հորձքով մտավ նա իմ տո՛ւնը,
Հագած պատմուճանը իմաստության:

Ամռան գիշեր է խոր,
Ամռան գիշեր անհուն,
Ծառերը, լուսնյակի լույսերի մեջ մխող՝
Լռակյաց հայացքով — մի անանուն
Մտորում են ապրում, մտորում անբարբառ,
Վորին կարդում են լոկ լուսնի շողերը վառ:

Բոլոր շշունջները և ձայները բազում
Լռության յերազում՝
Կորցրել են ուղին թե փոքր, թե մեծ,—
Յեվ չեն գտնում իրենց:

Պատուհանից ահա յես նայում եմ հեռուն.
Միտքս՝ ինչպես մի նետ
Սլանում է առաջ,
Միանում հովի հետ,
Հասնում մինչև Կշեռքն ու Ծիրկաթնի առուն,
Աստղերի բույլքն առատ,
Մոլորակներն անծագ, անծանոթ և անհայտ,
Հորիզոններ անզայտ:
Յեվ անդադար թռչում, նախրո՛ւմ, նախրո՛ւմ
Ցնո՛րք աշխարհներում:—

Կրոնի յերևի
Իմ միտքը— արևին,
Վոր ովկիանի նման՝ մի կարմրագույն կրակ

Լցրեց ինձ անծանոթ յերկրների վրա·
Յերկրների, վորոնք յերազողին միայն
Ծանոթ են, բայց և՝ չկա՛ն, չկա՛ն։

— Ծերո՛ւկ, ճաղա՛տ ծերո՛ւկ,—
Դու, վոր լսում ես միշտ հեծեծանքը այրու,
Յեվ հառաչը վորբի, ու սիրո տարագիր,
Լինում ես ամեն տեղ, ամեն վայրում,
Յեվ կապված ես անմեռ ժամանակին՝
Ո՞ւր ես կորցնում դու—
Իմ միտքը անդունդում։

— Ծերո՛ւկ, ճաղա՛տ ծերո՛ւկ,
Դու, վոր կնքում ես միշտ մահացյալի լեզուն,
Յես տեսնում եմ, ահա՛, քո աչքերում
Հուրեր կան հրկիզուն։
Խոսիր՛, ո՛վ մեծագույն ժամ դու հանգստավետ —
Խոսի՛ր, խոսի՛ր ինձ հետ։

Յեվ խոսեց ճաղատը,—
Ցույց տալով ինձ—մատը։

—Այդ ի՛մ մեջ են ծնվում մտքերը հանճարեղ,
Այդ ի՛մ մեջ են ծնվում և մտքերը գանան·
Միայն իմ մեջ, միայն դու կարող ես վարել
Քո միտքը—անծանոթ, դեպի յերկնանանանչ
Ափերը ովկիանոս իմաստության...
Ի՛մ մեջ, ի՛մ մեջ միայն
Կճանաչես դու քո ներքին աշխարհն անծիր,
Կճանաչես ամեն էյակ և իր,
Ինչպես փիլիսոփան այն մեծաքանքար՝
Իմ մեջ միայն —զգաց տրոփը սրտի մեծ,
Իր մտածման ընթացքն; և մեզ ավանդ տվեց՝
«Յերբ մտածում եմ—ուրեմն՝ կամ»։

Յեվ լռեց ճաղատը,
Յետ տանելով մատը։—



Լուռ ենք աշխարհն ու յես, ու իմ տունը։
Շուրջս քանի գնում՝ խորանում է անհուն
Ծով գիշերը անդորր, հանդարտ, հանդարտահուն։
Լուռ ենք՝ աշխարհն ու յես, ու իմ տունը։

Վա՛յր իջի՛ր, վա՛յր, իմ մի՛տք,
Անուղղյա ռոմանտիկ,—
Ո՞ւր ես թռել դեպի լուսինը մենակյաց,
Յերկինքը կարկամած, դեպի Ծիրկաթինը·
Այդ դո՞ւ պիտի գտնես անհայտ յերկիրները,
Այդ դո՞ւ պիտի բերես—արևին ցած։

Իջի՛ր, իջի՛ր, իմ մի՛տք,
Անուղղյա ռոմանտիկ։

Յեվ շշունչս միայն, միայն ինքս եմ լսում·
Յեվ՝ լռությունը լոկ,
Վոր մոր նման գգվող, ամոքիչ է ու սուրբ,
Փայփայանքի նման հարթ ու վողորկ։

Յեվ դառնալով, միտքս,—գալիս է վայր,
Անպատակ, դատարկ բարձունքները զիջած·
Ընկնող աստղի նման արմատը հրավառ,
Յեվ յերկարուն ծայրը արդեն շիջած.
Ծայր, վոր վոչ վոք գիտե, թե ուր է մահանում·
Տարածության մեջ խորն ու անհուն։

Յես, վոր, զուցե,— վերջին էյակն եմ մտածող՝
Բռնում եմ իմ մտքի ընթացքը սլացիկ
Յեվ ուղղում այն դեպի յերկիրը ծփացող,—
Այդ մայրերի մայրը— շքեղ և գեղեցիկ·—
Մարդկային մրրկուն ովկիանոսը անծիր,
Յեվ ստիպում մտքիս՝
— Դե՛, ճանաչի՛ր ...
Ճանաչիր այս հողն ու հողի մարդուն·
Յեվ պայքարն ու սերը, և Գալիքն ու Ներկան.

Ճանաչիր այն հորդուն
Մարտնչումը, որ դեռ յերկա՛ր, յերկա՛ր
Մղեն պիտի հեռու, քաջաբազուկ, արի,
Քո ա՛յն ընկերները,
Վորոնց հորձքը անհուն և վիթխարի
Սարսել են աշխարհի նարնատ հիմունքները:

— Ծերո՛ւկ, ճաղա՛տ ծերո՛ւկ,—
Դու, վոր նայում ես միշտ գործարանի, հողի
Վաստակներին և այն պահում քո ձեռներում.
Յեվ նշում ես ուղի
Ժողովուրդներին մեր—խաղաղության,
Յե՛վ կառուցման, և՛ իմաստության՝
Խոսի՛ր, ո՛վ մեծագույն ժամ դու հանգստավետ,—
Խոսի՛ր, խոսի՛ր ինձ հետ:

— Յե՛ս եմ հղի մայրը ցասկոտությա՛ն,
Յեվ իմ մեջն է կոփվում սիրտը քաջ մարտիկի.
Յե՛ս եմ նշում ուղին ապստամբության՝
Ամբոխում եմ մարդկանց, ապա մղում զենքի.
Միայն ի՛մ կամքով է՝ միլիոնավոր մարդկանց
Յերթը դառնում և՛ խենթ, և՛ մոլեգին, և՛ պիրկ.
Յես եմ մղում տալիս հրաբուխին հանգած,
Հանգցնում մարդկության արյունավառ շապիկ:

Ո՛, իմ լեզուն սո՛ւր է
Յեվ իմ աչքը պայծա՛ռ:
Վառում եմ պուրպուրը
Արևի վառ.
Յեվ յես անսահման եմ, և անմեռ եմ, ինչպես
Ժամանակն ու արևն հավերժական.
Մոր պես գթո՛տ եմ—յես, հարսի պես—հե՛զ.
Բայց ինձնից է ծնվում ամեն մի ուրագան:

Յեվ լռեց ճաղատը,—
Յետ տանելով մատը:—



Ել ի՞նչ ես դու, իմ մի՛տք
Անուղղյա ռոմանտիկ,
Ոգտվելով հանդարտ լռությունիցն այս վեհ՝
Թռչում եյիր ցնորք—յերկինքն ի վեր:
Իջի՛ր,
Իջի՛ր,
Իջի՛ր,—
Ավելի խո՛րն իջի՛ր, կանգնիր հողի՛ն,
Յեվ թող, վոր Միներվա աստվածուհին անմեռ՝
Մեխի զգաստության նիզակը քո կողին:

# ԼՈՌԵՑԻ ԱՎԱԳԸ

(ՀԱՏՎԱԾ)

Յեվ դեռ հոսում է պղինձը վարար,—
Հնոցը վառ է նման ցերեկի,
Յեվ դեռ չի հանգել ուժն ստեղծարար
Լոռեցի հսկա Ավագի ձեռքի·
Յեվ դեռ իր ջահել ընկերների հետ,
Ինչպես ձյունածածկ վիթխարի մի լեռ,
Կանգնած է նորից վստա՛հ, կենսավե՛տ,
Վրան յոթը տաս գարուն ու ձմեռ:—

Պիրկ են թևերը և քայլքը թեթև
Այս զարմանալի աշխուժ ծերուկի,
Պողպատ հասակը հսկայապարթև
Խարսխված յերկու թուջե կրունկի,
Ծնկների վրա շարժուն ու անխոնջ,
Վորոնք պահում են նրան միշտ հաստատ·
Յեվ անբաժան մի փայտե ծխամորճ,
Վոր միշտ ծխում է շուրթերում վստահ:—

Յեվ նրա դեմքի փայլը ներարկված,
Բրոնզված է հուր հնոցի բոցում,
Վորի դեմ անդուլ տարիներ կանգնած
Ղեկավարում է, և լուռ՝ զրուցում
Իր անցյալի՛ հետ, իր մե՛ծ ներկայի,
Մերթ թռչում դեպի սարերն հեռավոր,
Նստում Լալվարի ձյունեղեն գահին,
Յետ գալով՝ սուզվում անդունդները խոր:—

Ապա սրրընթաց սուրում մինչև ցուրտ
Սիբիրի այրող տափաստանը լայն,



Վորտեղ նա ծարավ, հոգով անհագուրդ
Խմեց հրեղեն խոսքը լենինյան,
Խոսք, վոր շանթի պես նեղքում եր խավար.
Հին Ռուսաստանի ամպերը մթին,
Պարզում գալիքի յերկինքը պայծառ,
Նոր ուղի գծում պատմության յերթին:—

Այնտեղ նա լսեց առաջին անգամ
Մեծ Ստալինի անունը նույնպես.
Անունը և՛ վեհ, և՛ նվիրական,
Լենինի նման ու Լենինի պես·—
Վոր մարտ է մղում համա՛ռ, անզիջո՛ւմ,
Ընդդեմ սևակնած ցարի ալիքի,
Յեվ ինչպես հրե լեգենդար թռչուն՝
Ավետում այցը պայծառ գալիքի:—

Այնտեղ նաև իր միտքը բոցկլտաց ,
Վոր Լոռու ձորում դեռ կայծ եր միայն,
Ինչպես իր դեմի շեկ հնոցը բաց,
Ինչպես բոցերի լեզուները լայն,
Վոր բարկ արևից ավելի յեռուն,
Թափում են շուրջը հրաշեկ կայծեր,
Ինչպես պղնձի հոսանուտ առուն,
Վոր յենթակա յե իր բազուկին ծեր:—

Յեվ այժմ, ահա, հնոցի առաջ,
Ընկերների հետ տքնաջան ու ժիր՝
Կանգնել է նորից նա բազմաշառաչ
Կովով ու հախուռն հաղթանակով իր:
Յերեկ՝ կռիվ եր բուրժուայի՛ դեմ,—
Կռիվ եր մեծ ու սոսկավիթխարի,
Յերեկ՝ կռիվ եր վոսկու գահի՛ դեմ,—
Հանուն այս նորեկ, պայծառ աշխարհի:—

Պայծա՛ռ աշխարհի, վոր անցել է բյուր,
Խութ ու պատնեշներ—հաղթահարելով,
Յեվ իր պայքարով ամրացել ամուր,

ժամանակի մեջ հավերժ ընդհուպ
Կանգնել, ինչպես մի գրանիտյա բերդ՝
Հպա՛րտ, անսասա՛ն, վոգով անխորտակ,
Յեղբայրությամբ ու յերջանկությամբ սերտ,
Սոցիալիստական ուժը կրծքի տակ։—

Պայծա՛ռ աշխարհի, վորն ողակված չար
Թշնամիներով դժնի ու դաժան,
Կանգնել ե արթուն ու կկանգնի հար,
Յեվ չեն սարսեցնի՝ վո՛չ մի տարաժամ,
Յեվ վոչ մի վտանգ ու սպառնալիք,
Յեվ գնում ե իր վստահ քայլերով
Դեպի կոմունի՛զմը՝ պայծառ գալիք—
Աշխարհաշունչ հաղթանակներով։—

Պայծա՛ռ աշխարհի, վորի համար մեծ
Ստալինը իր ձեռքով թանկագին
Սոցիալիստական մեծ Որենք կերտեց,—
Որենք պայքարի և հաղթանակի։—
Որենք, վոր մարդուն բարձրացնի պիտի
Վսեմ գագաթը կատարելության,
Շնչելու համար անարյուն ոդի
Յեվ ազատության քաղցրությունն անանց։—

Ազատությո՛ւն, վոր սուր ե յեղել միշտ
Վոսկու աշխարհում, ծածկած թգենով,
Վորի ընթացքը, չար ու ամբարիշտ,
Հարթել են սրով ու հրազենով,
Ու կախաղանով, խոշտանգումով խիստ,
Վորի արձանը ցոփ Վաշինգտոնում,
Ամաչում ե յերբ վոսկին՝ անհանգիստ՝
Վտանգի ժամին նախճիր ե անում։—

Յե՛վ Ճապոնիայում, և՛ Հռոմում նոր,
Ինքն իրեն կրծող Բերլինում հիմա,
Հանուն Որենքի խիստ ու ահավոր,
Նյութում են դժնի կոտորած ու մահ...



Մինչև մրրիկը պայթի փրկարար,—
Յեվ ամենազոր մեծ Ստալինի
Որենքը փրկե աշխարհը արար,
Յեվ Մարդը՝ մարդուն զորավիգ լինի։—

Ավագը ծանր՝ իր կրծքին նայեց,—
Շքանշանին բորբ-բոսորագույն,
Ուր բազմել եր վեհ Առաջնորդը մեծ—
Սեգ լեռան լանջի արևի հանգույն,
Պայծառ, հաղթարի, իր տիտանական
Հայացքը սուզած մեծ ներկայից վառ
Մինչ տեսանելի խորը ապագան,
Մինչ սահմանները նրա անկոխար։—

Վորքա՛ն յերջանի՛կ ե կյանքը թվում
Խորհրդային լայն յերկնքի ներքո,
Վոր անգամ ծերը, մահը յետեվում,
Զգում ե իրեն և՛ չահել, և՛ գոհ։
Քանզի այն կյանքն ե միայն թանկագին,
Վոր ձեռք ե բերվում միայն պայքարով,
Ուր չի ծածկում ա՛մպը արեգակին,
Կապված դարիդ հետ, լցված քո դարով։—

Ահա Ավագը, ծերունի մի մարդ,
Առաջնորդների ցուցմունքով ահա—
Կռվել, կառուցել, և կռվում ե արդ,
Յեվ կկառուցի քանի վոր ո՛ւժ կա,
Շո՛ւնչ կա բերանում և կրծքի ներքո,
Քանի վոտքերը կպահեն պարթեվ
Հասակն իր կոփված կռվի կրակով,
Յեվ բոլշևիկի սիրտը պողպատե։—

Յերջանիկ ժպտով տեսնում ե հիմա
Ուրվագծվում ե աչքի դեմ կրկին
Կռվող մարդկության յերազ ու հմայք
Զանգվածը կարմիր մայրաքաղաքի.
Կրեմլի հսկա աշտարակը մեծ

Յեվ դամբարանը այն հանճարի, վոր
Անքուն, աննկուն, անդուլ պայքարեց
Ընդդեմ քարացած կարգի դարավոր:—

Յեվ այն հասարակ հագնված մարդուն,
Վոր ժպտում է մի անհուն քաղցրությամբ,
Յեվ միշտ դեկի մոտ՝ հանճարեղ, արթուն,
Ցրում է չոքող ամեն մի սև ամպ,—
Գծում լուսավոր փրկարար ուղի,
Թափ տալիս վոգո՛ւն, ուժ տալիս սրտի՛ն․
Մարգարեյի պես ճշմարիտ, ուղիղ,
Կործանում կարդում չար վոսկեհորթին:—

Նորից Ավագի արթուն ականջում
Թնդացին ծափերն ընտրական որվա,—
Յեվ ընկերների ճառերը հնչուն,
Հաղթական յերթը յերկու տաս տարվա,
Վոր յերկրին դարեր մղել է առաջ,
Դեպի կոմունի լույսը զվարթուն
Պայքարով հարուստ, հաղթությամբ առատ․
Կռել ու կոփել մի նոր մարդկություն:

Այդ նոր մարդկության մի փոքր մասնիկ,
Վոր ունի լապտեր, մուրճ, լոմ ու կռան,
Ու Լոռու կոլվոր գեղջուկներն ազնիվ,
Վորոնք, դեպուտատ ընտրեցին իրան՝
Զվարթ ծափերով թնդացնում եյին
Շքեղ զարդարված դահլիճը ցնծուն,
Յեվ զի՛լ զարկում եր նրա սիրտը հին՝
Գերագո՛ւյն պատվի հույզերով լեցուն:—



# ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ

# ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

*Սայաթ Նովի յերգ ու տաղին*
*Վոչ մի աշուղ գեռ չի հասել,*
*Յերկնքի պես խորն ու հեռուն,*
*Նրան ամեն ձեռ չի հասել,*
*Վոնց վոր անհաս արեգակի'ն*
*Վոչ մի բարձր լեռ չի հասել։*
*Ս. ՏԱՐՈՆՑԻ*

Հե՜յ իմաստուն, գոհար գրչով դու գրված գի'ր, Սայաթ-Նովա,
Ցարի բոցով, խոսքի խոցով վառված հոգի', Սայաթ-Նովա,
Դու ուրիշի մութ գիշերին—աստեղափիր Սայաթ-Նովա,
Փափա'գ սրտի, պապա'կ սրտի անվարձ ջրկի'ր, Սայաթ-Նովա:

Քո խաղերը շողշողում են թանգ, թանկագին փառքի' նման,
Հարուստ Հարուն Ալ—Ռաշիդի ապարանքի սարքի' նման,
Անունըդ միշտ վառ կմնա արեգակի վառքի' նման,
Համբուրելի համբավ' անցած յերկրե յերկի'ր, Սայաթ-Նովա:

Դու բլբուլ ես՝ բարով բացված խաս բաղերի վարդի' կարոտ·
Ծովի պես խորն, յերկնի պես բարձր, սիրտդ մոտիկ մարդի'
կարոտ·
Ժպտի ծովում ընկած ձուկ ես,—գոզալների կարթի' կարոտ.
Եշխըդ քուրա', դարդըդ մե՜ծ ու անկարեկի'ր, Սայաթ-Նովա:

Ցես ինչ՞ ասեմ թագավորին ու քո յարին—սարի սմբո'ւլ,
Աշխարհը մի փշոտ վարդ եր, ինքըդ փշի վրի բլբո'ւլ,
Բեզարեցիր սերից, սուփրից, մոմը՝ յեղավ յարի համբույր,
Դու մազեղեն հագուստի մեջ՝ յերկաթագի'ր, Սայաթ-Նովա:

Դու խաղի խա՛ղ, խաղողի բա՛ղ, վոսկե փինջա՛ն ալ գինով լի,
Քո յերգից մարդ չի՛ կշտանում, դու խաղ ու ջա՛ն անհատնելի,
Քեզ խոցեցին թշնամին ու յարի խանջա՛լն արյունալի,
Ցերկու սրի բերանն ընկած սիմ ու սկիհ, Սայաթ-Նովա:

Աշխարհս ո՞ւմն է մնացել, վոր քեզ մնար, ո՛վ անմուրազ,
Դու իմաստուն, ճարտարաձեռ, խելք ու հնար, խոսքի ալմազ,
Ցես, Սողոմոն Տարոնցիս էլ ասում եմ քեզ,— հար կմնաս
Ցերեք ազգի յեղբայրության շաղախ ու կի՛ր, Սայաթ-Նովա:

# ՔԱՆԻ ԱԶԻԶ

Քանի՛ ազիզ յար բռնեցիր, վերջը սերըդ սրի՛ն գնաց
Սիրտդ վառվեց ինքն իրեն մեջ, չար աչքերի հրի՛ն մնաց
Հին աշխարհում մուրազ բախտդ ճակատի սև գրի՛ն գնաց
Ու բանիփ կյանքըդ խոտի նման, մի օր, եման ձրի գնաց:

Դու չիմացար են աշխարհում վո՞րն է չարը, վո՞րն է բարին,
Են սիրահար Մեջնունի պես մոլորվեցիր ճանապարհին,
Շատ ուզեցիր գնալ հասնել քո հազարան բլբուլ յարին,
Սիրտդ ովկիան արյուն կտրեց, աչքդ արցունք ջրի՛ն գնաց:

Սայաթ-Նովա՛, սիրտդ վառ կար՝ անբուն դուշ էր, դադար
չուներ,
Անհասելի սիրուդ սարը—ամպերի մեջ կատար չուներ,
Քո սիրավառ պայծառ աչքը յարի սով էր, պատառ չուներ,
Թար թայիզյուլ թառլան թուփըդ թուրանական թրի՛ն գնաց:

Գիշեր ցերեկ կռվում եյին սիրտդ ու միտքըդ անհաշտելի,
Սիրուց խռով՝ վանք քաշվեցիր, յարըդ մնաց միշտ պաշտելի,
Բայց դու, սուփրի ու սազի՛ մարդ, չմնացիր անզժդելի,
Ցերկու աշխարհ, դու մեջտեղում, իղձըդ մոմի մրի՛ն գնաց:

Հնար լիներ՝ կհանեյիր քո եդ սիրտը, բայց ի՞նչ օգուտ,
Սիրտն հանեյիր՝ ազիզ յարին՛ էլ ո՞վ կասեր «մեռնիմ հոգուդ»—
Հաստատ սարի պես կանգնեցիր, գլխիդ թափվեց քարե կարկուտ,
Փառքըդ, սակայն, անմահական արեգակի հրի՛ն գնաց:

Սայաթ-Նովա՛, քանի՛ գոզալ խաս յերգեցիր կարոտալի,
Տաք արցունքով քանի՛ սավդա-թաս ներկեցիր կարոտալի,
Ես Սողոմոն Տարոնցո՛ւ պես սազ գրկեցիր կարոտալի,
Մարգարաշար խաղըդ անմահ մեր դպրության գրի՛ն գնաց:

## ԱԲՈՎՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԱՋ

Ո՛, նա զգում էր, որ մենավո՛ր էր,
Վորպես քաղված արտում մնացած հասկ․
Քանի որ արևը հեռավո՛ր էր,—
Ցեվ իր ճանապարհը—քար ու տատասկ…
Սրտամորմո՛ք էր իր տխրագին վախճանը,
Ի՞նչ էր մնում նրան աշխարհում հին,
Քան պահել և՛ յերգը, և՛ հանճարը,
Ցեվ մե՛ր ձեռքով կանգնել—պատվանդանին։



## ՔՈՇԱՔԱՐՈՒՄ

*Քոշաքարում յես վազել եմ․․*
*ՀՈՎՀ. ԹՈՒՄ ՆՅԱՆ*

Լոռու չքնաղ անտառից վե՛ր, սարերից վե՛ր, ամպից վե՛ր,
Հաղթ բազմել է Թումանյանի յերգած սարը—Քոշաքար․
Շողացել են նրա գլխին կայծակները յերկնավետ,
Աճաբեկված յեղնիկներին փախցրնելով քարից-քար։—

Բայց պարզ որվա ծիրի վրա գծվում է սարն անխռով,
Գծվում է լուրթ, ինչպես իրա յերգչի անունը փայլուն,—
Վորոնց ահա տեսնո՛ւմ եմ յես, իրենց շքեղ գույներով,
Մեկին—անցյալ դպրության մեջ, մեկին—յերկնի հայելում։

Այստե՛ղ է, վոր Թումանյանը ծիածանեց յերազն իր․
Այս արծաթյա՛ առվի ափին, զմրուխտի մեջ լայնածիր․
Այստե՛ղ է, վոր, մանկանց նման,—ինքն ու յեղնիկը ագնիվ
Մի թփից թուփ, մի քարից քար, մի ժայռից ժայռ վազեցին։

Ի՜նչ խնդությամբ նա կապրեր իմ այս վայրկյա՛նը մեծագանձ,
Ի՜նչ ցնծությամբ, նո՛ր աշխարհում, չնաշխարհիկ անուրջում,
Կուզեր տեսնել Քոշաքարը ու յեղնիկներն, ու մարդկանց,
Վոր նորի՛ց նոր նրանց հին՛չը հնչե՛ր իրեն ականջում…

Ցեվ, չկա՜ն այն որերն հիմա․—դարձել են միփ ու յերազ,
Բայց կա ինքը—Թումանյա՛նը, և կա սա՛րն այս անավեր,
Վորոնց մասին յերազում եմ այս բարձունքում յերկնահաս,—
Լոռու չքնաղ անտառից վե՛ր, սարերից վե՛ր, ամպից վե՛ր…

## ԺԱՅՌԵՐԸ

Անտառ է։ Վերել է։ Ահա ալ մորի։
Ահա մի անհուն ճեղք վիթխարի ձորի·
Ունքերի նման թավ ժայռերը մթին
Խորհում են խորախոր, խոլ խոհեր խորթին·—
Խորհում են,—սեվեռած ժայռերը ձորում,—
— Թե աշխարհ կգա՞ ել յերգիչը Լոռու։



## ԵՄԻԼ ՎԵՐՀԱՐՆ

Կարդալով քեզ, ո՛վ վարպե՛տ, յես զգում եմ, վոր իմ մեջ
Հյուլեն անգամ ծավալվում և դառնում է տիեզերք,—
Յես զգում եմ քո սրտի ջերմ սերերը վաղաշեջ,
Քո թախիծը՝ փլաման դաշտերից ել անեզերք։—

Իմ մեջ փռվում են ապա քո դաշտերը հայրենի,
Ուր անցել է ալեծուփ ջահելությունըդ կրքոտ·
Յեվ ընթացքը յերգերիդ, քաղցրությունով վայրենի,—
Տարերայի՛ն, միշտ շարժո՛ւն, սրտագրավ յերանգով։—

Յեվ զանգերի թախիծը՝ յերեկոյի խաղաղիկ,
Առավոտի վոսկեծով արշալույսը զվարթուն,
Ուր ամեն ծառ ու ծիծառ, ուր ամեն ծիլ ու ծաղիկ,
Կարծես տարերք են շնչում ու բազմաբյուր բնություն։

Իմ մեջ թափվում են բոլոր քո հողմերը հռնդուն,
Յեվ անձրևներն և տարվա յեղանակները բոլոր·
Յեվ խեղանդամ գյուղերը, բազմաչարչար ու տրտում,
Յեվ քաղաքները խեղդուկ, ծանրությունից հեվալով։—

Յեվ փողոցներն ալեկոծ, ուրկից կրքերը վռնում,
Դառնում մահի շոշափուկ ու հասնում են մինչև կույս,
Անծագ, անհայտ հեռուները, և պտույտի մեջ առնում
Քաղաք ու ծով, գյուղ ու շեն, ու վորջեր ցուրտ ու անլույս։

Յեվ զրնգուն մետաղը մկաններից խլված հար,
Պաղ, անհոգի-անարյուն բանկիրի դեմքը ժանգոտ·
Յեվ մարդկային ապստամբ բազմություններ սովահար,
Ովկիանի պես ալեկոծ՝ փողոցների յերկայնքով։

Կարդալով քո յերգերը, ո՜վ վարպե՛տ, իմ կրծքի տակ
Վառվում է քո շունչը մեծ միջօրեյի հուրը զերթ,
Բարձրակատար չե՞ս դու, վիհի նման՝ անհատակ,
Խաղաղավետ ծո՜վ անծայ, անապատի հողմի յերգ:

Դանտեն՝ դժողքը կերտեց, իսկ դու՝ յեռուն քո դարի
Դժողքն այն մի՛փ դժոխքից հազար անգամ արնաբույր·
Յեվ մղեցիր ապստամբ ժողովրդին պայքարի,—
Յեվ դարձար դու հողմաշունչ մարգարե և տրիբուն:

Իմ սրտին մոտ, իմ վարպե՛տ, չկա յերգիչ քեզ նման.
Հավատում եմ, յերբ յելնի Արեգա՛կդ յերազած՝
Քաջաբազուկ և արդար ժողովո՛ւրդը Ցլաման—
Կբարձրացնի բրոնզե քո արձա՛նը փառապանծ:—

## ԼԻ-ԹԱՅ-ՊՈ

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Յեվ սրտում պահած բռնկումն անկա՝
Յեկավ ու կանգնեց մարմար պալատում
Չինական պայծառ պառնասի արքա—
Լի-Թայ-Պո հզոր, պոետն իմաստուն:

Նա էր ինչպես լուսին, շուրջն՝ յերգիչներ յոթ,—
Նման ծիրկաթնի ճերմակ թափորի,
Նրանք ամեն մի գաղտնիքի հաղորդ՝
Ութն իմաստուններ գինու սափորի:

Նրանք յերգիչներ, բամբիռներով տաք,
Գինարբուքների շվայտ արքայի,
Վորանց սիրերգու վարժ մատների տակ
Հորդում էր յերգը սիրո և մահի:

Յեվ առավոտից մինչև իրիկուն,
Մինչև կես գիշեր, մինչև արևայգ՝
Բամբիռների տակ, մեջքով բեկբեկուն,
Պար էին գալիս մանրավոտ կանայք:

Բայց դառնանալով կյանքիցն այդ անկա՝
Նա մի օր ցասկոտ շաչեց պալատում,—
Չինական պայծառ պառնասի արքան,
Յեվ ասաց հզոր, լեզվով իմաստուն:

— Դո՛ւ, Մինգ-Հուանգ-Թի՛, սնափա՛ռ տիրան,
Ասում եմ քեզ արդ — ահա այս օրից,—
Անարժան ես դու յերգին նվիրած
Իմաստուններիս գինու սափորի:—

Ունայն է կյանքըդ և փառքդ փոշի,—
Յեվ թովքը հակինթ գինուդ պաղպաջուն·
Յեվ խջույքներիդ կոչերն արնաշեկ·
Չի նրանք — միայն այստե՛ղ են հնչում:—

Այնինչ՝ քո յերկրում, քո յերկրում ամբողջ
Աղքատությու՛ն, ցա՛վ ու վիշտ սրտակեզ,
Ահա ասում է յերգիչ Լի-Թայ-Պոն,—
Արյունո՛տ տիրան, մա՛հ եմ կարդում քեզ:

Յեվ զարկեց նա իր բամբիռն յոթնաղի,
Յեվ ջարդեց գուշը չոր գանգի նման·
Յեվ դուրս սուրաց—հանց մրրիկ կատաղի՝
Դեպի հեռավոր ճամբեք մանեման:

Դեպի բամբուկե խրճիթներ անշուք,
Հյուսելու յերգեր խիզախ ու արի,
Ուր ժողովուրդը անհաղաշշուկ
Կանգնել եր ցասկոտ՝ դաժան պայքարի:

Յեվ կանգնեց նա իր ժողովրդի մեջ՝
Ճանթը՝ շրթունքին, փայլուրթը՝ հոգում
Յեվ յերգեց յերգեր հզոր ու անշեջ
Լույս առավոտից մինչև իրիկուն:

Յեվ նրա յերգի հնչյուններն հզոր
Կտրում եյին կույս անտառներ մթին·
Լայնարձակ դաշտեր, սարեր ձյունազոծ,
Ավան ու քաղաք, ու գյուղեր յետին:

Յեվ մինչ տիրանները արհավրած հոգով
Ամրացնում եյին ու դղյակ, ու բերդ,
Լի-Թայ-Պոն՝ փոխած բամբիռը զենքով՝
Կռվո՛ւմ եր ըմբոստ ժողովրդի հետ:



## «ՅԵՐԳԵՐԻ ԳԻՐՔ»

Այսոր տեսա, սիրո՛վ գնեց, իմ յերկրի մի տարեց կին,
Մեծ Հայնեյի «Յերգերի գիրք»-ն ու նվիրեց թոռնիկին·
Յեվ ակամա հիշեցի յես յերգչի խոսքերը թունոտ,—
— Գիրքս՝ պիտի տոպրակ շինեն, մեջը լցնեն քթախոտ:

Հայնրի՛խ Հա՛յնե, դու հանճարեղ Մարքսի մոտիկ բարեկամ,
Տեսնո՞ւմ ես, վոր մենք քո կարծած հոններր չենք չարակամ,—
Չենք կործանում վո՛չ քո անդրին, վո՛չ արձանըդ մարմարի,
Վոր քո յերգի հիշատակը անհետանա ու մարի...

Ո՛, վո՛չ, յեթե այսոր յերկրիս տարեց կինը գնեց քո
«Յերգերի գիրքն» ու նվիրեց իր թոռնիկին սրտագին,—
Ուրեմն դու մնացել ես մեզ համար միշտ հարազատ,
Նոր աշխարհին—միննեզի՛նգեր, հին աշխարհին—խարազան:

Հայնրի՛խ Հա՛յնե, գալիք Մարդը պայծառատես, ջերմաջերմ
Մի՛շտ կհիշի քեզ Մարքսի հետ:—Մինչ հոնները կկորչեն:
Դու կմնաս, և յերգերդ՝ տիեզերքը տարեց կին,—
Կնվիրի կյանքին դալար,—իր մշտագո թոռնիկին:

# ՍՐԻՆԳ

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Խարավոր մեր ժողովրդի հնօրյա, հնավանդ ծառից,—
Մորմոքի ու ցավի՛ համար կտրած դու չքնա՛ղ սրինգ,
Դու—մեր հի՛ն շուրթերի յեղե՛րգ, դու—մեր հի՛ն գեղջկական
բառի՛,
Բանի քաղցրալո՛ւր բարձունք, հնչյունի հոգեղե՛ն բարիք:

Մի ամբողջ հին ժողովո՛ւրդ է խտացրել իր հոգին քո մեջ,—
Հարսների անամոք սրտեր, ծերերի տրտունջ ու կական.
Յեվ անսեր մեր աղջիկների տխուր ուռինե՛րն այն խեղճ,
Վորոնք անցյալում միայն լացող աշուններ հագան:

Դու՝ սրինգ դարձար գեղջկուկի պարզունակ, տարաբախտ
սիրո,
Լուսընկա գիշերվա՛, հովի՛, արևի՛, յերկնքի ծովի՛,
Յեվ սրինգ դու դարձար հոգու՝ խոշտանգված հրով ու սրով,
Հրահուր տրտունջ ու մրմունջ՝ մեր անցած տանջանքի բովի:

Յեվ արդ, դեռ հնչո՛ւմ ես, բայց վո՛չ, վո՛չ վորպես յերգը մեր
վոգու,
Կհնչես դու կրկի՛ն, կրկի՛ն, քանզի, քեզանից այսօր—
Հնչյունի վարպետնե՛րը մեր—կուսանենն համառ ու տոկուն,—
Կերտելու նո՛ր ժողովրդիս յերգերը հաստ և հզոր:



# ՄԱՏՆԵՐԻ ԱՆՁՐԵՎ

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՎԱՐՏԵՏԻՆ

Վորպես անկարելի, անկրկնելի հանույք՝
Արևով անձրևի շիթեր վորպես հրակ,
Այս իրիկուն, ահա, մատնե՛ր դուք վոսկեջո՛ւր,
Մեղմիկ անձրևում եք ջութակների վրա:

Անձրևը մերթ մեղմ է, մերթ հախուռն ու արագ,
Մերթ վոլոր ու գալար, մերթ աղի ու տխրուն.
Ինչպես աղջիկների ճկուն մեջքը բարակ,
Յեվ ինչպես ծերերի քնքուշ սիրտը փխրուն:

—Ձեր անձրև՛ը, մատնե՛ր, բույր է բաշխում հասկի,
Յեվ բաշխում է խաղաղ, նոխազնաց լուսին.
Ու շշունջներ շրշում հորովելի, բազկի,
Անմխիթար ցավի ու խնդության մասին:

Անձրևվեղե՛ն մատնե՛ր, շող շիթե՛ր դուք անծայր,
Այդ մեր ջինջ հոգին է ձեր ջրերում լողում,
Յեվ մինչ հորիզոնից մի հորիզո՛ն պայծառ—
Ծիածանի՛ նման Կոմիտասն է շողում:

# ՊՈԵՏ ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՍՈՍԻՆԵՐԸ

Այնտեղ, Ղրիմի ափին,
Ուր անգին արև կա ու զով,
Ուր ծովն է հավերժաբար
Քերում իր ճերմակ ափե՛րը,
Դեռ կանգուն մնո՛ւմ են նրանք,
Դառ կանգուն՝ դարձի յերազով,—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:

Անբարբառ մրմնջում են նրանք,
Քամու դեմ գլուխնին թեքում,
Յեվ դալար են ճյուղերը նրանց
Ինչպես հասուն մեր աղջիկնե՛րը,
Անդարձ այն հասա՞կն են արդյոք,
Նրանք, տխրությամբ յերգում,—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:

Յես լսում եմ նրանց յե՛րգը,
Շրշում են շշունջով անմեռ,—
Նա յեկավ Հյուսիսից հեռու,
Սրտում իր կարոտնե՛րը·
Յեվ միայն մե՛նք դարձանք նրան
Սիրելի և անշահ ընկեր,—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:

Յերգեցինք նրա սերը հախուռն
Հայրենի դաշտերի անափ,
Սպիտակ յերկնաքեր ու վեհ
Կովկասյան լեռների սե՛րը
Յերգեցինք յերազնե՛ր չքնաղ,
Յերազներ մնացինք անամպ,—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:



Գուցե մեզանից մեկին
Սիրածն էր համարում իրա,
Յեվ կապո՛ւյտ, կապտաջուր ծո՛վն այս
Նրա դյութական աչքե՛րը·
Գուցե պատճառը այդ էր,
Վոր դարձանք հարազատ նրան—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:

Ավա՛ղ, չար ձեռքը փոխեց
Հունը այդ վարար գետի
Յեվ գետը սարի հանդիպեց
Կորցրեց հունն ու ափե՛րը·
Թեև մենք սգացինք հեռվից,
Բայց նրից մնացինք մոտիկ—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:

Մենք էլ չենք լինի մի որ—
Յեվ կնկնենք արմատից, ճյուղից,
Յեվ կչորանանք վերջին,
Վերջին մեր տերևնե՛րը.
Բայց նրա անվան հետ անմահ,
Մենք, կբարձրանանք հողից,—
— Պոետ Լերմոնտովի սոսինե՛րը:

# ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ

Ահա և յես ընթացք առած յերգիդ հունով քո անխըռող,
Քայլում եմ արդ Ստալինյան յեռուն ու մեծ դարի միջով․
Յեվ քեզ նման ցանկանում եմ, քո հանգերով ճարտար ու ճոխ
Յերգել փառքը, սրտի վառքը, ջահելական իմ վառ շնչով։

Այս աշխարհով հազա՛ր, հազա՛ր յերգիչ յեկան ու գնացին,
Փառքի անմար ծիածանով, քնարներով արեգնածին․
Բայց քե՛զ ահա ասում եմ յես, քե՛զ, պոետիդ անմահ մեծին․
Հատնում չկա կյանքիդ կրակ, հանճարասիրտ յերգիդ գանձին։

Դո՛ւ, ո՛վ հզոր յերգի վարպե՛տ, կապրես դարեր, դարեր
անվերջ,
Կյանքըդ ինչպես անքանդ յերկինք, յերգըդ ինչպես ծիածան
պերճ․
Կայծակ միտքըդ, միջնադարյան խավարակուռ ամպերի մեջ,—
Կռահեց խո՛րն իմաստությամբ կյանքի ամեն սկիզբ ու վերջ։

Անգոր յեղան քեզ խորտակել փեոդալներն արյունաշուրթ,
Անգոր յեղան ժանիքները միջնադարյան սրբերի սուտ․
Արեգնային հանճարը քո պատռեց չոքած խավարը մութ,—
Յեվ մեզ հասան մարգարտաշար քո խոսքերը վարժ ու հմուտ։

Քո քնարը քաղցրալար է և քո լեզուն պարզ ու արդար․
Ամեն մի վանկն, ամեն մի հանգ աստվածորեն պերճ ու ճարտար,
Այդ քո աչքն է, վոր սիրողի ամեն գաղտնիք գիտե կարդալ—
Կախարդական խորն արվեստով ու խոսքերով զառ ու զարդար։

Հանճարի պես պայծառ ու խորն ես նայել դու այն աշխարհին,
Ու պատգամ ես տվել ամեն անկեղծ սիրող սիրահարին․



Տեսնում եմ արդ, այն մթամած, ասպետական հեռու դարին՝
Փայփլում ես, վառվըռում ես, ինչպես գարնան արևն արին․․․

Քեզ գերել ու կախարդել եր Թամար արքան սիրունատես,
Ծակել սրտիդ վահանն ամուր թարթիչներով իր սրտակեզ․
Յերգում եյիր ջերմին յերգեր՝ սիրո յերգիչ Հաֆեզի պես,
Բայց նա, ավա՛ղ, հարուստ եր շատ, իսկ դու աղքատ,
չսիրեց քեզ։

Դու լաց յեղար ու խնդացիր քո ամեն մի հերոսի հետ,
Խոսքըդ այնպես տեղ է հասնում, հանց արձակված անվրեպ նետ․
Մերթ յեղար դու լեռան աղբյուր, մերթ փրփրուն ջրվեժը վետ,
Յեվ բարության մեծ ուղենիշ, և չարության խիստ հակամետ։

Դու յերգեցիր հսկայազուն Տարիելի բախտը չվառ,
Ավթանդիլի բազուկն հզոր, Թինաթինի պատկերը վառ,
Դարեջանի դեմքը լուսե, Ռոսթեվանի մտքերը մառ,
Զքնաղ Թամար արքայուհու պերճ հասակը նռնենի ծառ։

Յելնում է քո ամեն տողից մի խորախոր իմաստություն,
Ամեն տողում կա տխրություն կա՛ և պայծա՛ռ զվարթություն,
Հանճարավոր անմահ յերգիչ, միտքըդ՝ խորը, սիրտըդ արթուն,
Միշտ հակամետ չար խոհերի, և զորավիգ հերոս մարդուն։

Քո հայրենի պերճ ափերից հասար մինչև Հելլադան հին,
Հաստեց քո մեծ միտքը պայծառ Արիստոտելն աստվածային,
Վորքան խորն ու մարդկայնորեն նայում ես դու կյանքին, մահին,
Ադամանդյա նեցուկ սրտի—մարդու ամեն դժնի պահին։

Քո մեծ յերգում հորդում է սերն Հնդկաստանի ջրերից հորդ,
Ինչ մարմարյա Հոմերոսի, ինչ ջերմաշունչ Ֆիրդուսու մոտ,
Ընդդեմ չարի դու ծառացած, ընդդեմ կյանքի սև ստվերոտ,
Արդարությա՛ն դու խարազան՝ քո մեծ յերգի տողերով տոք։

Քո ամեն մի տողից ահա Վրաստանն է ժպտում պայծառ,
Ամեն մի բառն ամբրոս ու մուշկ, ամեն հնչյուն—կրակ է վառ,

Թեև գլխիդ ճզվում էր չար միջնադարյան կամարը մա՛ռ,
Բայց քո կյանքը հողմի առաջ մնաց վորպես անխորտակ ծառ:

Դարըդ տվեց քեզ և՛ նոշան, և՛ սիրտ ծակող բռնցքյա տեգ,
Յեվ ընթացար փառքիդ ճամբով, և կնթանաս դու բարձրանեգ,
Յեվ չի նստի կյանքիդ վրա և վոչ մի ժանգ, և վոչ մի մեգ.
Յեվ հաղթական կշեփորես յերգըդ կյանքի մի ծեգից—ծեգ:

Հար կհոսի յերգիդ հորդուն գետը զուլալ ու մարգարտի,
Ալիքներով քաղցրակարկաչ, կոհակներով պարզ, հակընթի,
Սերըդ սրտում ժողովրդիդ—մի թանկագին քար ագաթի,
Յեվ չի փշրի ժամանակը կյանքիդ ժայռը գրանիտի:

Յեվ կմնա:—Յեվ դեռ կգան, սերունդները ալիք-ալիք,
Դեպի արձանդ անձեռագործ, ավելի մեծ փառքըդ գալիք.
Ինչպես Հոմեր ու Ֆիրդուսին՝ դեռ մարդկության ունես տալիք
Մտքի ծարա՛վը հագեցնող յերգիդ աղբյուրն իմաստալիք:

Ինքդ քո մեծ յերգով պիտի պատմես շողշող կյանքիդ մասին.
Յեվ դարերի յերկինքներում մնաս պիտի, վորպես լուսին,
Հար կըմնաս, հանց մնացին Հոմերոսը և Ֆիրդուսին.
Վողջո՛ւյն կառնես, վողջո՛ւյն կտաս Արեգակին ու Սիրիուսին:

Արդ, ջե՛րմ վողջո՛ւյն, հազա՛ր վողջո՛ւյն Վրաստանի բոցե
սրտին.
Վողջո՛ւյն նրա Ռուսթավելո՛ւն, հանճարասիրտ մեծ պոետին.
Վողջո՛ւյն նրա անմահության, վողջո՛ւյն նրա պայծառ յերթին,
Հազա՛ր վողջո՛ւյն հանճարաբեր վրացական ժողովրդին:



# ՏԱՂԵՐԳՈՒՆԵՐԸ

ՖՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Տաղերգունե՛րը ահա մեր,
Հանճարավառ դպրությունով,
Թողել են մեզ չքնաղ տաղեր
Ծիածանի յոթը գույնով:

Ահա նրանց տեսնում եմ յես
Տաղ յերկնելիս, վանքերում քար.
Յեվ տողերը արևակեզ.
Յեվ էջերը զարդանկար:

Մեկը՝ ահա խուցն է մտնում
Հագին սքեմ, գլխին վեղար,
Յեվ սկսում սրտի մթնում
Սիրո անձրև առատ տեղալ:

Յեվ անձրևի հորձքից հետո
Բացում վարդերը հուրհրան.
Խորը խոցված սիրո նետով
Սեր—բլբուլը թառում վրան:

Մեկը՝ դեղին մոմի առաջ,
Ձեռքին թեև խաչ ու բուրվառ՝
Արձակում է տխուր հառաչ,
Ընթացք տալիս մտքին չվառ:

Տեսնում է մի մերկամարմին
Դյութիչ կույսի հրահրուն,
Սիրո սրտի նման ջերմին,
Յոթն արևով վառված գարուն:

Մեկը՝ հայացքն հառած հեռուն,
Զմրուխտավառ արոտներին,
Թափ է տալիս սրտի յեռուն,
Անհատնելի կարոտներին:

Մեկ ուրիշը գիշեր ու զոր
Աղոթում է, բայց սրտի տակ
Տրոփում է տրոփով խոր
Աշխարհիկ կյանքը բովանդակ:

Այսպես, նրանք շարքով անվերջ,
Ցե՛վ անվանի, և՛ անանուն.
Մտքիս աչքում, ցոլքերով պերճ
Գալիս են և անհետանում:

Բայց նրանց մեջ, ինչպես մի լեռ,
Ինչպես կանգուն, հսկա մի սար,
Բարձրանում է հանճարաձեռ
Մեծ Ֆրիկը հրաքանքար:

Նա, վոր ճայթեց կայծակնաշող—
Ցեվ սարսըռաց աստվածը դև,
Անեծք կարդաց մարդուն տիրող,
Ըմբոստացավ չարության դեմ:

Մեծ Ֆրիկը միտքը վորի
Շահաստաններ տեսավ բազում,
Վոր անեցին որը որին
Ցեվ նյութեցին լաց ու հուզում:

Տեսավ գյուղեր աղքատացած,
Վոր ապրեցին սով ու սոսկում.
Տեսավ ազահն արագընթաց
Շեղջ է շինում դեղին վոսկու:

Մեկը նզմում ծանրակրունկ,
Վոր մեկելը փող մի պղինձ,



Չունենա՛, իսկ չնչին հուլունք,
Ու լաց լինի դառնաթախիծ:

Տեսավ նրան, վորն անարդար,
Հենված ուժին դաժանակամ.
Խլում է—խեղճ ճորտ ու ճարտար—
Մարդուց վերջին շապիկն անգամ:

Ցոփ ու շվայտ վանքերում քար
Ինչպես հողմն է հողը ավլում
Վանականն է բութ, ապիկար,
Իր կրքերի մեջ թավալում:

Ցեվ գալիս են անվերջ, շտապ,
Կարավանները վոսկեբերք,
Կտրում հյուսիսն, հարավը տապ,
Ցե՛վ արևմուտք, և՛ արևելք:—

Մի կողմը՝ ծով հարստություն,
Մի կողմը լաց ու աղաղակ,
Հայրը իրա միակ վորդուն
Գրավ դնում հարկի տեղակ...

Տեսավ բոլորն, ու կսկըծաց
Մեծ Ֆրիկը հանճարաձեռ.
Իսկ վերևից, աչքերը բաց,
Լուռ դիտում եր աստվածը ծեր:

Ցեվ ո՞վ եր կարգն այդ սահմանել—
Հին աշխարհում այն դառնահեծ,—
Աստված կոչվածը մարդակեր,
Վորին գլուխ չխոնարհեց:—

Վորին ծաղրովն իր սպանիչ
Ծաղրեց Ֆրիկն, ասելով թե՝
Մա՛րդն է մարդուն թողնում անինչ,—
Նույն աստըծու աչքերի դեմ:—

Ո՛, հանճարեղ այդ տաղերգուն
Գրելով իր ըմբոստ արյան
Կաթիլներով,— մնաց կանգուն
Դպրության մեջ միջնադարյան։—

Մնաց այդ մեծ դպրության մեջ
Ինչպես հսկա, վիթխարի սար,
Իր տաղերո՛վ փողփողենեջ,
Իր մեծ սրտով հրաքանքար։



# ԹԱՆԿԱԳԻՆ ՀՅՈՒՐԸ

Имена в семье великой
В семье вольной новой,
Не забудьте, вспомините
Добрым, тихим словом.
**Т. Шевченко**

Ուկրաինական մի տրտում
Յերգ իմ շուրթերին՝
Վերադառնում եյի տուն
Յես ուշ գիշերին.
Հանկարծ, սեղանի մոտ իմ,
Թիկնոցով շքեղ,
Տեսնում եմ մի մտերիմ
Մարդու քավարելս,
Դեմքը այնքա՛ն ծանոթ է,
Այնքա՛ն վեհ ու պերճ,
Յերազո՞ւմ եմ տեսել, թե՞
Իրականի մեջ։

Ու ժպտում ենք մոտեմոտ,
Իրար թափանցում,
Իրար խառնած սեր, կարո՛տ,
Խինդ ու հիացում.
Նա վարպետ ծերունազարդ,
Յեվ յես աշակերտ,
Կա մի թանգ կապ հարազատ
Մեր մեջ հին ու սերտ։
Կապո՛ւյտ, կապո՛ւյտ և անմեգ
Աչքերից նրա
Ցոլում եյին շող ու շեկ
Խուրձեր ինձ վրա։
Նա շրջել եր հայրենի
Ուկրաինան վողջ,

Տեսել էր ջահելների,
Կույսերի բողբոջ,—
Վորոնք վոր հագնում են պերճ,
Ծաղկավառ գարուն,
Վորոնց ծով աչքերի՛ մեջ
Սերն է հուրհուրում․
Մանուկների խլրտուն,
Ժիր ու նորակամ,
Վոր զարդարում են խնդուն
Հողն Ուկրաինական։

— Վարպե՛տ, ասի յես սիրով,
Ինչ լա՛վ, վոր յեկար,
Քո զալստյան հույսերով
Մնում էր յերկար՝
Մեր յերկիրը յերջանիկ
Ու դրախտային,
Վոր նման է սիրելի
Քո Ուկրայնային,—
Իրար նման անցյալում—
Բախտով ու յերգով,
Ցեվ Ներկայո՛վ մեծանուն,
Ցեվ մե՛ծ Գալիքով։

Ու մի սեղան բացեցի
Սրտի նման ջերմ,
Վորին մեր Հայաստանի
Աշունն էր իջել։—
Վեր բարձրացան սրտաբաց
Բաժակները հիր,
Բաժակներում ամփոփած
Մեր սի՛րտը կարմիր․
Ու խոսեցինք անդադրում,
Խոսեցինք անվերջ,
Հայացքը մի հայացքում,
Սիրտը սրտի մեջ։



Նա նայեց ինձ անայլայլ
Ցեվ ասաց սիրով,—
— Կյանքը ա՛յլ է, սերը— ա՛յլ,
Ցեվ ա՛յլ հույսերով․
Տեսա իմ Ուկրաինան,
Ցեվ Դնեպրը խոր,
Հնչում էյին խնդության
Հազար յերգ ու խոհ․
Զլսեցի յես տրտունջ,
Վո՛չ մի ծանըր հեվք,
Ցեվ հառաչի վո՛չ մի շունչ,
Ցեվ տխրության յերգ։—

Հո՛ղն իմ, հո՛ղն իմ հայրենի
Փոխվել է այնքան,
Վոր անգամ հազիվ գտա
Ճանապարհն իմ տան։—
Լիմոնագույն լամպերով,
Լուսե–լուսալիք,
Ուկրաինական ստեպը
Թվաց ինձ յերկինք․
Կատարվել է յերազը
Իմ նվիրական,—
Չի՛ լալիս մայրը Դնեպրը՝
Գետը մայրական։

— Քո հայրենիքը, վարպե՛տ,
Մեծ ու բոցավառ,
Դարձել է այն՝ ինչ ինքդ
Տենչում էյիր վառ։—
Դու, վոր, յերգով անվհատ,
Վառեցիր ցնծուն՝
Ու մղեցիր դեպի մարտ
Ճորտ ուկրաինացուն․
Դու, վոր վառած զայրույթի
Բոցեր կրծքիդ տակ՝

Ատում էյիր տմարդի
Ցարին սպիտակ…
… Հետո… ինչե՞ր էլ չանցան
Լայն ստեպներով,—
Բատկո Մախնոն ավազակ
Ու շուն Շկուրոն․
Անվանի և անանուն
Ու. հեթման ու պան,
Պահ մնաց՝ Ուկրաինայում
Մեռներ ամեն բան…
Բայց յելան հզոր ի զեն,
Կամքով հրահոս,
Մեծ ռազմավար Ֆրունզեն,
Շչորսը հերոս։

Ցեղավ ճակատ ու պայքար,
Մեծաշռինդ յերթ
Ցեվ առհավետ վայր ընկան
Գայիսոն ու բերդ…
Այն, վոր յերգել էյիր դու
Ցասումով մի օր,
Վոր Դնեպրը լինի էլ
Ավելի՛ անդորր․
Ցեվ ավելի՛ գրավիչ
Գիշերը անհուն,
Գիշեր, վոր ծո՞վ է թովիչ
Քո Ուկրաինայում։

Արդ, յերբ նորից գնաս տուն,
Անցնես դաշտերով,
Քայլես, վորպես խնդություն,
Դնեպրի ափերով,
Կլսես վոր հնչում է
Կոբզարըդ հուժկու,
Ծերերը ականջում են,
Մանուկներն յերգում—
Քո յերգե՛րը շառաչուն,


Քո յերգե՛րը վառ,
Քո յերգե՛րը հրաշունչ
Արևից պայծառ։

Կունկնդրեն քեզ սիրով՝
Խնդությամբ, վարար,
Այս աշխարհը պարդարող
Տանըրմեկ յեղբայր։
Կլինի տո՛ն, ցնծությո՛ւն
Դնեպրի ափերում,
Արարատից մինչև ցուրտ
Սիբիրի հեռուն․
Ժողովուրդները հախուռն
Կգան հորդահոս
Դեպի յե՛րգըդ քաքախուն,
Արձանըդ բրոնզ։

Կանգնեց վարպետը այնժամ․
Պարզեց ձեռքն արի,
— Բարի գիշեր, բարեկա՛մ,
Մնացիր բարի։
Ու սեղմեց նա ցնծազին
Ու ցնծուն ժպտաց,
Ու հեռացավ մեր բակի
Ճանապարհով բաց․
Ու հեռացավ, լույս դեմքին
Սե՛ր, ժպի՛տ ու հո՛ւյս։
Ու կանգնեց տանըս շեմքին
Վարդյա արշալույս։

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Վորպես յերազ մանկության, առավոտյան ցնորք—նինջ՝
Ահա նորից տեսնո՛ւմ եմ քո արծաթյա դեմքը ջինջ.
Դու քայլո՛ւմ ես փողոցով, ուսիդ մազերը հեղված,
Վորպես գողթան հի՛ն գուսան՝ ազնվությամբ ջրդեղված.
Սահմանազիծ նո՛ր յերգի, քնարական դու նո՛ր ձայն,
Շողուն, վորպես սիրո ցող, գեղուն, վորպես շեկ հնձան,
Տրտում սարյա՛կ աղեկեզ, վոր թագչում է բնում խեղճ,
Սակայն հույսի շողյունը և ապագան սրտի մեջ:

Հայկական մեծ քնարի բյուր լարից մի ազնի՛վ լար,
Վոր յերգեցիր սեր ու վիշտ, մեր հին գյուղերը մթար,
Արտավազդին ահավոր, Վահագնին բոց խնդության,
Վոր հնորյա մեր վոգուն՝ չքացեց դուռ փրկության.
Յեվ լա՛ց յեղար, լա՛ց յեղար և արցունքներըդ հեղեղ
Թափվեցին քո յերեսին և մատներիդ մոմեղեն,
Յեվ ժպտացիր դու այնժա՛մ, յերբ յերկրում մեր բարձրաբերձ
Շռնդալի փրկության կարմրավառ Այգը բացվեց:

Արդ, կանգնի՛ր դու գեթ մի պահ իմ կարոտած աչքի դեմ,
Կանգնիր, վոր հին գինու պես քո ժպիտները խմեմ,
Լսեմ ձայնըդ սիրաշունչ, լսեմ շեշտը փանդիռին,
Ու գրկե՛մ քեզ, փաթաթվե՛մ, ինչպես բաղեղը ծառին,
Դու վարպե՛տ, յես աշակերտ, ու պոետներ մենք յերկու՝
Թող ընթանանք ուս-ուսի, գուրգուրելով մեկ մեկու:
Յեվ թող ազնիվ յերգերըդ զնգան անմեռ ու անշեջ
Մերունդների՛ սրտերում, հավերժության դաշտի մեջ:



# Խ Ո Հ Ե Ր

1

Մարդը հա՛ր կհիշի Նրան, վորքան վոր իր կյանքը անդուլ
Շարժվում է վորպես նյութ ու միտք և քանի աշխարհը կա դեռ,
Զի Նա յեր Մարդ դարձըրեց անուղի և անմարդ մարդուն,
Վորի վոգին ել վո՛չ վոք չի կարող այլևս բանդել
Յեվ վո՛չ մի կապանքով դժնի, արգելքով ու խրթին, ու մութ;—
Հողե այս մոլորակում, աշխարհում այս նորեկ ու լուրթ:

2

Յես գիտեմ, այնքա՛ն պարզ գիտեմ, ո՛, հավե՛տ ննջած Առաջ-
նորդ,
Վոր սարը մոտիկից է մեծ, իսկ մեծ— մեծությունը քո
Հեռվից է յերևում նաև, ինչպես ովկիանը ափից...
Արդ՝ յերբ չկաս դու, և մենք՝ քանի գնում ենք առաջ՝
Այնքան խորն զգում ենք, ապրում քո մեծ— մեծությունն
անմահ,
Ինչպես մաքից միտք հոսող մի լեգենդ տիեզերական:

3

Մարմարյա այս դամբարանում ննջում է Առաջնորդը մեծ,—
Հանգիստ է նա, ինչպես ահեղ ովկիանը փոթորկից հետո:
Լոկ այստեղ է մարդը զգում մահի զարկն և մոտ, և հստու,
Ցեվ պահ մի՝ անմեռը մեռած, և մեռածն՝ հավիտյան անմեռ,
Ների՛ր ինձ, անմա՛հ Առաջնորդ, ների՛ր իմ աչքին ու մտքին,
Զի կյանքը մահո՛վ է անմահ, զի վախճանն սկի՛զբ է կրկին:

4

Ո՜, հին ու դժոխք կյանքում թափանցած դու անմե՛ռ արև,
Մարդիկ քո շողե՛րն են խմում և մութը փոխում են լույսի·
Մեկ չէ և բյուր չէ խմողն արևի շեկ կաթ-դ անմահ···
Ցեթե քո շողշողուն շողքից չըմպեյի յես կյանքում մի որ՝
Կարո՞ղ եր իմ վոգին անցնել անդժվար մի շավիղ անգամ:—



5

Ցեվ չկա վոչինչ ինձ այնքան ոտար և զայրույթով լեցուն,
Վ,որքան այն մարդկանց անունն, յերբ մի որ կորցըրած զգաստ
Կշռույթը մտքի՛ և վոգու, իրենց իսկ սեփական ձեռքով՝
Կյանքին վերջակետ են դնում:— Այդպիսիք արժանի յեն միայն
Ընդհանուր պարսավի, քանզի, ժխտելով իրենց իսկ կյանքը՝
Ջգտում են աշխարհը ժխտել··· Մինչ աշխարհն՝ ամո՛ւր է
կրկին···

6

Ինչ վոր յերազել է մարդը իր մտքի մանկության դարում
Ու նրան թվացել հրա՛շք, յերազ և, անհասանելի՛,
Իրական է դառնում այսոր:— Վ,ողջո՛ւյն քե՛զ, պատմությա՛ն
գարուն:—

Ցեթե առաջին հերկըդ այսքան սերմեր է տալիս,
Ապա ամառըդ կլինի բերքառատ արտն այն,
Ուր մարդը բազմ՛ում անհրաշք— հրաշքնե՛ր կինձի միայն:

7

Դու վորքան շռա՛յլ ես, Պոե՛տ… Այդքան շռայլ չեն յեղել
Լեգենդար Հաթեմ-Թա՛յն անգամ և Հարուն Ալ Ռաշի՛դը
նույնիսկ:
Ո՛վ աշնան բեռնաբարձ այգի, այգեպան մեր յերկիրն ահա
Քեզ արև, հող ու ջուր տալով՝ կթում է սարքինադ անհատ,
Թողնելով վորթն իբրև դափնի և Բագոսը— քեզ անդավ ընկեր:—

8

Կյանքի վոչ ամեն գործը, բայց գործն այս մեծընթաց կյանքի
Լցնում է մեր հոգին հաճախ այնպիսի յերազով չքնաղ,
Վոր պահ մի՝ Գալիքը— գալիք՝ մարմնացած զգում ես արդեն…
Յերազը լապտեր է տեսնող… Յերազը կամուրջ է նաև
Ներկայի հայտ ափը զոդող Գալիքի աննկատ ափին:
Կյա՛նք, իմ քայլերը տա՛ր միշտ կամուրջո՛վն այդ ադամանդյա:



9

Մեկենասն իմ՝ Հայրենի՛քն է:—Ներբող՝ յես նրա՛ն եմ կարդում:
Չեմ կարող նորտի պես գնալ, ինչպես դափնեվոր հանճար
Վիրգիլն էր կեսարին գնում: Ո՛, մի՞թե պարզ չե ձեզ, մար-
դի՛կ,—
Վոր մայրը՝ յերբեք իր վորդուց— չի ուզում հատուցում անարգ:
Յերախտիքն ավելի մեծ է, քան բոլո՛ր հատուցումները.
Յես չեմ վճարում, միայն տալիս եմ առածիս դիմաց:

10

Շուշանը՝ առվակի ափին՝ տեսնում է ջրի մեջ իրեն:
Քնքուշն այդ զգո՞ւմ է, արդյոք, վոր ամեն մի անցնող ալիք
Տարբեր ձևով է առնում իրա պատկերը բյուրեղ,
Վոր անցնողն՝ անցյալ է դառնում, ծնելով անխուսափ գալիք:—
Չգիտե՛, իմանա թող լավ, վոր յերբ ջրին է նայում՝
Առաջին հայացքով արդեն—յերկրորդ հայացքն է պահում:

11

Տարբեր են սրտերը մարդկանց:—Ուրեմն սէրերն էլ՝ տարբեր:—
Ահա քեզ դը Սադը լպիրշ, ահա քեզ Սաադին մաքուր:
Չարիքն ու բարիքը կյանքը չի բաշխում հավասար կերպով.
Առաջինն՝ իշխողն է ծնել, յերկրորդը՝ խումբը այն մարդկանց,
Վորոնք կերտեցին կյանքն այս բախտով ու սիրով լեցուն:

Կյա՛նք, մի կա՛յծ տուր սիրո— սիրեմ Սաադո՛ւ նման:

12

Ո՛, դո՛ւք վարպետնե՛ր յերգի և խոսքի վարպետներ հզոր,
Հոմերո՛ս, Ֆիրդուսի՛, Գյոթե՛, Քուչա՛կ, Վերհա՛րն ու Նազո՛ն.
Թափում եք իմ մտքի հողին ձեր յերկնի աստղերը բույլ, բույլ,
Լսում եմ յես ձեզ միշտ, ինչպես՝ լսում է սանը իր րաբբո՛ւն:
Հյուրե՛ր իմ դուք ամենօրյա, թանկագին հյուրե՛ր իմ ազնիվ,
Յերգիս զորավիգ յեղեք՝— գեթ ձեր ստորոտն հասնի:



13

Որն այսօր ավելի՛ ուրախ,—ավելի թեթևքայլ անցավ.
Այսպես՝ լոկ զեփյուռն է անցնում շարժելով ու ծաղի՛կ, ու
սե՛զ.

Որն այսօր ուրախ է, քանզի, քո նոր հատուցումն յեղավ
Ժպտալ ինձ ա՛յն զվարթ ժպտով, վոր կյանքն է քեզ առատ
բաշխել:

Թաթիկըդ լոբիկի նման պահեցի արտի մեջ ձեռքիս,—
Մատներիս թուխ ցողունները՝ մինչ հիմա դալա՛ր են, դալա՛ր:

14

Հի՛ն կյա՛նք, դու ինձ շա՛տ ես տանջել, այնքան չի տանջել
նույնիսկ

Ահարկու, չար Քսանտիպոսն այն խեղճ Սոկրատին խելոք:
Դու շա՛տ ես ինձ տանջել··· իսկ յես՝ քո թույնով խորն
ուսանեցի:

Բազմաձայն և անդաշն վոգիդ, վոր հնից է յեկել ինձ հետ:
Կմեռնի քո անդաշն յերգը, և ի լուր մեծ վողիմպացու՝
Հանդարտ կիհնեն սարի և վոգու գագաթնե՛րը բոլոր:

15

Ինձ ընդմիշտ սիրելի կմնան քո թուխ աչքերը աղվոր,
Քո մանր ժպիտներն աղու, ամբողջդ՝ հմայի՛չ, թովի՛չ․
Դու կապույտ կոհակ կյանքի մշտահոս մեր նիրջուր ծովի,
Բա՛վ է, քի՛չ լցրու սիրով—իմ սիրտ որերը նախշուն։
Ձե՛մ կարո՛ղ․․․ Թե՛ խինդը, թե՛ վիշտն առա՛տ ես բաշխում։

16

Նվա՛րդ, քեզ յերգելը միայն դասական գրչի՛ն է վայել,—
Դեղեցի՛կ դու գեղեցկություն,—մեր զվարթ յերկնի տակ ծնված։
Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ յես քեզ, ինչպես Սափոյին՝ Ալկեն․
Ինչպես Աբելարը՝ չքնաղ Հելոյիզ այն բողբոջ կույսին։
Գիտե՛մ, ինձ կմնաս անմերձ։ Ցերջանիկ յերազում զոնե
Լինեյի՛, լինեյի՛ քեզ հետ,—հանց լո՛ւյսն է աչքի մեջ լինում։

17

Միգապատ մի ձմռան գիշեր, վոր միայն խենդն աստղագետի
Ներվերը կգրգռեր խիստ, յես իմ սեղանի առաջ
Նստած լուռ խորհում եյի սիրո և մահի մասին,
Յերբ հանկարծ ներս մտավ Մեֆիստոն և ասաց խորհմատ
ժպտով․—

— Ձե՞ս ուզում ուղեկից լինել․․․ Գրետխենը մեռավ թեև,—
Բայց կյանքը զույգո՛վ է իմաստուն։—Ո՛ն, գնա՛նք դեպի
Հելենան։

18

Իմ մեջ ընչազուրկ, բայց մեծ պապերիս արյո՛ւնն է պահված
Նրա՛նք են ինձ ավանդ թողել ոգնությա՛ն, պայքարի՛, պատվի՛
Մաքրաջինջ զգացումն այս խոր,—վոր մեր որերում արդեն
Ունի հուն և ընթացք պայծառ և հավերժ կյած է յերկրիս ։
Մեր Ներկան պայծառ է հիմա, և Գալիքը՝ նշված է հստակ։
Առաջնո՛րդ, ամրացրու վոգիս, վոր ընթացքս ընթանա վստահ։

19

Յերկու ճերմակ աղավնիներ, փոքրիկը՝ եզ, մեծն արու,
Սիրատարփիկ մի գարնան որ՝ գգվում եյին իրարու։
Գնդակն հանկարծ խոցեց սիրտը վարուժանի սիրատենչ,
Զույգ սպիտակ թևիկները թաթախելով արյան մեջ։
Ու նայելիս, յես խղճացի վո՛չ թե մեռած աղավնուն,
Այլ կենդանո՛ւն, թե վո՞նց պիտի տանի իր ցավը անհուն։

20

Յես նստեցի մենա՛կ, մենա՛կ դեղձենու թավ պարտիզում,
Բացի քեզնից՝ ուրի՛շ, ուրի՛շ, մարդու չեյի սպասում.
Բայց անօգուտ. չեկա՛ր, չեկա՛ր, ու մնացի մեն մենակ՝
Ժամադրման ծանո՛թ, ծանո՛թ հին դեղձենու ծառի տակ։
Ու յերբ լուսինն յելա՛վ, յելա՛վ, խնդրեցի, իմ փոխարեն,
Վոր շողերը թաքո՛ւն, թաքո՛ւն քո աչքերը համբուրեն։—



21

Ի՞նչ են ուզում հայացքները յերանելի մեր զույգից,
Մեր պերճ զույգից, վոր ման գալով՝ կաքավում ե հանույքից.
Դուք կուզեյիք ձեր ծործակին նաև աչքե՛ր ունենալ,
Մեխել կարոտ հայացքները, հմայվել ու հիանալ.
Ձեր աչքերի վարձն ստացա՞ք։ Ել մեր կողմը մի՛ նայեք,
Գոնե սրտի ձեր այրո՛ւմը, ձեր կարո՛տը խնայեք։—

22

Թանաքամա՛ն իմ փոքրիկ, սև–սաթ լճակ ես թվում,
Գրչիս, ձեռքիս մտերիմ, խոհիս, հույզիս հարազատ,
Դու ավազա՛ն հասարակ, ուր իմ սիրտն ե մկրտվում,
Թղթի դաշտում ցանելով մտքի ցորեն վոսկեհատ։
Թանաքամա՛ն, լսի՛ր ինձ, աղաչում եմ սիա քեզ,
Իմ յեղեգնյա գրիչը դալա՛ր պահիր մշտապես։—

# ՀԱՅՐԵՆՆԵՐ

## (ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԳԵՐ)

## ՊԱՐՍԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարցմունք արավ մայրն աղջկան.
Ճերմակ թուշըդ ո՞վ կարմըրցուց,
Ճերմակ թո՞ւշըս, ա՜խ մայրի՛կ ջան,
Մասրենու փո՛ւշը կարմըրցուց:

Զորանար եդ մասրի փուշը,
Զորանար չար լեզվի նման,
Վոր չարուներ քո եդ թուշը,—
Ճերմակ թուշըդ—վարդը վրան:

Մի՛ անիծիր, ա՜խ, մայրի՛կ ջան,
Դու չե՞ս պաչվել ջահելներուց.
Ճերմակ թուշըս—լալ ու մարջան—
Իմ կտրին յա՛րը կարմըրցուց:

Դաշտից կուգաս, ա՛յ անուշա՛կ,
Կուգաս այգուց, կուգաս ձորուց.
Քաղել ես վարդ ու մանուշակ,
Հոտ կթափվի քո ձեռներուց։

Շա՞տ տի մնամ յես յերերուն,
Չես հեռանում դու իմ մտեն.
Ախ, ենպես եմ յես քո սիրուն,—
Վոնց վոր մոմը—կրակի դեմ...



Դու վարդի թուփ, յես նուշի ծառ,
Մի պարտիզում մենք պիտեյինք.
Հենց վոր ուրախ գարո՛ւնը գար,
Ծաղկած՝ իրար կուշտ դիտեյինք.
Հենց վոր աշո՛ւնն իջներ տրտում,
Իրար գրկած՝ դառնայինք տուն։

Ասի՝ յե՛կ, տամ քեզ մի նուռ,
Մեջը ինչքան հատ լինի՝
Ամեն հատին մի պաչ տուր,
Ավելին չեմ ընդունի։—
Ասաց՝ տղա՛ դու, հիմար,
Բաշվի՛ր, նուռդ ա՛ռ, գնա՛,
Թե վոր հատին մի պաչ տամ՝
Մեջտեղը սե՞ր կմնա…



Մի մեծ սխալ կատարեցի,—
Գեշից մի պաչ ուզեցի յես.
Գեշն էլ նազեր ծախեց ինձի,
— Ջե՛մ տա, անունըս կավիրես։
Աղվորն ասաց դեմի դռնից,
— Ի՞նչ ես ուզում գեշից չնչին.
Պաչը ուզիր դու աղվորից,
Նա՛ գիտե հարգը կտրինին։—

Կարմիր վարդ կանա՛չ թփով,
Քա՞նի լամ յես քո հայով,
Քա՞նի մնամ խեղճ գերի՝
Կրեմ ցավի ծանըր լուծ․
Կսիրես՝ սրտո՛վ սիրի,—
Կշտացե՛լ եմ սուտ սիրուց։—



Տեսա յես մի աղվորիկի
Լրիվ լուսնի պես բոլորած․
Ասի՝ ա՛յ դու, քաղցրահոգի՛,
Քո սիրո՛վ յես մոլորած․
Ասաց՝ սիրի՛ր, բայց շատ մարդու
Իմաց մի՛ տուր գորգոռալեն․
Թող իմանանք սոսկ յես ու դու,
Թե չե՝ ձեռիցդ ինձ կխլեն…

Խեղճ սրտիկըս ալեկոծված՝
Խաբխըբում եմ մանուկի պես.
Բայց աչքերըս՝ գեղովդ ոծված՝
Դժվարությա՛մբ եմ խաբում յես.
Սիրտըս վուրքան կուզես՝ տանջի՛,
Առանց սրտի յես կմնամ.
Բայց աչքերըս մի պահանջի,
Վոր նայեմ ու չկշտանամ:



Թող, շուրթերով կարոտակեզ,
Պաչեմ, չե՞ վոր պաչն ե մնում.
'Նոր պոկվեցի քո գրկից յես,
Բայց աչքերս յետ են նայում:
Ենպե՛ս եմ քո սիրով վառվել,
Վոնց վոր ամռան ավազը տաք,
Վոր ո՛րն ի բուն, յերկինքն ի վեր,
Անճրկի յե նայում պապակ:

Կանգնել ես ձեր պատի տակ,
Ու ասում թե՝ «սիրի՛ր ինձ»·
Ի՞նչ է իմ սերը մենակ,
Յերբ սեր չկա քո կողմից։
Յերբ սերն յերկու կողմից է՝
Շաքար ու նուշ է խառնած,
Յերբ սերը մի կողմից է՝
Վոչ ապրած ես, վոչ մեռած։



Դուրս յելա լույս գիշերին,
Թուխ ամպն անո՛ւշ կցոլար·
Տեսա պառկած իմ յարին·—
Վրան ծածկոց կարմրավառ։
Մոտեցա սիրով ծարավ,
Կուրծքը բացել ուզեցի·
Նա՝ աչքով–ունքով արավ,—
Անց, տղա՛, հեռացի՛·—
Գնա, իրիկունն արի,
Թող մարդիկը քնանան·
Սերը արյո՛ւն կլինի,
Յերբ դրացիքն իմանան...

Գարնանային ձնհալում,
Ցերկու սարյակ, ճիչ հեռու,
Ճռվողում են, ծլվլում
Ցեվ փարվում են իրարու:

Համբուրվում են ու խալվում,
Անգետ չարի ու բարու,
Ճռվողում են, ծլվլում
Ցեվ գգվում են իրարու:

Ցես, խորհրդո՛վ անմեկին,
Հիանում եմ նրանցով,
Ցեվ լցվո՛ւմ է իմ հոգին
Անսեր սրտի նախանձով...



Լուսին մի՝ բոլորած յեկել՝
Կասե թե յարի՛դ եմ նման.
Ամաչի՛ր, ճաշվի՛ր, ա՛յ լուսին,
Վո՞ր տեղդ է իմ յարի նման.
Իմ յարը թուխ յերես ունի,
Թուխ ճակատ, թուխ ունքեր վրան.
Իմ յարը թուխ աչքեր ունի,
Թուխ բիբեր, թուխ արև վրան.
Իմ յարը թուխ շուրթեր ունի,
Թուխ բերան, թուխ բեխեր վրան.
Իմ յարը թուխ մազեր ունի,
Թուխ հասակ՝ թուխ բարդին վրան.
Ամաչի՛ր, ճաշվի՛ր, ա՛յ լուսի՛ն,
Վո՞ր տեղդ է իմ յարի նման:

Պաղ ջուր է բխում Բինգոլա սարից,
Բինգոլա սարի մամռապատ քարից:—

Յերկու թուխ աղջիկ, յերկու թուխ փերի,
Սափորները ուսին յեկել են ջրի:
Յերկու քաջ կտրին, ձիերը հեծած,
Բինգոլա սարից իջնում էյին ցած:
— Բինգոլա՛ սարի քնքո՛ւշ փերինե՛ր,
Ջուր տվե՛ք, անցնեն ծարավները մեր:
— Մեր ջուրը տաք է, լավ կանեք՝ չառնեք,
Շատերն են մեռել, դո՛ւք էլ կմեռնեք:
— Ա՜խ, տվե՛ք խմենք, թող մեռնենք մենք էլ,
Հաշվենք, թե մի որ աշխարհ չենք յեկել...

Պաղ ջուր է բխում Բինգոլա սարից,
Բինգոլա սարի մամռապատ քարից:



# ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԳԻՐՔ

## I

Ես, մանկության փայտե ձին՝ նժույգի հետ չեմ փոխի,
Ամենաթանգ գոհարի ու գույքի հետ չեմ փոխի,
Նրա չքնաղ որերի ակնթարթի ակնթարթն
Արքայական պերճաշուք գահույքի հետ չեմ փոխի:

## II

Ո՜ւյ մանկությո՛ւն, քեզնից միայն հո՛ւշ մնաց,
Իզո՛ւր ընկա քո յետևից, ո՛ւշ մնաց.
Ձեռք պարզեցի, որ քեզ բռնե՛մ գեթ մի պահ՝
Ափիս միջում միայն մի սուր փո՛ւշ մնաց:

## III

Ես քայլում եմ այս անտառով, ասես հրաշք հեքիաթում,
Ամեն ծառից. ծիլ ու ծաղկից արևի շողք է կաթում,
Ու մի վայրկյան թվում է թե՝ իմ մանկությունն է նորից
Խաղո՛վ, տաղո՛վ ու ծիծաղով ինձ ու իմ շուրջը պատում:

## IV

Ձերմակում են իմ մազերը: Ձերմակողը կիմանա,
Վոր որերի ծանրության տակ գլուխը չի դիմանա,
Երբ վոր բարձր լեռան գլխով փոթորիկներ են անցնում՝
Այնտեղ, վորպես անշինչ հետքեր, ձյունը շերտ–շերտ կմնա:

## V

Վո՜չ թե մահից, այլ սոսկալի ծերությունից եմ սարսում,—
Երբ, անձեցուկ, անկար հոգին՝ դողդողում է ու մրսում.
Մահը վոչինչ. ծերությո՛ւնը, ծերությո՛ւնը չլիներ,
Նա՛ յե, անտես, մարդուս չքնաղ ջահելությունը վորսում։

## VI

Լինենք թեկուզ բարեկամներ, լինենք թեկուզ նե՜նգ իրար,
Արև ու հող, ու ջուր լինենք, ու թշնամի զե՜նք իրար,
Ամեն վայրկյան թե հանդիպենք, բայց մի բան լա՛վ իմացիր,
վոր մի անգամ ենք հանդիպում այս աշխարհում մենք իրար։

## VII

Հանդիպեցինք իրար կրկին,—կպատահի նման բան,
Ես՝ բանաստեղծ, դու՝ շիք տիկին,— կպատահի նման բան,
Հանկարծ տղաս և դստրիկըդ սիրեն իրար, վոչ մեզ պես,
Նայենք նրանց ժամանակին,— կպատահի նման բան:

## VIII

Տղա՛ս, հարգի՛ր ծեր մարդուն, դո՛ւ էլ պիտի ծերանաս,
Քնած լինես, թե արթուն, դո՛ւ էլ պիտի ծերանաս,
Նա՝ ձյունածածկ մի սար է, իսկ դու՝ արև ու գարուն,
Նայի՛ր նրան զվարթ՝ուն, դո՛ւ էլ պիտի ծերանաս:



## IX

Ամեն մի մարդ— մի աշխարհ է, մի մտածուն տիեզերք,—
Վոր խոհեր ու հույզեր ունի, խնդություն ու յերգ ու վերք.
Այդ լինելով, կյանքն իմաստուն դարձնող մարդը սակայն,
Վոչ կենտրոն է, և վոչ առանցք, այլ անցում է ու յեզերք:

## X

Չի անցնի մարդն, ամեն անգամ, արդեն անցած հին ճամբով,
Վոչ մի անտառ, հավերժորեն, չի ծածկըվում մութ ամպով.
Ինչպես այն մեծ և իմաստուն բանաստեղծն է ասել դեռ,—
«Մի որ դու յես թամբի վրա, մի որ ծանրած ես թամբով»:

## XI

Այն շունչը, վոր շնչում ենք մենք՝ քիթ ու քիմքից չի կախված,
Ձիավորի հմտությունը ձիու թամքից չի կախված,
Գնացողը պիտի գնա, և յեկողը գա պիտի,
Անկայությունը աշխարհի— մարդու կամքից չի կախված:

## XII

Ջուր են վոմանք քեզ բամբասում, աղմըկահուն գետ ես դու,
Երկրի սրտից իմ սիրասուն— բխած անհուն գետ ես դու,
Նրանք միայն անձրևաջուր և հեղեղներ են միայն,
Հազարակունք ու հար հոսուն, հար մնայուն գետ ես դու:

XIII

Մարդիկ կան, վոր քարի վրա հերկ են հերկում, ի՞նչ վնաս,
Բանաստեղծ չեն, բայց անընդհատ յերգ են յերգում, ի՞նչ վնաս,
Քանի ասես դու այն չես, այն, ինչ կարծում ես ինքդ քեզ,
Յեվ ուժից վեր հազար գործի ձեռք են զարկում, ի՞նչ վնաս:

XIV

Հո՛ղ, ծաղիկներդ առնե՛մ,
Ցո՛ղ, շաղիկներըդ առնե՛մ,
Իմ բանաստեղծ ժողովուրդ,
Թող՝ տաղիկներըդ առնե՛մ:

XV

Այս աշխարհում և վոչ մի տուն չի կառուցվել ավազին.
Ե՛յ դու, խելո՛ք, համեստաբար ձգտիր միայն նվազին.
Փառքն աղմուկով ու թմբուկով ձեռք չի բերվում յերբեք,
Թեկուզ դու քեզ համարես մեծ, քան թե Աբու-Նուվասին:

XVI

Սի՛րտ իմ, սիրի՛ր. դեռ մեծ Գյոթեն տարեց մարդ էր ահագին,
Դանտեյական դափնի ուներ և քղամիտ կար հագին,
Սակայն մի որ Ամուրից նա կրակ խնդրեց սիրավառ
Յեվ անձնատուր յեղավ յերկու սև աչքերի կրակին:



XVII

Յերբ տեսնում եմ մեծաքանքար բանաստեղծին միշտ առկա՝
Ջերմանում է հոգիս համակ նրա ժպտից արեվկա,
Արևելքի իմաստությամբ, Արևմուտքի խորությամբ՝
Սիրուններին հավետ գերի հայ Սաադին է վոր կա:

XVIII

Բազում են մեր պոետները և յերգերը— անհատնում,
Ամեն մեկը իր յերգի մեջ նոր շեշտ ու ձայն է դնում,
Այս բազմության միջից մի որ ծնվի պիտի հանճարը
Յեվ գտնի այն՝ ինչ վոր հիմա փնտրում են ու չեն գտնում:

XIX

Յերբ կարդում եմ հանճարներին՝ համակվում եմ վեհությամբ խոր,
Յեվ խորհում եմ՝ բացել են ցարդ ի՛նչ գաղտնիքներ խորհըր–դավոր,
Բայց դեռ վորքան գաղտնիքներ կան, անլուծելիք կան լուծելի,
Վորոնք գալիք հանճարների մտքով պիտի բացվեն մի որ:

XX

Ազատ ծնվում և ապրում են, ապրած կյանքով հագենում,
Մեռնում, ապա նորից ծնվում— արթուն ժամին, թե քնում,
Յեվ, ամեն ինչ, հավերժահոս, իրարու հետ ձուլվելով,
Վերջիվերջո, մի անպարփակ միասնության են գնում:

XXI

Ձեռքիդ բռնած այս ծաղիկը— վորքա՜ն վա՛ռ է ժպտում քեզ,
Նայի՛ր, և մի վայրկյան հետո,— վորքա՜ն մառ է ժպտում քեզ,
Գույնով, բույրով նույն ծաղիկն է, կարծես վոչինչ չի փոխված,
Բայց սրտես հայացքիդ տակ՝ փորքա՜ն սա՛ռ է ժպտում քեզ:

XXII

Վոչ մի բանի չես հասնի դու, յեթե թևեր չունենաս,
Քո վայրեջքի մեջ հակոտնյա՝ յեթե դու վեր չունենաս,
Միտքը յերբեք սրտին մոտիկ և առընթեր չի լինի,
Յեթե կյանքին ներդաշնակվող գույն ու ձևեր չունենաս:

XXIII

Մարդ հունտ է հողում ընկած և պետք է վոր նա ծլի,
Ծլած ծիլն էլ հունտ է դառնում,— սկիզբ տալով նոր ծիլի,
Յեվ, անընդմեջ, միասնության խորքում իրար ժխտելով,
Թողնում է, վոր ժամանակը պտղավորված թավալի:

XXIV

Առավոտյան ցողն ու շաղը լույս արեգակն է քաղում,
Յեվ ջուրն ու հուրն իրար գրկած, ժպտում են ու ծիծաղում.
Թեև նրանք աչքից կորչում և անտես են դառնում մեզ.
Բայց կան, իրենց ձևը փոխած, այս բնության մեծ խաղում:



XXV

Մարդ, իմացիր՝ աշխարհը միշտ արևով չի վողողվի,
Յերկրորդ անգամ նույն տեղանքը նույն վոտքովը չի կոխվի,
Յեթե շարժումն էյակի մեջ ու նյութի մեջ չլիներ՝
Արևի տակ և վոչ մի բան չէր հոսի ու չէր փոխվի:

XXVI

Իսկզբանե. Գործն է յեղել, Գործն է կյանքը իմաստել,
Այդ ժամից է՝ Միտքը միայն մարդու մեջ խորը նստել.
Ստեղծագործ բազուկն է, վոր շունչ է տվել իրերին,
Դեռ անստեղծ Մտքից առաջ—ամեն Գործ՝ ձեռքն է հաստել:

XXVII

Մեծ Սաադին սիրեց մի դար, գրեց և՛ բեյթ, և՛ գազել,
Տարավ քնքշանք ու հոգեշահ փաղաքշանք ու նազեր,
Մահվան մահճում, թո՛ւյլ, դողդողջո՛ւն, գերեզմանի՛ն
ծերունին
Հիշեց բոլորն ու սկսեց սիրո մասին յերազել:

XXVIII

Անտառի և դաշտի վրա ահա գիշերն է չոքում,
Անհուն կամարն իր ճակատը աստղ ու լուսնով է զուգում.
Առանց ինձ նա—անխորհուրդ է, իմ գոյությա՛մբ է միայն—
Նա գեղեցկի հաղորդության տենչ ու յերազ բորբոքում:

## XXIX

Ես չեմ սիրում մենությունը և վոչ էլ կյանք անկռիվ,
Տաղտուկ օրեր, լացող յերկինք, տերևներ ցաք ու ցրիվ,
Կյանքը միայն իր իմաստը կռվի կրքում է պահում,
Վոր ընդգրկում է աշխարհը—անեզրական ու լրիվ:

## XXX

Ով չի կարող խորը ատել, սիրել յերբեք չի կարող,
Ով վոր հանցանք չի կատարել՝ ներել յերբեք չի կարող,
Ով ընթանա առաջընթաց հոսանքներին հակառակ,
Աշխարհին ու մարդկանց սրտին տիրել յերբեք չի կարող:

## XXXI

Յերևույթը, ո՛վ իմաստո՛ւն, մի՛ մասնատի, չես հասկանա,
Քո սուր աչքին ու խորն հոգուն մուժ կպատի, չես հասկանա,
Ամբողջն է լոկ հասկանալի իր հակոտնյա ընթացքի մեջ,
Խակ մտքին մի յենթարկի դու, ու մի դատի, չես հասկանա:

## XXXII

«Յե՛ս եմ, վոր կամ» ասում է նա․ «չիք ինձնից դուրս ամենինչ,—
Ինձանից են սկիզբ առնում ու սավառնում շունչ ու հինչ»․
Յեվ նեղ ճակատ այս հիմարի խավար աչքը չի տեսնում,
Վոր ինքն անցում և ողակ է, ու մենակ է, ու վոչինչ:

## XXXIII

Հոգի՛ս, սրտի մորմոքալի հառաչն ի՞նչ,
Ափը կրծող անցնող ջրի շառաչն ի՞նչ,
Ագահ գայլի ճիրաններում գալարվող
Հանկարծ ընկած յեղջերուի բառաչն ի՞նչ:

## XXXIV

Յերազիս մեջ, Հեգելի հետ վիճում էյի յես յերկար,—
Թե յե՞րբ պիտի կյանքն հասկանա մի վոտով կաղն այս անկար,—
Վոտքը՝ վոչինչ, ասաց Հեգելն, ալա՛ղ, կա՛ղ է նա մտքով,—
Իմաստունին՝ իմաստակն է, վոր զարկում է քարեքար:

## XXXV

Մարդը անթիվ թելերով—մեծ տարերքի հետ է կապված
Ամեն ինչը նրա մտքի ու ձեռքի հետ է կապված․
Իրը միայն ըմբռնելի շարժողությունն է փոխվող,
Ամեն կեղև իր հարազատ ընդերքի հետ է կապված:

## XXXVI

Խայյամն ասաց․ Այն շունչը, վոր արտաշնչում եմ հիմա՝
Յե՞տ է գալու նորից իմ մեջ, թե՞ տալու յե վերջը մահ․
Թե հեռանա, թե գա նորից, մեր կամքից չէ կախված այդ,
Մի վայրկյան մենք մեզ նման ենք, ու նման չենք մեզ նման:

## XXXVII

Յարըդ՝ լա՛վ էր, դրախտահա՛վ էր, Խայյա՛մ,
Մարդըդ՝ կա՛վ էր, հառաչ ու ցա՛վ էր, Խայյա՛մ,
Չհաշտեցրեց աշխարհի հետ քեզ—գինին՝
Քանզի դարըդ՝ քեզ համար՝ դա՛վ էր Խայյա՛մ:

## XXXVIII

Դու խմում ես բաժակներից Թալեսի և Դեկարտի,
Պլատոնի, և Հեգելի, և Ֆիխտեյի, և Կանտի.
Բայց դրանցից և ո՛չ մեկը մեծ Մարքսի պես չասաց թե՝
Պետք է փոխել աններդաշնակ աշխարհը ցավ ու բանտի:

## XXXIX

Ինձ դյութիչ է թվում ներմակ, լույս ամպերի ազատ չուն,
Յեվ լուսինը՝ կապույտ լճում՝ արծաթաթև մի թռչուն,
Լռության մեջ, տիեզերքը—ժամանակի զարկի հետ,—
Հոսում է հար ու ներդաշնակ, աղբյուրի պես կարկաչում:

## XL

Թեև մերթ-մերթ մթագնում եմ, բայց պայծառ եմ իմ խորքում,
Պտուղներով բեռնավորված—կանաչ ծառ եմ իմ այգում.
Քանի՛-քանի՛ քար զարկեցին իմ ճյուղերի՛ն, իմ բնի՛ն,
Բայց յես նորից մի անտառ եմ, և անծայր եմ իմ հոգում:



## XLI

Դու ժամ առ ժամ զորանում ես, իմ Հայրենիք հրածին,
Սահման չկա քո փառապանծ հաղթանակին ու փորձին.
Աբրահամը-Խաչակին ուզեց զոհել աստծուն,
Թե ժամը գա, միակ որդուս, չեմ խնայի քո գործին:

## XLII

Ժամանակն ու տարածությունն—այդ անունըդ կպահեն,
Յեվ գործը քո, գրիչդ ազնիվ, արդեն արդար վկա յեն,
Որ դարումն այս՝ դասակարգիդ հանդեպ յերբեք ու յերբեք—
Դու չես յեղել ու չես լինի և ոչ Հուդա, ոչ Կայեն:

## XLIII

Անթեյի պես աշխատել եմ կառչած մնալ մայր հողին,
Սեվեռել եմ մտքիս աչքը հավերժական քո շողին,
Բոլորի հետ, ո՛վ Առաջնո՛րդ, քայլել եմ յես ճակատբաց,
Ամբողջ ուժըս տված Յերկրիս՝ ամենահաղթ հաղթողին:

# ԲԱԼԼԱԴՆԵՐ

# ԼԵԳԵՆԴՆԵՐ

# ՍՏԱԼԻՆԻ ՁԵՌՔԸ

Ծեր պարտիզանը, գլուխը հակած,
Հիշողության խոր ծովն էր ընկղմել։—
Այնտե՛ղ էր... Ու բիրտ թշնամին հանկարծ
Առաջանալով՝ սկսեց սեղմել...
Ու մութ յերեկոն ցրտին, մարմարյա,
Ջոքեց Ցարիցին քաղաքի վրա։—

Քաղաքից դուրսը դարանել էր իր
Պարտիզանական ջոկատն ահարկու.
Ցեվ սրբազան մի դրոշակ կարմիր
Փողփողում էր դեռ լույսերի ներքո,
Ցերբ ահա իրենք հստատ լսեցին՝
Վոր Ստալինը գկա Ցարիցին։—

Ու հիշում է նա։—Վառ լուսաբացին,
Քաղաքից այն կողմ, սպասում էր լուռ
Ջոկատը պատրաստ... Ու յերբ թնդացին
Թնդանոթները, մի ահեղ սարսուռ
Անցավ անտառով... Ու զինված մի խումբ
Սողում, գալիս է առաջ, թումբ առ թումբ։—

Իսկ այդ սողացող խմբի յետևից.
Ինչպես մորեխի վիթխարի յերամ,
Առաջ է հորդում աջ ու ձախ թևից,
Հեղեղում դաշտը խրամ առ խրամ,
Խառնիխնաղանչ մի ամբոխ կատաղած,
Անտառի նման տեղահան յեղած։—

— Ե՛յ, կանչում է ինքն ու վոտքի յելնում,
Ինչպես վիթխարի Իլյան Մուրոմեց․
Խմբում ջոկատը իրա քաջանուն,
Յեվ, Իվանչուկի շեկ ու լայնամեծ
Յերեսին նայում… Ա՛յ, տեղ է տղի…
Ու նայում է սուր՝ յեկող հեղեղին։—

Չի շարժվում անգամ և վոչ մի ջերակ
Նրա յերեսին։ Հանդարտ է ու վեհ․
Արհամարանքի ցուրտ ժպիտի տակ,
Վոր նրան բազում մարտերն են տվել,
Մի դիրքից մի դիրք անցնում է կրկին,
Հաստատ հայացքով նայում ամենքին։

Յեվ ամրանում են մարտիկներն անահ,
Յեվ մոտենում է թշնամին ահեղ․
Յեվ սկսում են դիրքում ամրանալ․
Յեվ գնդացրով թշնամուն պահել,—
Վստա՛հ, անվրե՛պ, համա՛ռ, անզիջո՛ւմ։
Ե՛խ, դու շանվորդի կտրին Իվանչուկ։—

Ե՛խ, դո՛ւ․ Ստեփան Ռազինի թոռնիկ,
Քանի՛ անգամ ես դու յետ շպրտել․
Ու հնձել, ինչպես հասկերը ցորնի․
Քանի՛ անգամ ես նրանց խրատել․
Ու կխրատես նաև ա՛յս անգամ,
Մինչև մեծ ռազմիկ Ստալի՛նը գա։

Ստալինն, ինքը, հասկանո՞ւմ ես դու։
Ստալինն, ինքը, կհասնի շուտով,—
Հնչում են պետի խոսքերը հատու․
Ու գնդացիրը ահեղ վորոտով
Հնձում է, թափում նրանց շարք առ շարք։
Ընկածին նորն է հաջորդում արագ։—



Յեվ կրակում է Իվանչուկն արի,
Յեվ յեկող մարդկանց ծովը բյուրալիք,
Ինչպես ովկանը փոթորկի ժամին
Դեպի ափն հուժկու հորձանք է տալիս․
Մեկ նետվում է յետ, մեկ նետվում առաջ
Յեվ շուրջը լցնում վոռնոց ու շառաչ։—

Յեվ չար թշնամին միշտ առաջ հոսող
Հորդում է ինչպես թաթառը անզուսպ․
Յեվ նեղանում է նակատը կիսող,
Յեվ կանգնում մոտիկ, և այնքա՛ն ընդհուպ,
Վոր պետք է զենքը շպրտել անդին
Տուլալվելու պինդ նրա կոկորդին։

Դեմից հնչում են հայհոյանքներ սուր,
Վոռնոցներ վայրագ ու զարհուրելի․
Յեվ տարածության կապույտը լազուր
Լցվում է ծխով անտեսանելի,
Լցվում է փոշով այն ռումբերից, վոր
Պայթում են անվերջ, խիստ ու ահավոր։

— Յեկե՛ք, շանվորդիք, շուտ յեկեք, առա՛ջ․
Գոչում է հոգնած Իվանչուկն ահա․
Բայց դեմից գնդակ մի չարաշառաչ
Փռում է նրան յերեսի վրա,—
Յեվ պոկում նրա ձեռքը հրմտալից
Իր գնդացրի տաքը կոթունից։

Նա սեղմում է ձեռքն իրա սպիտակ,
Ձեռք, վոր տարիներ իր սիրած զենքի,
Քաղցի ու ցրտի, ու մրըրկի տակ,
Վարժվել էր կռվի ու հաղթանակի…
Ու վերջին անգամ ասում է լռին,—
—Պե՛տ, բարևիր մեր Մեծ Ստալինին…

Այնժամ, ո՛, ինչքա՛ն պարզ է նա հիշում,
Երբ իր դիրքից վազում է արագ,
Կորչում է թանձրը փոշու մշուշում,
Յեվ սրտապնդում,—ընկերնե՛ր, կրա՛կ·
Յեվ գնդացրով, հմուտ քաջաբար,
Մարդկային մի արտ տապալում է վար։

Ընկնում են մեկ-մեկ ջոկատիցն իր սեղմ,—
Ընկնում են մեռա՛ծ, ծա՛նրը վիրավո՛ր·
Յեվ ամրանում է ողակումը նեղ
Ավելի խստին, սև ու ահավոր·
Ահա ուր վոր է՝ թշնամուն անթիվ՝
Կհրավիրի թռունցքամարտի···

Յեվ յերբ վոր վերջին գնդակներն էյին
Թռչում թշնամուն պահելու համար,
Հանկարծ վորոտաց խոլ ու ամեհի
Ծանըր հրանոթն։ Այդ յերա՞գ էր վառ։
Յեվ չանցած մի քիչ, ահա մոտեցան
Զինավառ մարդկանց խմբեր քաջաձայն։—

Ե՛խ, դո՛ւք, ընկերնե՛ր։ Ե՛խ, դու, Իվանչուկ։
Ի՞նչ ասեմ յես այն գնդակին, վոր քեզ,—
Յեկավ դիմացից համառ, անզիջում,
Յեկավ ու այնպես մեկից մեկ զարկեց···
Վորքա՛ն յերջանիկ դու կլինեյիր,
Վոր Ստալինին գոնե տեսնեյիր։—

Տեսնեյիր նրան նժույգի վրա
Դեպի Ցարիցինը արշավելիս·
Յեվ կարմիր զորքին հպարտ, հուրհրան·
Վոր յեկավ, ինչպես հեղեղն է գալիս,
Յեվ մեր ջոկատին հանեց ողակից,
Քշեց թշնամուն անտառի տակից։—



Յես այնտեղ տեսա Ստալինին Մեծ,
Վոր հաղթանակով մտավ Ցարիցին·
Ուր ժողովուրդը—այնքան ջերմ ու մերձ
Ընդունեց նրան—մեծերի մեծին։
Ընդունեց նրան, ռազմիկին այն վառ,
Վոր Ցարիցինը առավ քաջաբար։—

Նա մի հասարակ շինել էր հագել·
Յեվ մեկ-մեկ իր սև բեխն էր վոլորում·
Ա՛յ, այսպե՛ս··· Յեվ իր սրատես աչքերն
Իմաստուն մտքեր էյին որորում·
Իմաստուն մտքեր մեծ յերջանկության,
Վոր զենքո՛վ խլեց, տվեց մարդկության։

Յես այնտե՛ղ ձեռքը սեղմեցի նրա,
Նա ժպտաց ինչպես ընկերն է ժպտում·
Ա՛խ, այն ժպիտը, ժպիտն հուրհրան,
Ճառագայթում է դեռ իմ ծեր սրտում,—
Վոգի յե տալիս ինձ նման ծերիս,
Վոր զենքը պատրաստ միշտ պահեմ ձեռիս։—

Նրա մեծ ձե՛ռքն է, ձե՛ռքն հզորագույն,
Վոր զրնգում էր այն որերում տաք·
Յեվ զրնգում է այսոր մեր կյանքում,
Յեվ ուժ է դնում մեր կրծքերի տակ,—
Յեվ մղում է մեզ, հաղթարի և քաջ,
Մի՛շտ դեպի առա՛ջ, մի՛շտ դեպի առա՛ջ···

## ՖՐՈՒՆԶԵ

Հեծած բարձրահեց նժույգն սպիտակ,
Ֆրունզեն կանգնեց Բելեբեյի տակ:

Կանգնեց Ֆրունզեն քաջ շտաբովն իր,
Կանգնեց հաղթական զորքերով կարմիր:

Ձգվում է ճակատն հեռու՝ մինչ Ուրալ.
Դեմը արնախում Կոլչակն ադմիրալ:

— Ընկե՛ր կոմիսար, ընկե՛ր կոմանդոր,
Զուսպ ասում է մեծ ռազմավարն անդորր.

Հենց որ լուսանա, ինչպես էլ լինի՝
Գիծը պիտ ճեղքել Բուգուրուսլանի...

Բուգուրուսլանից դեռ առաջ սուրալ,
Մինչև Չելյաբինսկ, Ուֆա և Ուրալ...

Շուրջը՝ լռություն: Ու գիշերը մութ
Աստղեր է ցանել կամարում կապույտ:

Բաց յերկնքի տակ, ուր չկա քամի,
Հանգստանում են զորքերը կարմիր:

Սակայն անքուն է շտաբը զգոն,—
Խորհում են անվերջ նրանք–յերեքով:

Յեվ ռազմավարի աչքերն իմաստուն
Մեխվում են ամեն կետի հաստատուն:



Կետեր, վորտեղից ձգվում է շղթան
Կոլչակյան զորքի՝ անտառի նման.

Զորք, վոր ունի սուր, թնդանոթ ու արկ,
Անգլիական հաց, ամեն հանդերձանք...

Սակայն ռազմավար Ֆրունզեն գիտե՝
Չի՛ հաղթի՝ գա ինքն Անգլիան յեթե...

Ու քարտեզի մոտ, ընկերների հետ—
Մեխում է իր թեժ միտքը, վորպես նետ,

Մերթ այս սև կետին, մերթ այն սև կետին,
Մինչև գիծը լայն—Բելայա գետի:—

Մինչև Չելյաբինսկ, Ուֆա և Ուրալ,
Վորտեղ չոքել է Կոլչակն ադմիրալ:

Ու խորանում է Բելեբեյի լուրթ
Գարնան գիշերը աստեղակապույտ:

Բայց, մոտ է, շուտով վահանապղինձ
Արևը կելնի ծով տափաստանից.

Կշարժվի զորքն իր—ով լիանի նման
Բելեբեյիցը մինչև Բուգուլման.

Մինչև Չելյաբինսկ, Ուֆա և Ուրալ,
Վորտեղ չոքել է Կոլչակն ադմիրալ:

Ու լուռ՝ խորհում է ռազմավարը մեծ,
Հանկարծ հնչում է հեռախոսը մերձ...

Ու գիշերվա մեջ խորին լռության՝
Հրաման է տալիս ստահակ Հուդան:—

Հուդան, մատնիչը,—քսու Տրոցկին,
Վոր Ֆրունզեն այդ ճակատը լքի...

Նախանչի իսկույն հենց գիշե՛ր, մութին,
Ջանցնի սահմանը Բելայա գետի...

Կանգնած է ծագում ռազմավարի մեծ,
Պայծառ, բոլշևիկ հզո՛ր սրտի մեջ:

Խփում են նրա քունքերը՝ տապով,
Եվ, պատասխան է տալիս շտապով:—

— Եվ ո՛չ մի անգամ:—Դուք դավո՛ւմ եք մեզ:
Ճակատը լքել անկարող եմ ես...

Կախում է ապա հեռախոսն իսկույն,
Ալեկոծ մտքեր սրտում ու հոգում:

Ինչպես սևակնած կայծակածին ամպ
Լցվում է նա մի խորին բարկությամբ:—

Թողնել սպիտակ Կոլչակն ադմիրալ
Իր ձեռքում պահի հանքերը Ուրա՞լ...

Անկարելի՛ է: Այդ դավ է միայն
Ընդդեմ մեծազոր իմ կուսակցության·

Խաղալ բախտի հետ մի մեծ ճակատի՞:
Ե՛ս, դու, սրիկա՛, ե՛ս դու շանվորդի՛...

Ու քարտեզի մոտ, նա խռովահույզ,
Սպասեց մինչև առավոտը լույս:—

Սպասեց, մինչև բացվեց այգը վառ
Հեղեղեց ովկիան տափաստանը մառ:

Բելեբեյի գիծն յերևաց հստակ
Ու ձգվեց մինչև Բուգուլմանի տակ:



Մինչև լեռները հարուստ Ուրալի,
Ուր զորքն է չոքել չար ադմիրալի:

Կանգնեց ռազմավարն ու խրոխտ ձայնով
Հրաման տվեց իր զորքերին ծով:

Ու զորքը յելավ թաթառի նման,
Առավ Բելեբեյն, առավ Բուգուլման·

Գետը Բելայա, Ուֆա և Ուրալ,
Եվ հաղթանակով սկսեց սուրալ

Լեռներով բարձր, դաշտերով կապո՛ւյտ,
Մինչև Սիբիրի ծայրավերջը ցուրտ:—

# ԴԵՊՔ, ՊԱՏԱՀԱԾ ԲՈՒԴՅՈՆՆՈՒ ՀԵՏ, ՎՈՐ ՊԱՏՄԵԼ ԵՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻՆ

— Վլադիմիր Իլյիչ,
Պատմեմ ձեզ մի դեպք,
Դեպք, որ հնար չէ
Մոռանալ յերբեք:

Իլյիչը ձգվում
Յեվ, ուշքը լարած,
Ժպտում է մեղմիկ,
Աչքը կկոցած:

— «Հեծած սևուկ ձին
Գնում էր դաշտով—
Սեմյոն Բուդյոննին
Մի եսկադրոնով:

Գնում էր, փռված,
Անծայր ստեպով·
Փոշու մեջ կորած,
Ծարավի տապով:

Վոչ շունչ կար այնտեղ,
Վոչ մարդ–մարդահոտ,
Վոչ մախորկա կար
Ու վոչ ծխախոտ:

Բայց ահա մոտիկ,—
Սատանի տարած
Կլոր կուրգանից
Ցընցվում է հանկարծ—



Մի ծեր գեներալ
Բեխավոր ու շուք·
— Բարև՛, զինվորնե՛ր,
Վո՞ր զընդից եք դուք:

Բուդյոննին, մտքում,
Ասում է «հիմա՛ր»:
— Քառասուն յերկու:
— Ձիաներից վա՛ր:

Ու գոհ է մնում
Գեներալը խենթ,
Հրամայում է,
Վոր նստեն, ծխեն:

Ու բարձրանում է
Ծուխն ոլոր–մոլոր,
Ամպի պես կանգնում
Գլխներին բոլոր:

Բուդյոննին խաղում
Թավ բեխերի հետ,
Ու ծերուկի՛ն է
Նայում կիսախեթ:

Խաղաղության մեջ
Ժամեր են հոսում,
Խոզ գեներալը
Դառնում է, ասում·—

— Շա՛տ լավ եմ ջարդում:
Հին ձեռքը վարժ է:
Հարյուր հատ կարմիր
Տասնյակըս չարժե:

Այնպե՛ս եմ չոքել
Դրանց կոկորդին...
Բուդյոննուն տեսա՝
Փախավ շանվորդին:

— Փախա՞վ... Ա՛յ քեզ բա՛ն...
Ու Բուդյոննին յուռ՝
Ծակում է ծերին
Իր աչքերով սուր:

Ժպտում է ծերը
Բութ ու անիմաստ,
Բեխերն վոլորում,
Ցըցում փորը հաստ:

Նայում, քթի տակ
Գոռոզ փնթփնթում.
Նայում է տխմար
Ու անվերջ ժպտում...

Ժպտում... Ու հանկարծ
Տեսնում է ահա,
Վոր գալիս է մի
Հեծյալ աժդահա:

Նրա յետևից,
Ինչպես հորդ ովկիան,
Բուդյոննու հզոր
Հեծյալ դիվիզիան:

Ու զունատվում է
Գեներալը ծեր,
Կրծում է բեխը,
Դողում վոտ ու ձեռ:



Սպիտակ եսկադրոնն
Անցնում է իրար
Շշմած, վայրենի,
Դեղին ու մռայլ:

Այնժամ Բուդյոննին
Հեգնոտ, ժպտերես,
Ծեր գեներալին
Ասում է այսպես.—

— Ձեր եսկադրոնը
Մե՛ծ հոչակ ունի...
Ներկայանո՛ւմ եմ,—
Սեմյոն Բուդյոննի...»

. . . . . .

— Ա՛յ քեզ քաջությո՛ւն,
Հրաշալի՛ դեպք՝
Յես ե՛լ չպիտի
Մոռանամ յերբեք.

Ու ծիծաղում է
Իլյիչը քահ-քահ:
— Բոլշևիկներին—
Պարտություն չկա՛:

# ՌՄԲԱՋԻԳԸ

I

Կարմիր մարտիկը շտապ մտավ տուն
Յեվ պատվիրեց իր տասնամյա վորդուն,—

— Ե՛յ Իլյա՛, տղա՛ս, նահանջում ենք մենք
Քաղաքը կմտնի աղմիրալը նենգ:—

Սպիտակները ուր վոր է՝ կգան:
Նախ սիրտ տուր մորըդ՝ իմ պառավ կնկան,

Ինքդ էլ ղոչա՛ղ կաց:— Տե՛ս ի՛նչ եմ ասում՝
Քեզ մի գործի յեմ յես դնել ուզում.

Կառնես էս ռումբը, թաքուն, անվտանգ,
Գնաս, կպահվես Մեծ Կամուրջի տակ.

Յերբ էշելոնը լինի անցնելու՝
Գցի՛ր և ինքըդ սլացիր հեռու:

Ի՛նչ է, քեզ պիտի միշտ տա՞նձ նվիրեմ..
Ե՛խ, դու, շա՛նվորդի, դե՛, յեկ, համբուրեմ...

II

Յեվ Մեծ Կամուրջի խորշում անարև,
Փոքրիկ Իլյան է լռին ծվարել:



Մութը պատել է յերկինք ու գետին,
Լսվում է միայն խուլ ձայնը գետի:

Գործում է նրա միտքը հուրհրան,—
Ինքը, Լե՛նինը կընդունի իրան.

Կընդունի, կասի՝—քա՛ջ ես դու, Իլյա՛,
Ի՞նչ նվեր կուզես ինձանից հիմա:

Ի՛նչ, այ թե ի՛նչ: Ու հանկարծ, հանկարծ
Դղրդում են ցուրտ ռելսերը պառկած.

Դե, Իլյա՛, դու քա՛ջ, հապա տեսնեմ քեզ,
Հորըդ չպիտի թողնես սեվերես:

Ու թագստոցից նա վեր է կենում
Ձեռքին ռումբն, հետո նա մի վայրկյանում՝

Բո՛՛ւմմ, վեր է հանում քար, յերկաթ ու հող,
Անիվ, մարդ ու ծուխ գետի մեջ թափվող...!

III

Նույն ժամին հսկա մի հզոր բանակ
Քաջ Իլյայի՛ հետ մտնում եր քաղաք...

# ՄԱՐԱ ԵՖՐՈՍ

Թռչում է լայն տափաստանով մի սև նժույգ անագին,
Թռչում է զին, և կանգ չկա թռիչքի սուր սլացքին․
Ինչպես մտքի արագ ընթացք՝ թռչում առաջ ու առաջ,
Իսկ յետևից—կարկըտաբեր գնդացըրի խուլ շառաչ․
Յեվ ահա սև ձիավորը և ձին կորած փրփուրում՝
Սուզվեն պիտի նոճիների հնադարյան անտառում։

…Դեռ յերկու որ չկա միայն, յերբ մի կռվի տաք ժամին՝
Շատերի հետ նաև նրան գերեց անարգ թշնամին…
Ատամները կրճըտացող —գեներալը զարմացավ․
Յերբ ա՛յր մարդու հագուստի մեջ, գլխարկի տակ սրածայր,
Կանգնեց շիտակ․ արի սրտով, մանկամարդ մի չքնաղ կին,—
Հպարտ ժպիտ շուրթերի մեջ, և աչքերում, և դեմքին․
Հասակը սե՛գ, հայացքը թո՛ւյն, սեվ աչքերը—հրահուր,
Հորդ մազերը իջած մինչև մեջքը լայն ու ամրակուռ։—

Խաղացնելով ծեր աչքերը արյունացայտ քներում՝
Գեներալը կեղծ ու քնքույշ, հարց է տալիս իր գերուն․
— Գիտե՞ք, ջա՛նըս,—Ֆրունզեյին, անձամբ շա՜տ եմ հարգում
յես․
Անշուշտ, և դո՛ւք, անկեղծորեն․ պատասխանե՛ք կտաք մեզ…
Բայց լռում է համառ գերին ինչպես քարն է լռում լուռ,
Բարկ աչքերը սուր մեխելով գեներալի վոսկեհուռ
Յերկու փայլուն ուսադըրին, կրծքի խաչին վոսկեզօծ․
Ու ծիծաղում իր մտքի մեջ․—Ե՜խ դու, խաբդախ, ծերո՛ւկ օձ․
Դու հարգում ես… Ֆրունզե՞յին… ։ Վոչի՛նչ։ Վատ չե՛
անպայման։
Ու չի տալիս գեներալին վո՛չ մի, վո՛չ մի պատասխան։—

Գալարվում է գեներալը բազկաթոռում ընկույզի,



Յեվ շեշտ նայում կողքին կանգնած յերիտասարդ համհարզին,
Նայում նրա նուրբ, կանացի դեմքին դաժան ու ցինիկ․
— Աստվածն ինքը պարգևեվեց ձեզ չքնաղագեղ մի… կնիկ…
Յեվ, հոսող թուքը հավաքած խոպոտաձայն կոկորդին,
Ասում է նա,—ձե՛զ եմ տալիս այս սիրունիկ ջհուդին…

Ու մթնում է։ Ու սուզվում է այդ որվա հետ վաղաշեջ
Շեկ արևի ծանըր գունդը տափաստանի ծովի մեջ․
Լայնականապույտ յերկինքը իր ցուրտ կրակներն է վառում․
Աղմկում է ձյունի բուքը նոճիների անտառում․
Աղմըկում է, ինչպես կիրքը հոգում ջահել սպայի,
Վոր, ննջակում, իր գերու հետ մարտ է մղում ամեհի՝
Վայրագորեն փախցընելով մի անկյունից մի անկյուն,
Յենթարկելու կրքի կամքին—լըբենի և արնագույն…

Մարդը նաև հնարագետ դառնում է և չա՛ր ժամին։—
Հանկարծ կինը կանգ է առնում և ժպտում է սպային․
Յեվ, ժպտալով, մոտենում է և ընկնում գիրկը նրա․
Պինդ հպում է նրա կուրծքը—ներմակ կրծքին մարմարյա։
— Քոնն եմ ահա՜… հանձնվո՛ւմ եմ… համբուրի՛ր ինձ, քաջ
արծիվ․
Համբուրի՛ր ինձ, ինչպես սիրածն է համբուրում սիրածին…
… Մինչ ուզում է—սպան հպել շուրթերը իր բոցբոքուն,
Կինը, զգույշ, ձեռքը տանում նրա կոնակը, թաքուն,
Հանում կաշվե պահպանակից ատրճանակն, և արագ
Յետ վանելով տղամարդուն՝ ամրանում է պատի տակ…
— Դե՛ ստացիր, դու ստահա՛կ… Ու փողից՝ մի դեղին բոց
Տապալում է հասակով մեկ լիրբ սպային սրտախոց…

Դուռը շտապ բացելով նա՝ թռչում է դուրսն ամայի,
Ուր այդ ժամին, յերկու կոզակ,—հեծած ձիերն ամեհի,
Դնում էյին, մոմռալով կուբանյան մի յերգ հանդարտ,
Յեվ տեսնում են, հանկարծակի, ինչպես սահող ակնթարթ,
Իրենց առաջ կտրում է մի գիսախռիվ սեվ ստվեր,
Յեվ կրակի միջից գոռում,—շո՜ւտ, ձիերը տվե՛ք ձեր…
Ընկնում է մեկն արնաշաղախ, իսկ մեկելը՝ վիրավոր՝

Ձիու գլուխն յետ դարձրած՝ արշավում է գլխակոր···
Ու հեծնելով սեվ նժույգը, անհայտանում դաշտում մութ·
Իսկ յետեվից՝ վայրի ձայներ, գնդացըրի շեկ կարկուտ։
Յեվ ահա սեվ ձիավորը և ձին կորած փրփուրում՝
Սուզվեն պիտի նռնիների հնադարյան անտառում։

··· Նռնիների մեծ անտառը—բանակատեղն է կարմիր,
Վորն ողակել ու սեղմել է Դենիկինը՝ թշնամին։
Վեր են ձգվել բարակիրան նռնիները աներեր,
Հագած ձյունի բյուրեղներ նուրբ և արևի շեկ շողեր։
Ձյունակալած ձիերի սուր խրխինջներ են լսվում մերթ,
Պահակների ցրտին ձայներ, վոր կանչում են հերթ ի հերթ։
Այնտե՛ղ է իր քաջ շտաբով, կամքով հաստ՛ու· բրոնզե՛,—
Մեծաքանքար ռազմավարը,—անընկճելի Ֆրունզեն։

— Եհե՛յ, կանգնի՛ր։ Ձայն է տալիս, ու ձգվում է ահագին,
Վիթխարի մի հասակավոր· մատը դրած բլթակին։
— Ի՞նչ ես էդպես քամափնչել։ Ո՞վ ես։ Ասա իմանանք։
— Ձերոնցի՛ց եմ։ Ու հանում է ծոցից մի ալ թաշկինակ···
— Ձերոնցի՛ց եմ։ Մա՛րա Եփրոս։ Ֆրունզեյին եմ ուզում։
Տա՛ր ինձ նրան։ Հնչում է նա—սրտում կրակ ու հուզում···
— Մարա Եփրո՞ս··· Ա՛յ քեզ հրա՛շք··· Բայց վո՞նց յեկար, սիրելիս։
— Ամբողջն հետո կիմանաս դեռ։ Հարսանիքից եմ գալիս···

··· Կանչերով ու հանաքներով, բռնած սանձից սեվ ձիու,
Գնում են, ու պատմում է նա՝ դեպքը կյանքի ու մահու·
— Կեցցե՛ս, աղջիկ, իսկապես, վոր լավ ես պրծել ու յեկել···
Վատ չե՛։ Վոչի՛նչ։ Բայց դե՛հ, խեղճին՝ շատ դիպուկ ես կրակել։—

Ու գնում են դեպի խորքը, ուր շտաբն է բանակի,
Հանդիպելով ծանոթների վողջույնին ու հանաքին։—

Այնտեղ, հսկա մի ծառի տակ, մի զորշագույն վրանում·
Շտաբը քաջ կարմիրների վորոշումներ հանում՝
Դո՛ւրս գալ դաժան Դենիկինի ոճագալար ողակից,
Ճեղքել, դուրս գալ, և ստեղծել ճակատային հզոր գիծ···



Ու կանգնում է Մարա Եփրոսն ընկերների դեմ դիմաց,
Ժպտում է մեծ Ֆրունզեյին, սեվ նժույգից թռչում ցած·
Գեղատեսիլ մի աղջիկ է, հաղթ հասակով հաստատուն,
Մազերն ուսին, տղամարդու պատառոտված հագուստում։
Պահ մի նրան չի ճանաչում։ Բայց հանկարծ մի ժպիտով
Ընդառաջ է գնում արագ և գրկում է հոգեքով,
Ինչպես հայրը՝ կորած դստե՛րը յերազում յերջանիկ·
— Մարա Եփրո՞ս··· ընկե՛ր Մա՛րա··· աղջի՛կըս, դու կենդանի՞···

Ու պատմում է հերոս աղջիկն արկածները իր բոլոր,
Ու նայում է Ֆրունզեյին մտերմաբար ժպտալով։—
—··· Այդպե՛ս։ այդպե՛ս։ Իմ քա՛ջ Մարա։ Ա՛յ ռոմանտիկ պատմությո՛ւն։
Գիտե՛մ, գիտե՛մ, ով դու մարտիկ, թե ինչ ուժ կա քո սրտում։
Յե՛կ վրանում հանգըստացի՛ր· կծիծաղենք մենք նորից,
Յերբ դուրս կգանք նռնիների այս ահավոր անտառից···

Լուռ է չորս կողմն, և անտառը վոսկեվորվում է պայծառ·
Սպիտակ ու դեղին լույս են ծորում ամեն ճյուղ ու ծառ·
Անտես մի ձեռք, ձյունի վրա, զարմանալի վառվռուն
Հազարավոր շլացուցիչ նուրբ ասեղներ է վառում,
Նուրբ ասեղներ, վոր ասըղտում և բեկբեկվում են անվերջ,
Շիկնած լույսի մի ծով լցնում աչքի փոքրիկ բիբի մեջ։
Մի ծառից ծառ, սուրում են մերթ, արյան, լեշի ծարավի,
Զարկոինչ ու անհանգիստ յերամները ագռավի։—

Ոդը սառն է ապակու պես—իր լռության մեջ յերկար,
Հանկարծ, ահա, փըշրվում է հրանոթով խելագար·
Հրե արկը շառաչյունով գալիս, թռչում է հեռուն·
Մի ահեղ թինդ տարածում վողջ նռնիների անտառում,
Ուր ամեն ծառ ու ամեն ճյուղ լռության մեջ աներեր՝
Արցունքում են փաթիլներ նուրբ, հազարաձեվ բյուրեղներ·
Ագռավները պոկվում ծառից, խելակորույս կռընչում,
Ու դեպի խորքը անտառի սուր սլանում ու կորչում···

Իջնում է մի կարճ լռություն էլ ավելի ահասաստ,
Ամրանում են իրենց դիրքում մարտիկները միշտ զգաստ·

Մարա Եփրո՛սը կանգնում է գծի վրա առաջին,
Հակահարված տալու յեկող հարվածին ու շառաչին…

Տասը հազար սվին ահա, ինչպես ընթացքը հողմի,
Քանի գնում՝ ողակում է անտառն ամեն մի կողմից.
Արագընթաց հեղեղվելով՝ հոսում է ցուրտ դաշտից բաց,
Արյունարբու, արյունըռուշտ մոլեգնությամբ մթամած,
Յեվ հեղեղի հետ միասին, կապույտը չեկ յերիզում,
Թռչում են թեժ, ծանըր արկերն և անտառը ակոսում,
Խառնում իրար ծառեր, ճյուղեր, ճարակ տալիս կրակի,
Բարձրացնելով հող ու ձյունի շատրըվաններ ահագին…

Ամրանում են մարտիկներն ու ռազմավարը քաջասիրտ.
Նայում առաջ. վորտեղից վոր մի հորձանուտ գորշ ու բիրտ,
Մորեխի պես հորդ հոսում է դեպի անտառը անծայր,
Մի սեվ լավա՝ վոր գալիս է ընդերքներից դուրս պրծած…
Այնքան մոտ են նրանք, ահա, պիտի անտառը կուլ տան,
Բայց անհողդո՛ղդ է Ֆրունզեն մարտիկներով իր տիտան:
— Կրա՛կ: Հանգիստ հնչում է նա: Ընկե՛ր Եփրոս, կրակի՛ր:
Կարկըտում է այնժամ իսկույն մի ահավոր գնդացիր.—
Շուտ է գալիս պատն առաջին: Յերկրորդ պատն է հաջորդում,
Յերկրորդ պատը փլչում է վայր: Յերրորդ պատն է հռընդում.
Իր յետեվից քաշում առաջ անվերջ պատեր թանձրախիտ.
Մոլեգնորեն գալիս, մղվում թե՛ աջից ու թե՛ ձախից…
Բայց անվրեպ կրակում է Մարա Եփրոսը անվերջ.—
Ստեղծելով մահի տագնապ դենիկինյան զորքի մեջ.
Ու մի բոպե գլխակորույս ու ավելի մոլեգին
Վերջին ույժերն ուժ են տալիս գնդացրի կրակին,
Բայց, անտառից, Ֆրունզեյի հրանոթները թնդուն՝
Գնդացրի հինգը բներ փոշիացնում են ոդում…

Ճարահատված չար թշնամին, կատաղությամբ մի անկանգ,
Դեպի անտառն է ուղարկում սոսկատեսիլ յերեք տանկ:
Ահազնաձայն հռընդալով, վիշապի պես ծանրահեվք,
Սողում են ու ճզմում. հարթում խութ ու խորոչ ու արգելք:

Մարա Եփրոսն այնժամ թողած գնդացիրը կարճ պահով՝
Լուռ սողում է դեպի առաջ—սառը ձյունի վրայով.



Լուռ սողում է, կտրում ձյունե մի ճանապարհ կարճավերջ,
Ու նռնակը՝ յեկող տանկը կանգնեցնում է հողի մեջ…

Յերկրորդ տանկը սարսափելի, առաջ սողում. հռնդում,
Իր յետեվից սվինների մի խոլ անտառ է հորդում.
Մարա Եփրո՛սը գցում է յերկրորդ նռնակը ձեռքի,
Գցում ուղիղ ատամնավոր շղթայի տակ ահագին.
Յերկրորդ տանկն էլ վոր գալիս էր ու կրակում էր անվերջ,
Վերջին անգամ հռընդում է ու խրվում է հողի մեջ…

Բայց այդ ավեր տանկի միջից, չար աչքերով իր գայլի,
Վերջին ճիգի մոլեգնությամբ, սպան դաժան ու մոլի,
Նայում էր քաջ նռնաձիգին, ատրճանակը հանած,
Ու մի վայրկյան, այնքան արագ, անակնկալ ու հանկարծ,
Շառաչում է մի սուր գնդակ, ու նա՝ կրծքով արյունոտ,
Լուռ փռվում է յերեսնիվայր, հողում խրված տանկի մոտ…

Ու տեսնում է Ֆրունզեն իր մարտիկի մահը տխուր,
Ու դառնում են մարտիկները ավելի քաջ և ամուր…

Դեպի յերրորդ տանկը հուժկու, էլ ավելի վիթխարի,
Զգաստորեն սողում են լուռ յերեք մարտիկ քաջարի:
Անցած մի պահ, յերրորդ տանկն էլ թնդում է և հանգչում
լուռ.

Տարածելով դենիկինյան զորքերի մեջ սև սարսուռ…
Յեվ դիմում է մեծ զրոհի ռազմավարը բարձրասեգ,
Փախցրնելով Դենիկինի հորդաներին ահարեկ.
Յեվ բանակը կարմիրների հաղթական ու խնդալից,
Դուրս է հոսում ռոճիների հնադարյան անտառից…
. . . . . . . . . . . .

… Այսպես ահա, Ֆրունզեյի մարտիկները քաջածին,
Անտառի տակ—Դենիկինի վողնաշարը ջարդեցին.
Ու սլացան տափաստանով, ինչպես կարմիր ուրագան,—
Գրավելով գյուղ ու քաղաք, դաշտ ու անտառ ու կուրգան:
Յեվ այսոր էլ, հին մարտիկներն, յերբ խմբվում են միասին,—
Հիշում են ու փառք են տալիս հերոս Մարա Եփրոսին…

# ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԳԻՐՔԸ

ՏԱՋԻԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴ

Աշխարհն իրա ափն է առել Լենգթեմուրը մեծ տիրան,—
Մինչև հողը Չին-մաչինի, մինչև Իրան ու Թուրան,
Մինչև Հնդու գետերը հորդ, մինչև Տիգրիս ու Յեփրատ,
Մինչև հզոր, սեգ Կովկասի ձյունե լեռներն անարատ,
Մինչև Հյուսիս, և Արևելք և Արևմուտք, և Հարավ,
Մինչև ովկիա՛նը ալեկոծ, և անապատը ծարավ...

Բայց ահա մեծ ավազակը, գահի վրա բազմած իր,
Մտածում է, հոգու խորքում լցրած տաղտուկ ու ձանձիր.
Յեվ չեն ոգնում,— կարմիր գինին հախճապակյա բաժակի,—
Կույսի յեռուն արյան նման, բոցի նման կրակի.
Յեվ վոչ պարը Կովկասի պերճ աղջիկների աչագեղ,
Վոր բեկբեկվում են յերփներանգ ծիածանի պես շքեղ.
Յեվ վոչ գալա՛րքը մարմրնի, և վոչ ժպիտ հրահուր,
Յեվ վոչ փառքը աշխարհով մեկ, և վոչ հեշտանք ու համբույր...

Նա ծովում է կողքի վրա և վեզիրին ասում է խիստ,—
— Շա՛տ եմ այսոր յես ձանձրանում, սիրտըս շա՛տ է անհանգիստ,—
Կանչիր թող գա այն կախարդին, մի բան յերգի ինձ համար.
Աչքիս շատ են դատարկ թվում և՛ սեր, և՛ կյանք, և՛ աշխարհ...

Ձանցած անգամ մի ակնթարթ, լռության մեջ ընդերկար,
Ներս է մտնում մի ծեր շայիր, հագին խալաթ վոսկեկար,
Յեվ լարելով սրտագրավ յոթլարանի տամբուրան,
Ձայնակցում է մեղմ նվագին,—յերգում քաղցր ու անվարան.
Յերգում Լեյլի ու Մեջնունի սիրո մասին տարագիր,
Բայց Լենգթեմուրն ընդհատում է, վորոտալով զայրագին.
Յերգում սերը սիրակարոտ Ֆահրադի ու Շիրինի,
Բայց Լենգթեմուրն ընդհատում է, ինչպես ահեղ բորենի.
Յերգում վորսը Բահրամ Գուրի և Ռուստամի մեծանուն,
Բայց Լենգթեմուրն ընդհատում է և ավելի զայրանում...
Վոչ բեյթե՛րը շեյխ Սաադու, վոչ գազելնե՛րն Հաֆեզի
Չեն անդորրում սիրտն անհանգիստ աշխարհակեր հովազի:—

— Ասա, վեզի՛ր, հարցընում է տերն աշխարհի քեզ հիմա,
Յե՛ս եմ տվել, յե՛ս եմ տալիս մարդ կոչվածին կյանք ու մահ.
Յես եմ տալու այսուհետև... Բայց ուզում եմ իմանալ—
Վերջիվերջո կյանք ասածը ինչո՞վ պիտի վերջանա...

Դողում է ծեր վեզիրն, ինչպես հողմը շնչող մի տերև,
Յեվ շշնջում—Ո՛վ մեծանուն, աղոթարան ու արև,
Կա մի հին գիրք, մի գիտունի ձեռքով գրած շատ հնում.
Ճշմարտությա՛ն դու բանալի, նա՛ յե միայն իմանում:—
Լենգթեմուրը սուր հառում է իր աչքերը դեղնագույն,
Վեր է թռչում վոսկե գահից խայթվածի պես իսկույն,
Յեվ ավազե հողմի նման սաստկաշունչ ու կատաղած
Հասնում այնտեղ, ուր կիտված են հին-հին գրքեր մագաղաթ.
Նրանց միջից, նա հապշտապ, վառված ներքին կրակով,
Վերցընում է նկարազարդ մի ծանըր գիրք հաստակող,
Վորի դեղին ու թափանցիկ եջում գրված եր մաքուր,
Հնամյա մի ավանդություն՝ արևի պես հրահուր,
Խորն, իմաստուն ու նմշարիտ, վոր հորինել եր հնում—
Ժողովրդի սրտի թարգման մի մարգարե անանուն:—

— «Յերկու անգամ, այս աշխարհի բարձրագագաթ մի սարում,
Արեգակը և լուսինը կհանդիպեն իրարու.
Յեվ առաջին հանդիպումը և գգվանքը նրանց տաք
Ժողովրդին կնվիրեն մի պատուհաս պատանյակ...
Նա կլինի աղետաբեր,—քանց յերկրաշարժն ահավոր,—
Նրա ձեռքից լաց կլինեն ժողովուրդներ բյուրավոր.
Կանցնի հազար դաշտ ու սարեր, հող ու ծովեր կապտաջինջ,
Նրա ձիու սմբակի՛ տակ կմոխրանա ամեն ինչ.
Նա կլինի դաժանաձայն կապ ու շղթա զնդանի,

Յեվ կթաղի հազարավոր մարդկանց սրտեր կենդանի․
Տի՛կ կհանի մարդկանց կաշուց և կլցնի մեջը հարդ․
Մահատարած ահի նման կանցնի լեռ ու սարահարթ,
Միայն մահվան սառը թևը կտարածի ամեն կողմ․
Կանցնի, ինչպես անապատի մրրկաշունչ բոցե հողմ—
Մինչև Հյուսիս և՛ Արևելք, և՛ Արևմուտք, և՛ Հարավ,
Մինչև օվկիա՛նը ալեկոծ, և անապատը ծարավ․․․»:

Պահ մի միայն ընդհատում է, և նայում է վեզիրին,
Յեվ վառվո՛ւմ է ամեն մի բառ նրա դողդոջ շուրթերին:—

— «Յերկրորդ անգամ, այս աշխարհի բարձրագագաթ մի
սարում,
Արեգակը և լուսինը կհանդիպեն իրարու․․․
Յեվ այս յերկրորդ հանդիպումը և զգվանքը նրանց տաք
Ժողովրդին կնվիրեն մի բախտաբեր պատանյակ․․․
Նա կլինի արեգակի նման ջերմ ու լուսառատ,
Մաքուր, ինչպես սարի գլխի նորեկ ձյունը անարատ․
Քաջաբազո՛ւկ, հերոսասի՛րտ, բարեսիրտ ու համարձակ,
Կանցնի ամբողջ տիեզերքի մեծ դաշտերով լայնարձակ,
Յե՛վ լեռներով, և՛ ձորերով, և՛ ծովերով գվարթուն,
Յեվ կմտնի ամեն խրճիթ, ամեն ավան, ամեն տուն,—

Անհացին հաց, անզորին ուժ կտա, ամուր կզինի,
Յեվ աշխարհի ազահասիրտ մարդկանց ընդդեմ կհանի․—
Վոր արևի լույսի ներքո—այս աշխարհում վո՛չ մի մարդ
Լաց չլինի վորբի նման տարագիր ու տարաբախտ․
Վոր արևի լույսի ներքո—այս աշխարհում վո՛չ մի մարդ
Մարդու կաշուց տիկ չհանի, մեջը լցնի խոտ ու հարդ․
Վոր արևի լույսի ներքո—այս աշխարհում վո՛չ մի մարդ
Մարդու արյունը չծծի, ինչպես անկուշտ, դաժան սարդ․
Վոր արևի լույսի ներքո—այս աշխարհում վո՛չ մի մարդ
Չկոխոտի, չմոխրացնի վո՛չ մի արոտ, վո՛չ մի արտ․․․

․․․ Նրա ձեռքով ծաղկեն պիտի ամեն քար ու ամեն սար,
Ամեն ծաղիկ, ծեղ ու ծղոտ, ամեն հատիկ, ամեն ծառ:



Նրա ձեռքով ցոլա պիտի բերված բախտը ծագից–ծագ,
Վողջ մարդկությունն առած իրա ազատարար թևի տակ:—
Վորպես կյանքը հաստատ պահող արևի լո՛ւյս իրահուր՝
Յերջանկության ծիածա՛նը կծավալի ամենուր,—
Մինչև Հյուսի՛ս և՛ Արևելք, և՛ Արևմուտք, և՛ Հարավ,
Մինչև օվկիա՛նը ալեկոծ, և անապատը ծարավ․․․»:

Յեվ մթնում է Լենգթեմուրը, և մռայլը ճակատի
Մթնում աշնան օրվա նման, սև ամպի պես ու մութի․
Գալարվում է նրա հոգում, անապատի հողմի պես,—
Կատաղություն՝ անհագնացայտ, խոլական ու հրակեզ․․․

— Այդ վո՞ր, այդ վո՞ր խենթ գլուխն է հյուսել նման
պատմություն․

Չե՞ք իմանում, վոր պիտի գա, և կլինի միշտ արթուն
Լենգթեմո՛ւրը, տե՛րն աշխարհի, ցեղերի և ազգերի,
Յեվ քանի կա՝ կլինեն միշտ նրա ձեռքին խեղճ գերի․
Անցել է, և կանցնի ահեղ, ինչպես մրրիկ անխնա,
Նրա ձիու սմբակի՛ տակ կանաչը կմոխրանա․
Յեվ անցնելով կտարածվի նրա կամքը հուրհրան—
Մինչև հողը Չին–մաչինի, մինչև Իրան ու Թուրան․
Մինչև Հնդու գետերը հորդ, մինչև Տիգրիս ու Յեփրատ,
Մինչև հզոր, սեգ Կովկասի ձյունե լեռներն անարատ,
Մինչև Հյուսիս, և Արևելք, և՛ Արևմուտք, և՛ Հարավ․
Մինչեվ օվկիա՛նը ալեկոծ, և անապատը ծարավ․․․

Յեվ մթնում է Լենգթեմուրը, և մռայլը ճակատի
Մթնում աշնան օրվա նման, սև ամպի պես ու մութի․․․
Յեվ նրա չար ու խստածին աչքերի մեջ դեղնագույն
Ցողշողում են յերկինք կիսող բարկ կայծակներ հրագույն:—

— Ո՛, դո՛ւ, կախա՛րդ չարահոգի, թե չտաներ մահը քեզ,
Յես քո լեզո՛ւն կպոկեյի ծտի բարակ վզի պես․
Յես կեռ սրով կփորեյի քո աչքերը խորախոր,
Կքացեյի յերկու անդունդ մշտամութ ու ահավոր․
Յես քո սի՛րտը կպոկեյի քո չոր կրծքի վանդակից,

Բրդի նման կզգեյի յերակըդ մի յերակից․
Գլխիդ թասակ կդնեյի կեծկեծուն ու շեկ ու տաք,
Կթաղեյի սև ջահնամի յոթն անգամ յոթ հարկի տակ:

Յեվ հեծավ ձին, և արշավեց մինչև լանջը Պամիրի․
Աշխարհ կիսող թուրը գցեց, նեղքեց գագաթը սարի․
Դղրդաց հողն ու դողդողաց յերկրագունդը ծագից-ծագ,
Ասես, մի խոլ ովկիանոս եր ալեկոծվում հողի տակ․
Բացվեց ահեղ, անկամրջվող մի խորխորատ, մի մեծ վիհ,
Վորտեղ չեյին կարող հասնել ճառագայթները արևի․
Գցեց գիրքը, կատաղությամբ, բացված խորը անդունդում,
Յեվ միացան բացվածքները ահազարգուր վորոտում․
— Բա՛ցի ինձնից, բա՛ցի սարից, վո՛չ մի շունչ չի իմանա՝
Հավիտյանըս հավիտենից այնտեղ թաղված կմնա…

Ինչպես մարդը, ոձ ու թռչուն, ու գազանը, վորդը կույր՝
Լենգթեմո՛ւրն էլ մի որ դարձավ հզոր մահին կերակուր․
Անցավ նա յել, ինչպես հողմ ու փոթորիկն են անցնում վառ…
Բայց նրանից հետո էլ, միշտ, ժողովուրդը անդադար
Տքնեց, կռվեց, կռփվեց անվերջ, դարձավ հզոր ,աննկուն․
Յեվ սպասեց Յերջանկությանն, ինչպես գրված եր գրքում․
Չե՛ր իմանում Լենգթեմո՛ւրը, վոր այն գիրքը կլինի—
Կյանքի նման անընդմիջվո՛ղ, սիրո նման կենդանի՛…

Այսպես անցան դարե՛ր, դարե՛ր… ժողովուրդը կռվեց միշտ
Լենգթեմուրի թոռների դեմ,—տերերի դեմ ամբարիշտ․
Ավանդությունն ամուր պահած հազարամյա սրտի մեջ․
Կյանքի նման հաստատահիմն, արեգակի պես անշեջ:—

Դարեր հետո Կովկասի սեգ, ձյունազագաթ լեռներում
Արեգակը և լուսինը հանդիպեցին իրարու:—
Յեվ այս յերկրորդ հանդիպումից և գգվանքից նրանց տաք՝
Աշխարհ յեկավ մի քաջազուն, մի հրաշվի պատանյակ,
Նա մեծացավ, և սրտի մեջ ուժ ամբարեց անհատնում,
Ինչպես հզոր Ամիրանն եր որը որին մեծանում․
Մտավ ամեն խրճիթ ու հյուղ, ամեն առւլ ու վրան,—



Չինե՛ց բոլոր սովածների կուռ կամքերը հուրհրան․
Մտավ ամեն տնակ ու խուղ, ամեն քաղաք ու յերկիր,—
Չինե՛ց բոլոր սովածների բազմությունները տարագիր․
Մտավ ամեն ավան ու գյուղ, ժողովուրդներ զինեց բյուր,—
Յեղավ անզոր սրտին նեցուկ, յեղավ ուժի հորդ աղբյուր․
Անցավ Հյուսիս, և՛ Արևելք, և Արևմուտք, և՛ Հարավ,
Մինչև ովկիա՛նը ալեկոծ, և անապատը ծարավ…

Նրան ընդդեմ յելավ զազիր թագավորը արյունոտ.
Նրան ընդդեմ յելավ վոսկու ազահ դիզողը ճարպոտ,
Նրան ընդդեմ յելավ ցասմամբ գեներալը թուր ու բիրտ,
Նրան ընդդեմ յելավ մռայլ խաչի ստրուկը սևսիրտ,
Նրան ընդդեմ յելավ գյուղի գոռոզ տզրուկը ագահ,
Նրան ընդդեմ յելավ զորքը յեկած ամեն հեռակա…
Բայց կուռ մնաց նրա վոգին ժողովրդի վոգու հետ,
Շողաց նրա անունն յերկրի կամարներում լուսավետ:—
Ժողովրդով զարկեց, ջնջեց թագավորին արյունոտ,
Ժողովրդով զարկեց, ջնջեց վոսկու տիրոջը ճարպոտ,
Ժողովրդով զարկեց, ջնջեց գեներալին թուր ու բիրտ,
Ժողովրդով զարկեց, ջնջեց սևազգեստին սևասիրտ,
Ժողովրդով զարկեց, ջնջեց տզրուկին չար ու ագահ,
Ժողովրդով զարկեց, ջնջեց յեկած զորքին հեռակա…

Յեվ հնչեցին յերջանկության աշխարհում այդ աներերք
Հզոր կռվի ու շփոթի, ու հաղթության հազար յերգ,—
Յերգեց նա, վոր կանգնած եր հաղթ հնոցների առաջ բորբ,
Նա, վոր գյուղի սև մշուշում լաց եր լինում վորպես վորբ․
Յերիտասարդ տղա, աղջիկ յերգեցին հաղթ ու արի
Յեվ դուրս յեկան կառուցելու հիմքը մի նոր աշխարհի:
Յերգեց նա, վոր վիշտ եր կրել հոգեսպան ու ահավոր,
Յերգեց նա մեծ կռվի մասին—և հաղթության մեծազոր․
Յեվ կանգնեց Նա ժողովրդի կամքի նման աննկուտրում,
Հավերժական հաղթանակի, Յերջանկության Աշխարհում:—

Գնաց նրա հուժկու համբավն հասավ չորս ծագն աշխարհի
Յեվ հիշեցին ժողովուրդները ավանդը այն հին դարի,—

Վոր ծնվել է Նա՛, ով պիտի Յերջանկություն բերեր,
Յեվ բերելով՝ պահում է բաց իր ձեռքերում աներեր։—
Տեսա՛ն՝ նրա յերկրում անծայր ծփանի ծուխը մթին
Բարձրանում է և ձուլվում է յերկրնքի բաց կապույտին.
Ցոլցլում են արևի տակ վոսկի հասկերը առատ,—
Մարդիկ հնձում ու կալսում են և վայելում լիաթոք.
Այգիներում շողշողում է խաղողն անամպ աչքի պես,
Հորդ հոսում են ջրանցքները կենարար ու փրփրադեզ,
Խաղաղությունը բռնել է բակ ու ձեղուն ու տանիք,
Որորում է մայրը մանկան՝ դեմքին ժպիտ յերջանիկ,
Խաղ են խաղում մանուկները մանկության պես թեթևոտ.—
Յերջանկաշող ժպիտներով, աչիկներով արևոտ.
Յերիտասարդ տղա, աղջիկ յերկաթակուռ ու հզոր
Ամրացնում են մկանները Ապագայի յերազով.
Անգամ դողդոջ, կորաքամակ պառավնե՛րը հողաբույր,
Ջահելացած՝ Յերջանկության շողն են խմում բուռ առ բուռ.
Յեվ կանգնել է սահմաններին, իր աշխարհի մեծահաղթ,—
Անընկնելի՛ մի ժողովուրդ, վորպես մի ձեռք ու մի մարդ...

Այնժամ Հսկան արեվածին, հանճարեղ ու իմաստուն,
Ճշմարտագետ մարգարեյի ձեռքով իրա հաստատուն,
Յեվ անցյալի շառաչալից կռիվների մասին բորբ,
Յեվ ներկայի հաղթանակի, Յերջանկության լուսահորդ.
Ժողովրդի կամքն ու սիրտը դրած իր մեծ սրտի մեջ
Գրեց մի նոր Յերջանկության յերկաթե գիրք լուսաեջ,
Վորի ամեն մի ջինջ տողում, արևի պես փողփողուն,
Արդարությո՛ւն, Ազատությո՛ւն, Յերջանկությունն է շողում,—
Յեվ կշողա՛ ժողովրդի սրտի մեջ ու պատմության—
Ժողովրդի նմա՛ն անմահ,—հավիտենի՛ց հավիտյան...



# ՁԵՌՔԵՐԻ ԳԻՆԸ

## I

Հզոր սուլթան Բաքիրը, նախանձոտ ու կռվասեր,
Ի նշան նո՛ր հաղթության՝ նոր պալատ է կառուցել։—

Հոյատեսիլ մի պալատ, վորի համբավը թնդուն
Չինումաչին է հասել, Արաբստան ու Հնդուն։

Հասել մինչև Յեգիպտոս, բարձրավանդակն Իրանի,
Կովկասի սեգ լեռները և ծովերը ծիրանի։

Յեվ ռուսական ստեպով հասել մինչև Յեվրոպա.
Վոր Արեվելք է ձգտում ցանկությունով անոպա.

Յեվ արքաներ, իշխաններ, նախանձանքով անհնար,
Ցանկանում են նման մի՛ շքեղ պալատ ունենալ։—

## II

Յեվ տեսնելու հուր տենչով՝ աշխարհի չորս ծագերից,
Հավաքվել են պալատի առջև սուլթան Բաքիրի։—

Յեկել են Չին աշխարհից—հեռավոր ու արեվոտ,
Ուր դղյակներ կան նախշուն և աղջիկներ մանրավոտ։

Յեկել են նոյն Բաղդադից և Հալեբից հրակեզ,—
Ուր արմավ կա քաղցրահամ, հուրմիք, հինա ու բեհեզ։

Արաբիայից, Իրանից, Հնդու հողից մոգական,
Յեվրոպական ծովերից, լայն ստեպից ռուսական։

Յեկել են ցուրտ բեվեռից և բեվեռից հրախանձ,
Սրտերի մեջ՝ հիացմունք, աչքերի մեջ՝ չար նախանձ։—

### III

Ուրախ է սիրտը զարկում մեծ սուլթանի կրծքի տակ․
Նվերներով ծածկում է նոր պալատը բովանդակ։

Յերկրորդ արքա է դառնում նրա նազիրն Ել-Ամվար,
Կալվածներն են մեծացնում իշխանները հապշտապ։

Կարավաշները չնչին՝ առնում են բարձ ու բալիշ,
Ականջով հող չարժողը ստանում է փառք ու նիշ։

Ստանում է ամեն վոք՝ ինչ վոր իր սիրտն է տենչում,
Թե խոսք գցի վեզիրը մեծ սուլթանի ականջում։

Յեվ նվանո՛ղը նարպիկ, աշխարհակա՛լն հարամի,
Ուրիշ սրտով է կոխում շեմքը իրա հարեմի։—

### IV

Ճարտարապետ Ել-Նուրը միայն վոչինչ չստացավ․
Վորի համբավն հնչում էր Արեվելքում ծայրեծայր։

Նա, վոր տքնել էր յերկար՝ մեծ կանառում Բաղդադի․
Վոր մարդկային ուղեղին լույս—արեգակը կաթի․

Վոր Իրանի մայր—աթոռ Խորասանի կանառում՝
Ալի-Իբըն Սինայի գիտությունից էր նառում։

Վոր գրում էր ռոբայի, սիրտը դրած ռոբայում,
Ռոբայ, վորին ժամանակն հար անաղարտ է պահում։

Վորի առաջ թեքում էր իր գլուխը մարմարյա
Ամեն խալի՛ֆ ու ղադի, ամեն շեյխ ու ամիրա։



### V

Նոր պալատը կառուցող ճարտարապետը Ել-Նուր,
Յերեք տարի տքնել էր նախագծի վրա յուր։

Խորն աչքերով իր բույի՝ տքնել էր տիվ ու գիշեր,—
Յեվ փառքի ու վայելքի մասին յերբեք չէր հիշել։

Յեվ սուզված լույս մտքերում՝ յերկնում էր նա անխնա,
Վոր պալատի պերճ տեսքից մեծ սուլթանը հիանա։

Վոր հիանան ամենքը՝ թե՛ իշխանը, թե՛ արքան,
Նրա շուքից հիացած՝ շլանալով նրան գան։

Սուրա համբավը՝ մտքի սուր թռիչքով մարդկային՝
Հասնի ամեն մի աշխարհի, ամեն թագին ու գահին։

### VI

Յեվ կանգնում է պալատը՝ նման շողուն արծաթի,
Նման հրաշք ու հեքիաթ—ավանդական ջեննաթի։

Վորի տեսքից Հարուն—Ել Ռաշիդ խալիֆը անգամ
Կքարանար տեղն ու տեղ, կկծեր շուրթը կարկամ։

Սրտագրավ փայլ ուներ, չորեք կողմից հրաշալի․
Ասես դղյակն էր հեքիաթ նա Հազարան Բլբուլի։

Վեր էր ձգվել նրա լույս աշտարակը բարձրասեգ,
Գրանիտի պես ամուր, բյուրեղի պես դյուրաբեկ։

Յեվ շողում էր գիշերում, ցերեկի մեջ հրախանձ,
Պատճառելով հիացմունք և նյութելով չար նախանձ․—

### VII

Հիացմունքն ու նախանձն է, վոր աշխարհի ծագերից
Հավաքվել են պալատում մեծըն սուլթան Բաքիրի։—

Հրաշակերտ, լո՛ւյս պալատ, անձեռագործ մարմարի,
Ամեն քանում դրել է Ել-Նուր ձեռքն իր հանճարի։—

Հարյուրավոր սյուներից, քանդակներից նրբագեղ.
Ու ճակատից դռների՝ շողքն է փռվում ամեն տեղ։

Կորնթարթ են կամարները, յերկինք՝ ամեն մի ձեղուն,
Ամեն պատի մի նախշում—ծիածաններ են շողում։

Թավուտները, պուրակները, ավազանները նրա
Մի հրաշքով բերել են չեղնաքն աշխարհի վրա…

VIII

Յեվ նոխ սեղան է բացել սուլթան Բաքիրը այսոր,
Յեվ ուրախ է նա ներքուստ և արտաքինը հզոր։

Յեվ իրանի ծեր արքան, բարձրացնելով լի բաժակ՝
Ասում է մեծ սուլթանին, ժպիտներով խորամանկ։—

— Գեղեցիկ է, ո՛վ սուլթա՛ն, քո պալատը գեղեցիկ,
Չեմ տեսել յես իմ կյանքում նման հրաշք կառուցիկ։—

Առանց սրա՝ աշխարհը անապատ է ամայի,
Զուգված է նա մեծ ձեռքով ամենազոր ալլահի։—

Արդ, խեր մեր յերկուսիս, սրտակցության մեր յերկար,
Ճարտարպետըդ, արդյոք, չե՞ր կառուցի մեզ համար։

IX

—… Յեվ մեզ համար… մե՛ծ սուլթա՛ն, աղմկում են և
խնդրում
Սեղանակից արքաներ և իշխանները անդադրում։

Բայց իր ոսկե գահույքից, զայրացած զայրույթը հզոր,
Հասակով մեկ ծգվում է սուլթան Բաքիրն ահարկու։



Յեվ բազմանոխ սեղանից պոկում բաժակը բյուրեղ,
Յեվ ասում կեղծ ժպիտով.—Ո՛վ թանկագին իմ հյուրե՛ր.—

Մի կյանքն ի՞նչ է ձեզ համար. պալատն ուզեք՝ կտամ—այն,—
Ճարտարապետ Ել-Նուրը՝ ձեր վոտքի հողն է միայն.

Տարե՛ք, և թող ձեզ համար նոր պալատներ կառուցի։
Յեվ խմում է բաժակը ժպիտներով իր ոձի…

X

Նստած է մեծ սուլթանը գահի վրա թանկագին,
Կողքին ծերուկ վեզիրը քսու ժպիտը դեմքին։

— Ո՛, Ել-Ասվար, չեմ ապրել յես այնքան խորը հուզում.
Իմ անբեռ հյուրերը ճարտարապետ են ուզում…

Թե մի նորը կառուցի, և պալատըս թվա վատ,
Յե՛ս կմեռնե՛մ կսկիծից, յես կմեռնեմ սրտապայթ։

Վո՛չ։ Անհնար բան է դա։ Յեվ զոչում է մոլեգին.
— Կանչի՛ր նրան, ո՛, վեզի՛ր… Չե՛մ տա նրան վոչ վո՛քին։—

Յեվ վորոշեցի այլ պալատ չհանդըրգնի կառուցել՝
Հարկավոր է հե՛նց հիմա նրա ձեռքերը կտրել…

XI

— Իմացտուն ես, ո՛վ պայծառ աղոթարան յերկնային,
Թեև Ել—Նուրն հասարակ հպատակ է քո գահին՝

Բայց փառասեր է սաստիկ, հույժ խարդախ ու ննզամիտ,
Մի որ նա դե՛մ դուրս կգա աստվածային պատգամից…

Յեվ շուրթերից նրա ծեր՝ վար է հոսում ժահր ու թույն,
Գալարվում է կրծքի տակ նախանձի ոձը արթուն.

Յեվ աչքերի մեջ նվաղ, և հոգու մեջ, և սրտի,—
Կայծկլտում են սև բոցեր ատելության ու ստի...

Յեվ, ծափի ձայնը, ահա, չանցած նույնիսկ մի վայրկյան,
Ներս է բերում մարդկանց մի զինավառ խումբ հաղթական...

## XII

Իսկ այդ ժամին, Ել-Նուրը, ճարտարապետն իմաստուն,
Ոմար Խայյամի կծու ռուբայիններն էր կարդում:

Մենակ է և մոռացված, մռայլադեմ և անբախտ,
Դառնությամբ է լցվել նա—սուլթանի դեմ ալեբախտ:

Սուլթանի, որ ժպտում է այնքա՜ն բարի, այնքա՜ն հեզ,
Բայց կծում է չարաբույն անապատի օձի պես...

Որ իր քսու վեզիրի խորհուրդներով մահաբույն՝
Պատերազմներ, խնջույքներ, անվերջ դավեր է նյութում:

Ու նստել էր մեն-մենակ, հակած գլուխը գրքին.
Հանկարծ ուժգին ձեռքեր են իջնում փայտե դռնակին:

## XIII

... Յեվ կանգնում է Ել-Նուրը՝ մեծ սուլթանի դեմ ու դեմ.
Շրջապատված մարդկանցով զինավառ ու խստադեմ:

Յեվ նայում է սուլթանը, ժպտում ժահրոտ ժպիտով,
Յեվ փսփսում վեզիրին սատանայի հոգիով:

Ոչինչ, ոչինչ չի լսում ճարտարապետը տրտում,
Զգում է, որ սուլթանը դեմը դավ է պատրաստում.

Չի անցնում մի ակնթարթ այդ ահավոր վարկյանի՝
Դահիճները խստադեմ, հրամանով սուլթանի,

Մարմարակերտ պալատի լույս դահլիճում, տեղն ու տեղ,
Իսկո՛ւյն և յեթ կտրում են զույգ ձեռքերը հանճարեղ...
. . . . . . . . . . . . .



## XIV

Անցել է չար Սուլթանը անապատի հողմի պես,
Յեվ այս տխուր զրույցն է անվանդաքար հասել մեզ:

Անցել հրաշք պալատը, ամպի ծխի պես հալվել,
Յեվ նրա տեղ գորշագույն անապատ է ծավալվել:

Յեվ յերբ նայում եմ մեր այս նորակառույց շենքերին,
Նոր աշխարհը կառուցող միլիոնավոր ձեռքերին՝

Աչքերիս դեմ ձգվում են դաստակները Ել-Նուրի,
Ես, խորապես, զգում եմ հարգը անդուլ ձեռքերի,

Թե դարում մեր լուսավո՛ր, թե մեծագո՛ւյն մեր դարում՝
Ինչու յեն գոռ պայքարով—դեպի գալիքն յերկարում...

# ԴԵՊԻ ՋՐԱՂԱՑ

Հալածվելով սևսիրտ սքեմավոր ամբոխից,
Խորենացի Մովսե՛սը, պատմագիրը հանճարեղ,
Գունատ, ինչպես մագաղաթ, սրտում յերկյուղ ու թախիծ,
Մի մութ գիշեր լքեց իր ցրտին խուցը բաց ու նեղ:

Յեվ փետուրե գրիչը նետեց մի կողմ զայրացած,
Յեվ հանգցրեց պլպլուն դեղին մոմը հին խուցի,
Յեվ դուրս վազեց, և դրսում մութն եր չոքել մթամած.
Յեվ լսվում եր շառաչը քամու ահեղ վոռնոցի:

Ի՞նչ եր թողնում նա այնտեղ.—խավարակուռ վանքում այդ,
Շրջապատում իր դժնի, հին խուցում այդ բարձրադիր,—
Միայն կրքեր մոլեգին, հրեշային վորոգայթ,
Սին աղոթքի մրմունջներ ու գրքեր վատ ու պատիր:

Հանճարեղ ծերն արդար եր, հանց մանկան խոսքն առաջին,
Հանց գագաթը Տավրոսի՝ իր ձյուներեն պարզությամբ·
Բայց արդ, սիրտը խորտակված, ընդդեմ քամու շառաչի,
Անվերադարձ փախչում ե—ինչպես անղեկ մթին ամպ·

Յերևում ե նրա բաց, խելոք գլուխն ուպիտակ,
Մոմի լույսով թափանցված մաշված դեմքը դեղնածոր·
Յեվ արծաթյա մորուքը, մեջքը կքած հոգսի տակ,
Յեվ կուրծքը, վոր պահում ե գավազանը բրածո...

Այդ նա՛յե, վոր հանճարեղ իր պարզությամբ քնարեց
Նավասարդի տոնը մեծ և մեհյանները մարմար,
Հայկի հզոր բազուկը և աղեղը լայնամեծ,
Արամազդին շանթաքեր, Անահիտին վոսկեմայր:—



Վիշապաքաղ Վահագնի լեգենդական հրածին,
Արեգնային ծնունդը՝ յեղեգնի ու ծովի մեջ,
Արտաշեսին, Սաթինկան, Արտավազդին չարածին·
Առաքինի Արային, Շամիրամին անատենչ:—

Հովվական պարզ կենցաղը, և խուղերը գետնափոր,
Ու կար գինի, զարեջուր, ծուխի վոլորք ու աթար,
Ուրկից անցավ Քսենոփոնն՝ հագած զրահ ու շեփոր,
Վորի զորքերը, ծովին, ասում եյին՝ «թալաթա՛»:—

Յեվ վոստաններ հողաշատ, ապարանքներ վոսկեղուռ,
Իշխանների ցոփակյաց, հողի տենչին միշտ գերի,
Յեվ հայրենի խաղողը—քաղցրահյութ ու հրահուռ,
Յեվ քամբիռները զողթան գուսանական ձեռքերի:—

Յեվ յերկրակալ Իրանի հզորությունն ահագին,
Վոր տարածում եր բռնի՝ կրակարան ու ավեր,
Յեվ Հռոմի, վոր, անտես, միշտ ուղարկում եր վոսկի,—
Սրբեվելքում նյութելու նենգություններ ու դավեր:—

Յեվ սնափառ, մեծամիտ արքաների հայկական,
Տխմար, դատարկ ու քսու իշխանների անարի,
Վորոնք, չեղած քաջությամբ. դավադիր ու խոլական,
Ընկնում եյին Իրանից ու Հռոմից վիթխարի...

Յեվ վո՛չ մի խոսք ու ծպտուն այն նորերի մասին քաջ,
Վոր տարել են բռնություն և՛ հայրենի և՛ ոտար,
Վոր դարերով կռվել են, մարտ են մղել բազմաշաչ,
Խորտակվել, բայց կուռ վոգին պահել ընդմիշտ անվթար...

Ի՛նչ իմանար այդ ծերուկ միամիտը հանճարեղ,
Վոր ինքն հանգիստ կստանա ջրաղացում նորերի,
Թեն թե վանքի սևասիրտ ամբոխի մեջ ցոփ ու զեղխ,
Վոր վորսգայթ ե նյութում ընդդեմ անշահ սրտերի...

Ի՞նչ իմանար, վոր ամբոխն անգամ մահից իր հետո,
Սրտում չար վո՛խը պահած, դաժանասիրտ ու հլու·

Քանդելու յե շիրիմը ցասումնալից մի խանդով,—
Յեվ վոսկերքը, և փոշին քամիներին ե տալու...

Յեվ բորբոքուն խարույկին կտա մատյանն իր գրած,
Ինչպես փոքրիկ մի պատառ վորկորի մեջ ագահի.
Յեվ միայն ճո՛րտն հանճարեղ, իր բազուկը յերկարած՝
Ժանիքներից խլելով՝ գուրգուրանքով կպահի.

Յեվ փախչում ե ահա նա, և գլուխը սպիտակ
Անոթևան ու անբարձ... նա՛, վոր մի որ հունական
Կաճառների մարմարյա ձեղունների լույսի տակ
Իմաստության լուսավոր պերճ պատմուճանը հագավ:

Յեվ փախչում ե ահա նա՛, չար ամբոխից հալածված,
Ապաստարան գտնելու ջրաղացում հնամյա.
Հեռու վանքի անողորմ շրջապատից պղծված,
Հանգիստ մի կյանք գտնելու և գտնելու խաղաղ մահ:

Գնա՛, քայլի՛ր դու, ծերո՛ւկ, այնտեղ կանգնած մինչ հիմա
Առվի ափին կանաչուտ, սաղարթի տակ շուքերի.
Սպասում ե սիրով քեզ մի ջրաղաց հնամյա,
Ջրաղացպա՛ն դարձիր դու,—աղա ցորեն ու գարի:

Ավա՛ղ, իզուր, անհատույց քո հանճարով մեծագոր,
Պսակ հյուսեցիր տխմար գլուխներին անքանքար.
Ջրաղա՛ցն ե տեղը քո, կերըդ՝ բաղարջ մի կտոր,
Վերմակդ՝ ալյուրն այսունհետ, և ծեր գլխիդ՝ բարձը քար:

Նստի՛ր հանգիստ դու այնտեղ, նայիր փոշուն ու քարին,
Բազմաչարչար ո՛վ ծերուկ, պատմագիր Խորենացի՛.
Յեվ կբերեն ճորտերը իրենց ցորենն ու գարին,
Եվ չե՛ս մնա դու յերբեք կարոտ կտոր մի հացի...



# ՀԱՖԵԶԻ ՎԱՐԴԵՐԸ

Հին Շիրազում ապրում եր մի մեծ շայիր—
Անունն Հաֆեզ—վարդերի խիստ սիրահար,
Վորի կանաչ վարդանոցում կային վառ
Գեղազանգուր վարդեր ճերմակ ու կարմիր:

Ապրում եր նա վարդանոցով իր գունեղ,
Յեվ հույզերը անզուգական այդ պահի—
Դառնում եյին մարգարտաշա՛ր ռոբայի,
Դառնում եյին վառ գազելներ սրտագեղ:

Մի ժամանակ նա—սպիտակ ու կարմիր
Վարդեր քաղած իր արցունքով ցոլցլուն
Ուղարկում եր սևաթարթիչ սիրուհուն՝
Կոկոնի մեջ դրած սիրող սիրտը իր...

Բայց մի անգամ, յերբ դեռ նոր եր լուսանում,
Բլբուլն յերգում եր և՛ շարքի, և՛ գազել,
Յերբ սիրում եր Հաֆեզը դեռ յերազել,
Սիրտը մտքին, միտքը սուզած անհունում.—

Յերբ յելնում եր արև—բիբը աշխարհի,
Վոր վարդերի ցողը քաղեր ժրաջան,
Նարճիսներին տար վոսկեղեն պատմուճան,
Յեվ տարածեր շողն անապակ մատների,—

Հանկարծ լսեց ինչ վոր փափուկ վոտնաձայն,—
Մրահոն մի փոքրիկ աղջիկ ներս մտավ—
Վարդանոցն իր, քաղեց վարդեր ցողաթարմ,
Յեվ, անշշուկ, գաղտագողի հեռացավ...

Յերկա՛ր նայեց, յերկար խորհեց այդ պահի
Անակնկալ դեպքի վրա, ու խռով՝

Փետուրն իր ներմակ գրիչն առնելով՝
Գրեց յերեք սրտագրավ ռոբայի:—

— «Թող վարդն իրա թփին մնա, գո՛ղ աղջիկ,
Քաղած վարդը և՛ տգեղ է, և՛ անբույր.
Անքաղ վարդը միայն ունի թույր ու բույր,
Թող վարդն իրա թփի՛ն մնա, շո՛ղ աղջիկ:—

— «Թող վարդն իրա թփի՛ն մնա, գո՛ղ աղջիկ,
Քաղված վարդով չի արբենում վոչ մի մարդ,
Անքաղ վարդը միայն ունի արդ ու զարդ,
Թող վարդն իրա թփի՛ն մնա, շո՛ղ աղջիկ:—

— «Թող վարդն իրա թփի՛ն մնա, փո՛ղ աղջիկ,
Վարդ չի պոկում իմաստուն ձեռքը միակ.
Վարդ քաղողի սիրտն անգութ է ու վայրագ,
Թող վարդն իրա թփի՛ն մնա, շո՛ղ աղջիկ...»:

Գրեց նա այս ռոբայիններն ու քնեց,—
Սիրտն իմաստուն գթությունով արևոտ.
Ու յերբ ծագեց նորից վոսկե առավոտ,
Նորից աղջիկն յեկավ վստահ ու կանգնեց.

Ու զամբյուղը լիքը լցրեց վարդերով,
Ճերմակ, կարմիր թարմ վարդերով լիուլի.
Ու դուրս գնաց մանրաքայլ ու ժպտալի
Մատաղ սրտի հուզումներով անխռով...

— «Գոնե զգար այդ աղջիկը չարաձեռ,
Թե վորքա՛ն է վշտացնում ինձ, ծերունո՛ւս,
Յերբ քաղում է իմ վարդերը սրտահույզ,
Իմ ներշնչման միակ աղբյուրը անմեռ...»:

Յեվ, զսպելով խոր զարույթը, մտորեց—
Այդ քայլով նա գուցե մի վե՛րք է բուժում.
Յեվ նորից հին, ծեր աչքերի մշուշում
Գթության ջերմ ճառագայթը յերկարեց:



Վորքա՛ն ժպիտ ու մանկական շող ունի,
Ասաց շայիրն ու հետևվեց աղջըկան.
Հասավ մինչև հին Շիրազի մեծ շուկան,
Ուր վոր ծախվեց լի զամբյուղը գողունի...

Ծախվեց գնով յեռապատիկ... Յեվ մի բուռ
Արծաթ առած, ժպտերես ու խնդագին,
Մտավ մի հին տնակ, ուր վոր անձկագին
Սպասում եր մի խեղճ պառավ մերկ ու կույր:

Մտավ այնտեղ և՛ Հաֆեզը մեծ շայիր,
Ուր վարդերի գող աղջիկը այդ պահին
Անհուն սիրով գուրգուրում եր պառավին,
Ու շշնջում՝ ա՛ռ ամենը և պահի՛ր:

Տխրեց այնժամ մեծ շայիրի սիրտը մեծ,
Քանի կյանքը այսպես թշվառ է ու խեղճ,—
Ի՞նչ գին ունի վարդանոցի վարդը պերճ,
Քանի կյանքը ունի այսքան ցավ ու ցեց:—

Աղքատությո՛ւնն է այս փոքրիկ աղջկան
Դեպի չքնաղ իմ վարդանոցը մղում,
Իսկ վաղը այս մանկական պարզ ուղեղում
Վխտան պիտի մտքեր պիղծ ու խոլական...

— «Յե՛կ, իմ փոքրիկ, յես կարդացի՛ քո հոգին,
Յեվ հասկացա քո վշտերը անպատում,
Քո անունը միշտ կմնա իմ սրտում,
Սիրեցի՛ քեզ, ինչպես հայրը—զավակին:—

Մարդ կդառնա մարդը այնժամ, յերբ յերկրում
Ել չեն լինի աղքատություն ու զրկանք.
Վորբեվայրու հեծեծանք ու տառապանք,
Լաց ու արցունք, վոր մեր սիրտն են գալարում:

Մտի՛ր դալար վարդանոցն իմ այսօրից,
Յեվ ձեռքերդ հողմի նման բաց արա,
Յեվ թող այնտեղ ծավալվի չար Սահարա,
Եւ վո՛չ մի վարդ, եւ վոչ մի վարդ պետք չէ՛ ինձ...»:

Յեվ ձեռքի մեջ բռնած փոքրիկ, բեկբեկուն
Մի ձեռք ինչպես արև առած ներմակ վարդ,
Մեծ շայի՛րը ջերմ արցունքեց տարաբախտ—
Թշվառների տառապանքը իր հոգում...



# ԿՈՒՅՍԻ ԱՇՏԱՐԱԿԸ

## ՆԱԽԵՐԳ

— Կասպիական ծովն է այսօր անզուսպ յեռում·
Ջահա՛ն, քո՛ւյր իմ, մոտեցիր ինձ·
Ծփծփում է մեկը ալիքներում հեռու,
Տե՛ս, այն ո՞վ է գալիս սիպ փրփուրից:
Ծովահա՞րս է արդյոք, թե՞ մի ուրու ներմակ,
Գուցե զարնված մի անթև թռչո՞ւն·
Ահա սուզվեց ծովի ցուրտ սարսուռի տակ·—
Եվ թույլ ձայնով, կարծես, մեզ է կանչում:

— Խանի աղջի՛կն է նա, աշտարակից ընկած,
Որորվում է անվերջ այս ջրերում·
Մի ցավոտ որ՝ լուսե մահիկի պես հանգավ,—
Եվ դեռ քամին նրա՛ ձա՛յնն է բերում:—
Դա մի հուշ է ցավոտ, հին օրերից դժնի,
Հին օրերի ավանդ մահամնա,
Ջգո՛ւյշ, զգո՛ւյշ, թող վար ալիքներից յելնի,
Ո, տեսնում ես արդեն գալիս է նա:

I

Վորպես մի սպիտակ ուրու,
Ալյունոտ թռչունի մի թև,
Լողում է կաս կապույտ—ջրում
Մի աղջի՛կ փխրուն ու թեթև:

Լողում է ջրերում նա մառ,
Հետո բարձրանում ափին,
Մոտենում է մի քյոշքի մարմար,
Անմարմին փրփուրե փերին:

Ահա նա՛—փրփուրե մի սյուն,
Մի աղջիկ— փխրուն ու թեթև,
Դեմքին տանջանք ու հուզում՝
Լո՛ւռ հալվեց դռների յետև:

## II

Փակվում են դռները նախշուն,
Վոտքի տակ ծաղկում է խալին,
Ու հայրը՝ իգատենչ մի շուն՝
Նստել է մոտիկ մանղալին:

Սիրտը նժույգ մի ձիու պես
Դոփում է, դոփում կրքահար,
Աղջիկը լուսե սյուն, տես,
Կանգնել է նրա դեմ խոնարհ:

— «Քո մի համբույրը քա՛ղցր—
Թանգ է քան բույրը ջեննաթի.
Քան վոսկին ու փառքն ու գանձը
Արքա Հարուն Ալ-Ռաշիդի:

Մուղանի դաշտն է քո կուրծքը
Ալապաստր ձյունով ծածկըված.
Մարմընիդ բոցեղեն խուրձը՝
Չի կերտել և վո՛չ մի աստված:

Ո՛, սիրո՛ւն, ջեննաթի փերի՛,
Ընկնում եմ վոտքերդ, նայի՛ր,
Յես՝—փոշի, յես՝ ցեխ—վոտքերիդ,
Խան հորըդ—խնայիր...»:

## III

Գնում է աղջիկը կամացուկ,
Դատարկվում է սիրտը խանի,
Յեվ քյոշքը թվում է ցուրտ՝
Անապատը մռայլ Մուղանի:



Մի պատ է բաժանում միայն
Խանին՝ դստրից իր քնքուշ.
Յեվ՝ թվում է մի տեսիլ ունայն,
Մի յերազ, հեռավոր մի հուշ:

Քյոշքի մոտ յոկ ծովն է անքուն
Բերում բաց ափերը իրա.
Ալիքը ալիքին զարկում
Ու փշրում ավազի վրա:

Ջայրույթից՝ լալիս է նա չար,
Կատաղում, փրփրում դաժան,
Ծեծում ցուրտ պատերը մարմար
Ու հետո՝ թույլ ննջում այնժամ...

## IV

Այնժամ... նա տեսնում է գերող
Աչքերը բաց,—տխրաքաքավ,
Յեվ նրա հայացքը սադափ,
Յեվ նրա մազերը բուրող:

Ռաշի պես ծովից դուրս յեկած՝
Գյուրիչ է ու նորից անզին,
Վոր Հարուն Ալ-Ռաշիդն անգամ
Չի տեսել այդպիսի մի կին:

Յեվ ուզում է ամուր ափել...
Ու տեսնենում է շուրջը դատարկ.
Այդ ո՞վ է, վոր խանին խաբեց...
Յեվ ահեղ գոռում է նա բարկ:

Վոստնում է վորպես վագր ահեղ—
Նորից բռնելու նրան...
Բայց աղջիկն, աղջիկը բյուրեղ
Հալվում է փրփուրի նման...

Մինչ՝ քյոշքի լույսերում մարած
Կիտվում ե մի հոպիտ ամբոխ.
Ծավալվում, շուրջկալում նրան՝
Ու թանձր քրքջում խոպոտ:

Յեվ ահա գազազած, յելման
Ամբոխին ճեղքելով մի ծեր՝
Բարձրանում ե գլխին՝ չալմա,
Յերկարում դողդողջուն մի ձեռ:—

— «Ո՜, խա՛ն, լսի՛ր ինձ, լսի՛ր
Մահմեդի ընտրյալ վորդուն.
Խոսում եմ աղջկադ մասին,
Յեվ պիտի, վոր լսես ինձ դու:—

Շինել տուր աշտարակ մի փակ,
Չի տեսնի ալլահն իսկ անգամ:
Մեղքը՝ միշտ գործել են անտակ—
Մութի մեջ,—ռամիկն ու արքան»:

Նայում ե ծերին խանը, նայում,
Նայում ամբոխին նախանձող.
Ու թռչում... ու ճիչով զարթնում
Կոշմարից այդ ծանր ու տանջող:—

V

Բեդվինի նե՞տն եր սրընթաց
Քյոշքից—տնից տուն թռավ.—
Այդ խանի խիստ խոսքն եր գնաց,
Գյուլլի պես սրտերին առավ:

Ու յեկան անհաշիվ մարդիկ,
Դրեցին քար քարի վրա,
Սլացավ աշտարակը ձիգ՝
Ու խանը լուռ նայեց նրան:

Կանչեց նա աղջկան նորից,
Կանչեց նա աղջկան անթև.
Յեվ մութին՝ վայրաբար, մոլի,—
Նրան բարձրացրեց այնտեղ...



ՎԵՐՋԵՐԳ

Կասպիական ծովն եր այն որ անզուսպ յեռում,
Գիշերը արնո՛տ եր, պուրպո՛ւր, պուրպո՛ւր.
Ո՜, դո՛ւ, խանի՛ աղջիկ, ի՞նչ ես նայում հեռուն,
Մարմինդ հագած ներմակ փրփո՛ւր, փրփո՛ւր:
Քո ճակատին վե՛րք կա, մահիկափայլ, դեղին,
Այդ թևերդ վորպես լուսնե մանգաղ՝
Ո՞ւր են քշում արդյոք այս ալիքները աղի
Մերթ զայրացկոտ, ու մերթ դանդա՛ղ, դանդա՛ղ:

Դու չե՛ս լսում, միայն որորվո՛ւմ ես անզոր,
Հեռանում ես մարդուց մութ գիշերով.
Հեռանում ես անվերջ, գիշեր ու զոր,
Յեվ մարմինդ ծածկում փրփուրներով:
Ու դարե՛ր են անցել այն նողկալի որից,
Աշտարա՛կն ե լռում թափո՛ւր-թափո՛ւր.
Իսկ դու որորվո՛ւմ ես, հեռանո՛ւմ ես նորից,—
Կասպիական ծովում—փրփո՛ւր փրփո՛ւր:

## ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՎԱՐԴԸ

Վրաստանի չքնաղագեղ, սիրուն Թամար թագուհին
Հաղթ բազմել էր շքեղաշուք փղոսկրյա իր գահին,
Ուսին գցած ալ ծիրանի, վոտքին վոսկե մուճակներ.
Ատամնավոր թագի վրա անգին գոհար ու ակներ:

Ծփում էյին շուրջը նրա ուրախագին ու զվարթ,
Աղջիկների ներմակ բույլեր հագած վոսկի և արծաթ.
Տղամարդկանց խմբեր պարթև—խրախնալի ցոփ ու զեղխ,
Գինու, վորսի խենթ սիրահար փեոդալներ հաստաբեխ:

Գահի վերև զարկած են հին սրեր, թրեր իրար քով,
Հրացաններ բազմատեսակ, կուռ վահաններ ծանրակող.
Պողպատապատ լանջապանակ, սուր նիզակներ ու տեգեր.
Վորոնք թեև ժանգ ու փոշի ու ծանրություն են հագել,
Բայց պատմում են խոլ, անբարբառ, քաջություններ անցյալի,—
Ասպետական կռիվների, թագուկների պանծալի:

Մարդկանց շուրջը ծովացել է բույրը յուղի հնդկական,
Մուշկ, ամպարի խելացնոր թանձր բույրը մոգական.
Բույր, վոր հեռվից բերում էր վարժ վաճառականն անձկուն,
Վորն անցնում էր բյուզանդական սեպ ժայռերը գորշագույն.
Հասնում մինչև ալեծըփուն ծովածոցերը Ռոմի,
Շեկ անապատն Արաբիայի, ովազիսները Կոմի,
Մինչև Դամասկ, մինչև Բաղդադ, մինչև գետերն հնդկական,
Հյուսիսային սառցադաշտերն ու պարիսպը Չինական...

Նստած է արդ պերճ Թամարը հյուրերովն իր ցոփ ու զեղխ,
Կողքին՝ մետաքս շորեր հագած ավագանին հաստաբեխ.
Մարմարասալ լույս դահլիճում, ապակու պես թափանցիկ,
Ցոլցլում են դեղին ջահերն իրենց լույսը նրբաձիգ.

Հսկայական սեղանի շուրջն հավաքվել են վիթխարի
Տղամարդիկ ու նուրբ կանայք օծված բույրով ամպարի.
Ցեվ անընդհատ բարձրացնում են կեռ կոտոշները ողում,
Կախեթիայի կարմիր գինով հարբում են ու խլրտում.
Թացացնելով ու սրբելով շրթունքները ցոփ ու զեղխ,
Գինու, վորսի խենթ սիրահար փեոդալներն հաստաբեխ:

Գուսանները նվագում են. նրանց ամեն մի լարի
Մի հնչյունից բարձրանում է ասպետություն դարի,
Ցեվ հոսում են յերեւնոսյան դռներից դուրս ծանրանիստ
Գինու բույր ու մարդկանց նիչեր խոլական ու անհանգիստ.

Ահա մեկը վերցրել է պինդ բազուկով հաստատուն,
Ցեվ, խարկըված մի տհագին վոչխարի բուդ է ուտում.
Մի ուրիշը դրած առաջ գինու մի փարչ տհագին
Լցնում է իր սիրով վառված սրտի անշեջ կրակին.
Լույս դահլիճի շամանդաղում, արդեն նստած համրաքար,
Դառնում է և տղամարդկանց և կանանց մի խոլապար...

Դրսում յերկու հաղթ խափշիկներ լուռ հսկում են այդ ժամին,
Վորոնց քունը փախցնում է սարից փչող պաղ քամին.
Ու մերթ հասնող սրաթռիչ շառաչները ձայների,
Վոր լարի պես պիրկ ձգում են ջիլը նրանց վոտքերի:

Ի՞նչ իմանա գահին բազմող պերճ Թամարը, վոր հիմա
Ռուսթավելին, մեն ու մենակ, խուլ խրճիթում հնամյա,
Գրում է իր մարգարտաշար «Վագրենավոր»—ը շքեղ,
Վորին յերբեք չեն հասկանա փեոդալներն հաստաբեխ—
Ցեվ վանքերի սառուցասիրտ վարդապետները մռայլ,
Վոր ժլատ են աղոթքի մեջ, հարբեցության մեջ շռայլ:

Ահա այնտեղ, մի խրճիթում, մի կիսալույս մոմի դեմ,
Մի փետուրե գրիչ առած, ծանրախոհ ու դալկադեմ,
Դեղին ու նուրբ մագաղաթին լուռ՝ շարում է անընդհատ
Հումկու տողեր ու զույգ տներ ու համբավներ վոսկեհատ.
Վորոնց ամեն տողի միջից՝ զգացմունքով վողողուն՝
Պերճաշուք ու գեղեցկատես Վրաստանն է շողշողում.

Մեծ սրտանի սերը հոսում, թավալվելով հրաթեժ,
Ինչպես լեռան ծայրից պրծած անզսպելի մի ջրվեժ...

Լուռ է շուրջը: Ցեվ ծնկներին դրած գիրքը հաննարեղ,
Խորհում է նա խուլ խրճիթի պատերի մեջ թաց ու նեղ·
Միակ ընկե՛րը հիացուրց ջրասափորն է պղինձ,
Վորը բերել եր դեռ առաջ Բյուզանդիայի ափերից·
Այնտեղից, ուր միտքը իրա, ճառագայթի նման վառ,
Ցերկարում եր մինչև կանաչ հայրենի ափը պայծառ·
Հասնում մինչև Թամարի հին բերդը կուռ ու քարաշեն,
Վորի կատարն հավերժաբար թանձըր ամպ ու մշուշ են·
Ա՛յն Թամարի, վորը ժպտաց այնքան ջերմին մի սիրով
Ցեվ սպասեց Ռուսթավելուն—վերադարձի հույսերով...

Գուցե Թամարն հասկանա ինձ, խորհում է նա տխրությամբ·
Ցեվ թխամորթ լայն ճակատին սահում է մի մռայլ ամպ·
Ցեվ սևաշեղ, մեծ աչքերի բիբերի մեջ՝ իմաստուն՝
Բաղցր սիրո և կասկածի մի զգացմունք է նստում·
Ցեվ խորհում է խուլ խրճիթի խավարի մեջ այդ պահին,—
Ցեթե բախտը ժպտա այսօր՝ կմոտենամ յես գահին՝
Ցեվ ի նշան ավարտումի՝ ու բացճակատ ու հպարտ՝
Կնվիրեմ իմ պարտեզից նրան մի հատ չքնաղ վարդ...

Ցես, մեսխ զուսան Ռուսթավելիս, իմ աչքերին արտասուք,
Ցերգեցի քաջ Տարիելի չվառ բախտը սեվասուգ·
Վերջացան իմ հերոսների թափառումները ամեն,—
Թող իմ յերգից մարդիկ հիմա իմաստուն սերը քամեն,—
Դառնան ազնի՛վ, քաջամարտի՛կ, դառնան անհա՛ղթ, աննկո՛ւն,—
Կյանքի սկիզբ—առավոտից, կյանքի վերջից—իրիկուն...

Շնչչաց նա լուռ խրճիթի մենության մեջ, և շտապ,—
Սիրտը լցրած գեղումներով, և հոգու մեջ խոր տագնապ,—
Արագ իջավ իր պարտեզը և սկսեց լուռ նայել,
Ուր վոր կային ալ, սպիտակ վարդեր մեծ ու գանգրահեր:

Ցեվ նա չզգաց, չզգաց, վոր ինքն արդեն կանգնել է ամուր
Բերդի դռանն, ուր հսկում են քար դեմքերով սևամուր



Ցերկու խափշիկ, վորոնց արդեն քունը պիտի զգետներ,
Խաչաձևված նիզակներով արգելեցին ներս մտնել
Վրաստանի անմահ փառքը՝ Ռուսթավելուն վշտալի,
Վոր սրտում՝ սեր, և ձեռքին՝ վարդ—յերազել եր հեշտալի՝
Ասել իրա թագուն պահած անանց սե՛րը, վոր մինչ այդ՝
Սնուցել եր չքնաղ Թամարն ակնարկներով իր զվարթ...

Վարդը ձեռքին՝ կանգնած մնաց... Իսկ ներսում դեռ ցափ ու
գեղխ,

Խմո՛ւմ եյին, հարբո՛ւմ եյին ֆեոդալներն հաստաբեխ,
Ու խոլոպար դառնում եյին մանկլավիկներ դալարուն,
Աղջիկների ներմակ հույլերն, ինչպես կրակ ու գարուն...

Ցեվ բազմել եր սպասման մեջ Թամարը պերճ թագուհին,
Ինչպես ձյունի մի հյուս ընկած արքայական իր գահին·
— Ուշանո՛ւմ է—շշնջում եր ավագանուն իր ծերուն,
Ուրախության ու կարոտի յերկու կրակ աչքերում,—
— Հե՛յ կանչեցեք ծաղրածույին, ուրախացնի թող նա ինձ:
Ցեվ ներս վազեց մի ջահել այր ծամածուռ ու հրճվալից·
Ցեվ ջահերը պարուրող նուրբ շամանդաղում սպիտակ,
Խնդացնում եր վողջ ամբոխին մի զվարթուն խեղկատակ,—
Հորինելով սուր առակներ, պատմություններ սրախոս,
Հազցրնելով ամեն բառին շարժուձևերն իր միմոս·
Ու նրա հետ հռհռում եր լույս դահլիճը ցափ գեղխ,—
Գինու, վորսի խենթ սիրահար ֆեոդալներն հաստաբեխ...

Վարդը ձեռքին, կանգնած մնաց... Իսկ ներսում դեռ ցափ ու
գեղխ,

Խմո՛ւմ եյին, հարբո՛ւմ եյին ֆեոդալներն հաստաբեխ:
Ցեվ, անհանգիստ բազմած գահին, Թամարը թարմ, սպիտակ,
Ինչպես պայծառ լրիվ լուսին, ինչպես արև նորածագ·
Ցերկու մատաղ սիրուն հարճեր հովհարներով անընդհատ
Լուռ՝ հովհարում, զովում եյին նրա ճակատը գունատ·
Վորի վրա ատամնավոր վոսկի թագն եր հանգչում լուռ,
Գոհարներով ընդելուզված և ակներով շողահուր,
Ցերկու ուրիշ նորտուհիներ, իրաններով խիստ բարակ,
Ոձանապուկ, բերում եյին զովացուցիչ ոշարակ·—

Ու Թամարի շրթունքներին մի ժպիտ էր խաղում միշտ,
Մի ժպիտ վոր ունենում են յերջանիկները անվիշտ…

Վարդը ձեռքին, կանգնած մնաց։ Ու կկանգներ նա յերկար,
Յեթե նրան չսպառնային խափշիկները զինավառ․
Կրկին փորձեց նա մոտենալ, և պահակները կրկին
Անզեն ու լուռ Ռուսթավելուն դեմ տվեցին նիզակին․
Այն ժամանակ յերգիչը բարկ, մի բռունցքով գլորեց
Մի խափշիկին, մյուսն յեկավ և կատաղի շուլալվեց․
Բայց յերկրորդին էլ սաստկությամբ գլորվեց վայր նա իսկույն,
Յեվ, բախտաբեր վարդը ձեռքին, արագընթաց ու նկուն,
Բացեց դուռը և ներս մտավ ցասումնալից բարկությամբ,
Լայն ճակատին նվաստության, խոր տխրության մի սև ամպ…

Լռեց դահլիճն այնժամ մի պահ, և լռեցին ցոփ ու զեղխ․
Մշուշապատ բութ աչքերով փեոդալներն հաստաբեխ։
Գինով լցված կոտոշները հանկարծ ոդում սառեցին,
Վոմանք, հարբած, դողդողացով ցուրտ հատակին թափեցին․
Վոմանք ձեռքերն՝ իրենց տարան դեպի սրեր լայնաշեղբ,
Որորվելով ու գոչյունով առաջ յեկան խստակերպ,
Վայրիվերո, հայհոյալից, սպառնալի և անսանձ,
Ողակեցին լուռ, անհողդողդ, բանաստեղծին սիգապանծ…

Կանգնեց վոտքի չքնաղ Թամարն այնժամ խիստ ու զայրագին․
Ու լուռ նայեց խստաժպիտ խոսքի հզոր արքային․
Ապա գոչեց․— Յե՜տ քաշվեցե՛ք, Ռուսթավելուն դեռ վոչ վոք
Չի՛ հաղթել և չի՛ հաղթելու… խոնարհվեցե՛ք ծնկաչոք
Նրա՛ն վորը ձե՛ր արքայի փառքը և սերն է յերգել․
Նա մուտք ունի իմ դղյակը ամեն մի ժամ անարգել։—

Նայեց, նայեց ժպտաց ապա Ռուսթավելին խնդությամբ․
Բայց մտախոհ, լայն ճակատին սահեց մի սև, մռայլ ամպ․
Ու դողդողաց ամբողջ մարմնով յերջանկությամբ այդ պահի,
Ու մոտեցավ, ընդհուպ կանգնեց մոտը սիրած արքայի,
Պիրկ, ջլապինդ ձեռքն հանճարեղ յերբ վոր պարզեց նա առաջ
Դռների մոտ հանկարծ փրթավ ձիու խրխինջ ու շառաչ․



Յեվ հապշտապ ներս խուժեց հորդ մի զինավառ խումբ ահեղ,
Ասպետական տեգ-նիզակով, կրծքակալով փառահեղ․
Նրանց յերկաթ գոտիներից լայնաշեղբ սրեր կային կախ,
Սուր-սրածայր գտակներից՝ շեկ գանգուրներ ալեբախ․
Վորպես մռայլ, սև ամպի սյուն, իր հասակով բարձր ու մեկ,
Կանգնել էր նա—ռուսաց Գեվորգ արքայորդին ցոփ ու մեղկ․
Ցոլում էյին նրա մանր խորն աչքերում յերկնագույն
Յերջանկության տաք ճաճանչներ, ջերմին ցոլքեր հրագույն։
Յեվ, գնալով դեպի գահը, նա ծնկաչոք ու յերկտակ,
Ջերմ համբուրեց պերճ թագուհու փափուկ ձեռքը սպիտակ…

Յե՛վ թագուհին, և՛ ամբոխը բանաստեղծին մոռացան․
Յեվ կանգնեց նա սրտափշուր ամոթահար ու անձայն․
Վարդը բռնած ձեռքը առկախ մնաց այնպես ցուրտ ոդում
Յեվ խանդի հորդ մի հույզ յեռաց ցավված սրտի վոլորտում․
Յեվ թվաց, վոր ձեռքի վարդի ամեն ծալքից ահավոր—
Դուրս սողացին, գալարվեցին խայթող իժեր թունավոր․

Ավա՜ղ, սերս, շշընջաց հեզ Ռուսթավելին լռելյան,
Այս աշխարհում վատից վատը՝ կնոջ դրժո՛ւմն է միայն։
Յեվ թուլացած ձեռքից ընկավ վարդը մարմար հատակին,
Ինչպես կրծքի տակից պոկված արյունոտ սիրտ վշտագին․
Ու տեսավ, վոր ձռքից ընկած վարդը մեծ ու սպիտակ
Կոխան դարձավ պերճ Թամարի վոսկեմունակ վոտքի տակ…

Թնդաց դահլիճն, յերբ Թամարը ուրախադեմ, բերկրալից,
Տարավ նորեկ փեսացուին, բռնած նրա պիրկ ձեռքից․
Տարավ մինչև ներմակավուն փղոսկրյա գահն իրեն,
Վոր ինքն ու նա—սիրտը սրտի, կյանքը կյանքի նվիրեն։
Թնդաց դահլիճն ուրախաբար, լույս դահլիճը ցոփ ու զեղխ,
Վե՜ր բարձրացրին կոտոշները փեոդալներն հաստաբեխ։

Յեվ բոլորի աչքում, կարծես, Ռուսթավելին չէր յեղել,
Նա՛, վոր իրա կրակ սրտում անկեղծ սեր էր անթեղել․
Նա՛, վոր յերգեր էր հորինել սրտառուչ ու խանդակաթ,
Նա՛, վոր գովել էր Թամարի սև-սաթ վարսերը ագաթ,
Նա՛, վոր ուզեց գրիչն յեղեգն անել ամբողջ աշխարհի,
Նա՛, վոր յերգեց վորպեսզի մեծ նրա փառքը չմարի…

Դուրս գնաց հեզ Ռուսթավելին հանց աղեղից պոկված նետ․
Վշտով լցրեց հին խրճիթը, ու մնաց ցավ մտքի հետ․
Յեվ առնելով «Վագրենավորն»-ն ամուր սեղմեց սրտին տաք,
Ինչպես մայրը՝ իր զավակին գուրգուրում է ժպտի տակ․
Յեվ աչքերից թափվեցին ջերմ արտասուքի կաթիլներ,
Պա՛րզ՝ առաջին սիրո նման, հի՛ն՝ վշտի պես սրտակեր…

Յեվ մռայլվեց նրա միտքը, ինչպես աշնան մթին ամպ։
— Թամարը ինձ մի գի՛ն կտար, թե ապրեյի շնությամբ…
Թող այսուհետ իմ սրտի մեջ և՛ սեր, և՛ հույս լուռ մարեն,
Ա՛յս ստացա իմ տքնության, տառապանքի փոխարեն։
Յեվ նրա դեմ արձանացան հերոսներն իր մեկ առ մեկ,—
Տարիելը աստանդական, Ավթանդիլը բարձրասեգ․
Ռոսթեվանը, Շերմադինը, և Փրիդոնը խոհուն,
Զքնաղ Նեստան-Դարեջանը, Թինաթինը քնքշանուն․
Անգամ վերջին հերոսը իր, վորին գրչով հանճարեղ
Շո՛ւնչ եր տվել, վոգեվորել, և նրանց կյանքը վարել
Դեպի սիրո, կռվի ահեղ ովկիանոսը անհատակ․
Մարդկային մի մե՛ծ սիրտ դրած ամեն մեկի կրծքի տակ։

— Ա՛խ, միայն ձե՛զ խորն հասկացա, ձե՛զ հասկացա յես միայն,
Աշխարհում սերը սիրով է, վոր չի դառնում ընդունայն․
Ազնվություն ներարկեցի ամեն մեկիդ սրտի մեջ,
Սիրով, փառքով ու քաջությամբ—կապրեք անվե՛րջ ու անվե՛րջ․
Թող ձեր մասին յերգած յերգով հասկանան ինձ աշխարհում,
Ահա յես, հեզ Ռուսթավելիս, վողբում եմ ու դեգերում․
Վոտքի կոխան յեղավ վարդըս իմ մութ դարում ամեհի,—
Տրորվեց բիրտ կրունկի տակ սիրադրուժ արքայի…
Թո՛ղ ձեզ նման, դարերի մեջ, մնամ ազնիվ, վեհ ու վես,
Թո՛ղ վողբամ իմ տխուր սիրո վերջին վողբը սրտակեզ,
Յեվ դիմելով վերջին խոսքըս—արդարադատ յերկընքին,
Յես, Մեսխ գուսան Ռուսթավելիս, ասում եմ արդ ամենքին,—
Վոր տարբե՛ր են ուղիները կյանքի՛, սիրո՛ և մահի,—
Բանաստեղծի՛ համեստանուն և մեծաշո՛ւք արքայի…



# ԱՐԻՈՆ

Հելլեն յերգիչ Արիոնը, իր քաղցրաձայն քնարի հետ,
Իտալիայում փառք վաստակած, ուրախասիրտ դառնում եր յետ։

Կապույտ ջրում շառաչելով, խոժոռալիք և ամեհի,
Կարապավիզ նավն եր սուրում դեպի ափերն Հելլադայի․
Ինչպես ճերմակ ամպի կտոր, առագաստը ուռցրած իր,
Կտրում եր նա և ջրադաշտ, և հորիզոն, և ծովածիր,
Յոթը անգամ հանդիպելով Բորեասի վորոտներին,
Բախտը տված յեռուն ջրի մշուշապատ վոլորտներին։

Ահա ծովի մշուշից նուրբ, ու ջրից ցուրտ, ու հովից պաղ
Բարձրանում է առավոտյան արեգակը ցողաշաղախ․
Վոսկեներկում մակերեսը միակտուր կապույտ ջրի,
Յեվ թափանցում մինչև խորքը, մինչև ճերմակ պալատների
Յեվ բյուրեղյա աղից կերտված դղյակների դռների շուրջ,
Ուր պարում են մերկամարմին ջրանույշներ հեզամրմունջ,
Յեվ կախարդներ հմայավոր, ծովաձկներ ու դևեր չար,
Վոր տուփի մեջ պահած ունին ակնեղեններ լուսապայծառ,
Յեվ թզուկներ, վորոնք կարմիր, ալ մարջանի ծառերի տակ
Կանգնած նայում են աղջըկանց մարմինները սիպ-սիպտակ․
Յեվ բյուրեղյա գահի վրա՝ Պոսեյդոնը փրփուրածին,
Վոր իր կամքին է յենթարկել ծովաշխարհը անծայրածիր։

Այսպես մենակ, մի անկյունում, կես գիշերից մինչ առավոտ,
Լուռ խորհում եր Հելլադայի յերգիչ Արիոնը յերազկոտ․
Սավառնում եր միտքը նրա արծըվի պես սրաթռիչ,
Սուզվում ծովի հատակը խոր, արևի պես յելնում ջրից․
Հասնում մինչև կամարն անհուն, մինչ ծիր կաթնի շղթան պայծառ,
Վորոտում հանց Բորեասի կամքից ծնվող թռչող թաթառ։

Լուռ խորհում էր։—Ահա նորից պիտի բացվեն իր հայրենի
Խրճիթների դռները լայն ու մարմարյա պալատների․
Պիտի՛ նորից յերգի հնչեղ քնարովն իր յոթնալարյան․
Հովիվների սերը կրքոտ ու ծեսերը հնադարյան․
Ռազմիկների յերթը հուժկու, սաղավարտ ու նիզակ ու տեգ,
Արցունք թափող ծեր մայրերի սրունքները բարա՛կ ու մերկ․
Աղջիկների, վորոնց դալար մատների տակ ամեն մի նյութ
Դառնում է բորբ քնար ու լար, կախարդական, դյութիչ հնչյուն․
Տղաների, վորոնք, մեջքը, լուռ հենում են ծառի, քարի,
Ու մնում են յերազի մեջ տեսակցության—աղջիկների։
Յեվ անտառում վոստվոստացող կենտավրին ու այծամարդին․
Յեվ շիկամորթ ու հուրհրան խաղողների դալար վորթին․
Կնյա ու խոր բաժակների յեռուն գինին ալ, սպիտակ,
Հելլադայի հողն ու ջուրը, ողն ու յերկինքը կապուտակ,
Յեվ այն հզոր աստվածներին, վորոնց ներմակ մեհյաններում,
Հելլենացին, հանուն կյանքի, զավակին իր զոհ է բերում…

Ու վորքան շատ սուզվում էր նա մտքերի ու հույզերի մեջ,
Այնքան սիրտը լցվում էր վառ յեջանկությամբ վոսկեառեչ․
Ծովը չնչին կաթիլ էր մի նրա պայծառ մտքի ծովում,
Յերկրագունդը՝ ցորենի հատ, ժամանակը հարատեվուն
Իր խորությա՛մբ ու լայնությամբ կարող էր նա մի հնչյունով—
Տանել յերգի ընդգրկելի հավերժության հոսուն հունով…

Այսպես յերկար խորհում էր նա ընկղմած իր մտքերում լուռ․
Նայեց ապա ու մարմրնով անցավ թափով մի ցուրտ սարսուռ,
Գանգուրածածկ լայն ճակատը ուրվագծվեց ակոսներով,
Ամբողջ հոգին լցվեց մեկից մի վերահաս ահի հրով…

Լսեց նա չար շրշող ձայներ նավում խմբված նավազների,
Վորոնք նման վորսը տեսած արյունախում հովազների՝
Նայում էին սարսափ ազդող հայացքներով մռայլամուժ,
Վորոնց առաջ հալվում էր ծեր Արիոնի սիրտը անուժ․
Հտպիտներում, զգում էր, վոր նյութվում է մի դժնի վոճիր,
Վոր սեվակնած ամպի նման հրով հղի՝ պիտի շաչի
Յեվ կայծակե խարազանով ծեծի անտառն հնադարյան,
Յեվ լսում է նա շշունջներ չարագուշակ մահի՛, արյա՛ն։



Նրանցից մեկը չարադեմ՝ հորդորում էր ընկերներին․—
— Յեկե՛ք, անպետք այս ծերուկին հանձնենք ծովի ալիքներին,—
Նա պա՛րկ ունի, Զե՛վսը վկա, մեջը լիքը վոսկի ու գանձ․
Կբաժանենք մենք իրար մեջ, կտանենք մեր կարոտ կանանց․․
Վոսկի տեսնող կինը սիրով պառկում կողքին տղամարդու—
Յեվ մինչև լույս—ստիպում է, վոր իրեն հետ մնաս արթուն…
Յեվ վայրենի սուր քրքիջով ու գոչյունով ու աղմուկով
Շուրջկալեցին Արիոնին, շառաչեցին Արիոնի քով…

— Հանձնի՛ր վոսկու պարկը, ծերո՛ւկ, և փոխանակ խեղդ ու
վհատ

Զարչարվելու Հադեսի մեջ, ծովի ջուրը փափուկ է շատ․
Այնտեղ, խորքում աղջիկներ կան մերկամարմին, ինչպես գարուն
Կպատվեն քեզ իրենց պայծառ, բյուրեղափայլ պալատներում․
Գերեզմանըդ չի կոխոտի հողածնի վոչ մի սմբակ,
Մեր հայրերն էլ հնուց անտի՝ կորել են այս ջրերի տակ…

Կանգնեց վոտքի յերգիչը ծեր և՛ իմաստուն, և՛ անայլայլ,
— Գիտեմ, ասավ,—գիտեմ, վոսկին մարդու դեմքին տալիս է
փայլ․

Մի վայրկյան է տևում սակայն փայլը նրա հրաշալի,
Իսկ քիչ հետո պղտորվում է և դառնում է արյունալի․
Իր վոսկու պես [illegible] է միշտ ագահ հարուստն ամեն մի ժամ,
Քանզի գլխին կախված են միշտ սպառնալիք ու տարաժամ…
Իսկ յես, յերգիչս, աղքատ ու խեղճ, վոչինչ չունեմ պարկիս
միջում՝

Վո՛չ թե վոսկի, այլև նույնիսկ սև պղնձի դատարկ հնչուն…
Սպասեցե՛ք, կարդում եմ յես ձեր դեմքերի վճիռը չար,—
Ծովն եք ուզում գցել ծերիս, վողորմելուս անհիշաչար․
Կամքը ձերն է, ո՛, զավակնե՛ր դուք քաջածին Հելլադայի,
Ունենայի թե հազա՛ր կյանք, այդ հազարն էլ ձեզ կտայի․
Բայց նախքան ինձ ծով գցելը՝ կաղաչեյի յերգըս լսել,
Վերջին յերգըս, վոր գոնե ձեզ դարձընի մարդ ու մարդասեր…

Յեվ, ուժ տալով ալեկոծվող աստվածային սրտի արյան,
Զարկեց հուժկու կենսաթրթիռ մեծ քնարին յոթնալարյան․
Զարկեց ամուր և յերգի հետ ձայնը նրա գնաց հեռուն,

Գնաց նստեց հովի թևին. սուզվեց խորը ալիքներում.—
Կախարդվեցին նրա երգից ջրանույշներ ջրերի տակ,
Նավին արագ մոտեցավ և ձկանց վտառն իրար կուտակ,
Ցեվ կախարդներ հմայավոր, ծովաձիեր, ու դևեր չար,
Վոր տուփի մեջ պահած ունին ակնեղեններ լուսապայծառ.
Ցեվ թզուկներ, վորոնք, կարմիր, ալ մարջանի ծառերի տակ
Կանգնած նայում են աղջըկանց մարմինները սիպ-սիպտակ.
Ցեվ դելփիներ, վոր սիրում են լսել երգեր սրտապարար,
Ջրի ցայտքի նման թռչում մակերեսին ալեվարար,
Ցեվ կախարդվեց, գահի վրա, Պոսեյդոնը փրփուրածին,
Վոր իր կամքի՛ն է ենթարկել ծովաշխարհը անծայրածիր։—

Ցեվ երգելով, նավազներին նայում էր նա տհազարգուր,
Ցեվ դեռ երգը չվերջացած՝ սեղմելով իր սիրտը ամուր՝
Զսպասելով այդ վերահաս դատավճռին չարատխուր,
Նավից իրեն գցեց դեպի ծովի անծիրն անդընդախոր.
Սուզվեց, մի պահ կորավ ջրում, բարձրացավ ու սուզվեց կրկին,
Տալով վերջին հրաժեշտը լուսավորող արեգակին...

Դաժանասիրտ նավազները հարձակվեցին պարկի վրա.
Այնտեղ միայն մնացել էր կեսը կերած հացը նրա.
Հին հագուստներ, գուցե տրված խորիտուր երգած երգի,—
Ցեվ... հինգ արծաթ, վորպես նվեր Ապոլլոնի անմահ
փառքի։—

Ցեվ ի՞նչ ուներ աստանդական այդ երգիչը աշխարհում վոր.
Բացի իրեն մարմընից մերկ ու քնարից քանքարավոր,
Նա, վոր պահ մի կորավ ջրում, բարձրացավ ու սուզվեց կրկին,
Տալով վերջին հրաժեշտը լուսավորող արեգակին։

Սակայն ծովի ցրտին ջրից, մի դելփին, վոր դուրս էր եկել,—
Նա վոր մարդուց ավելի յե սիրում լսել դյութիչ երգեր,
Թափ տվեց իր ճապուկ մարմնին, Արիոնին մոտեցավ շուտ,
Դրեց մեջքին ու դուրս քաշեց խորքը տանող ջրերից մութ.
Արագ լողաց ափը դեպի, լողաց այնքան վարժ ու արագ,
Ինչպես երկրին հասնող հզոր ճառագայթի երթը կրակ.
Տարավ ճերմակ ավազի մոտ, խիճերի մոտ դրեց նրան,
Ցեվ արևը գորովագութ կորած ուշքը բերեց վրան...



Ուշքի գալով՝ կանգնեց մռայլ նա ուժաթափ ու սրտագոհ
Զորացրեց իր հագուստները արևավառ ժայռի ներքո...

— Ո՛, Զե՛վս, դու, վոր քո շանթերով գիտես մարդուն շուտ
զգետնել՝
Տանթահարի՛ր նավազներին, թե պարկիս մեջ վոսկի գտնեն.
Ցեվ դու, երգի հովանավոր, ո՛վ Ապոլլոն արդարադատ,
Մի՞թե մարդը երգի պահին կլինի ննեգ ու չարավատ.
Մոմ լցրու դու այդ չարադավ նավազների ականջներում,
Վոր չպղծեն երգի ժամը՝ վոչ մի անգամ իրենց որում...

Ցեվ սրտապինդ՝ վողջ Հելլադան անցավ նորից ծերը թափառ,
Ցեվ նորից նոր հնչեց նրա քնարն հզոր ու վոսկեբառ.—
Ցերգեց նորից հովիվների սերը կրքոտ, կյանքը անդորր,
Ռազմիկների երթը հուժկու, տեգն ու նիզակը ահավոր.
Աղջիկների, վորոնց դալար մատների տակ ամեն մի ճյուղ
Դառնում է բորբ քնար ու սիրտ, կախարդական դյութիչ հնչուն.
Տղաների, վորոնք մեջքը, լուռ, հենում են ծառի, քարի,
Ու մնում են երազի մեջ տեսակցության աղջիկների։
Ու դղյակից դղյակ անցնում և խրճիթից խրճիթ գնում,
Նորից իրա սրտապարար, սրտաթրթեռ երգը հինում...
Ցեվ համբավը նրա թռչում աշխարհով մեկ, ինչպես քամին,
Ցեվ գինի՛ յեր խմում Հելլենն՝ Արիոնի կենաց ժամին։

## ԴԱՎԹԻ ՋՈՒԼՀԱԿԱՆՈՑԸ

Յերբ կոզբադնի ճակտին շարեց ատամները ուրագ–ուրագ,
Յելավ Դավիթը բարկացայտ, գնաց ամեն գոմ ու մարագ,
Կոտրեց բոլոր կողպեքները, բացեց բոլոր դռները զոց,
Հանեց Սասնա սիրունատես աղջիկներին ճերմակածոց:

Քեռի Թորոսն ասաց նրանց.—այսորվանից ազատ եք դուք,
Իջեք դաշտը գազպա*) քաղեք, բարձրացեք սարը Մարութուկ,
Հայրական ձեր յերդիկներից պալան–պալան ծուխն ելնի թող,
Արև ուզեք արևաշատ ազատարար Դավթին հաղթող:

Վորի դեմքին վշտի ամպ կար՝ յերկնքի պես պայծառացավ,
Վորի դեմքին տաք արցունք կար՝ ուրախության գոհար դարձավ,
Վորի դեմքին վորբի ցավ կար՝ ցրվեց դաշտի մշուշի պես,
Վորի դեմքին սեր–մուրազ կար՝ սեր–մուրազը յեկավ ի տես:

Վորի դեմքին մահի ահ կար՝ ընկավ ծանր քարի նման,
Վորի դեմքին մթին քող կար՝ բացվեց ինչպես լուսին լման.
Վորի դեմքին դալկություն կար՝ դարձավ կարմիր վարդը ալ–ալ,
Վորի դեմքին պղտոր բոց կար՝ բոցն սկսեց պայծառ շողալ:

Թռվռացին նրանք, ինչպես աղավնիները սպիտակ,
Յերախտիքի, սիրո կրակն անթեղած խորը—կրծքի տակ,
Շուրջպատեցին հսկա Դավթին, գովերգեցին սրտով անդող,
Դավիթը՝ սար, աղջիկները՝ ակ ու աղբյուր սարից իջնող:—

«Մեր քաջ Դավթին արև՛ ուզենք,
Արևը միշտ անգին մնա,
Արևը միշտ անգին մնա,—
Մեր գլխին ու կյանքի՛ն մնա:—

*) Գազպա—քաղցր հյութ, վոր ուտում են:



Մեր քաջ Դավթին արև՛ ուզենք,
Արևը միշտ շողին մնա,
Արևը միշտ շողին մնա.
Մեր գլխին ու հողի՛ն մնա:—

Մեր քաջ Դավթին արև՛ ուզենք,
Ջահել կուռը կանա՛չ մնա,
Ջահել կուռը կանաչ մնա,—
Մեզ բոլորիս ճանա՛չ մնա:

Մեր քաջ Դավթին արև՛ ուզենք,
Թիկունքը միշտ պողպա՛տ մնա,
Թիկունքը միշտ պողպատ մնա,—
Կայծակ Թուրը անպա՛րտ մնա:

Մեր քաջ Դավթին արև՛ ուզենք,
Սեր–մուրազը պայծա՛ռ մնա,
Սեր–մուրազը պայծառ մնա,
Դալար, դալար, շող ծա՛ռ մնա:

Մեր քաջ Դավթին արև՛ ուզենք,
Մեր Դավիթը արև՛ մնա,
Մեր Դավիթը արև մնա,
Միշտ մեր գլխի վերև մնա»:

Դավիթը խոր գլուխ տվեց.—Շնորհակալ եմ, ասաց,—քույրեր,
Ձեր բոլորիդ ծառան եմ յես և հարազատ յեղբայրն եմ ձեր.
Մարդն յերջանիկ ու բախտավոր իրեն կզգա ա՛յն ժամանակ,
Յերբ չի կախված ժողովրդի գլխի վրա վոչ մի վտանգ:

Ապա դարձավ իսկույն դեպի Քեռի Թորոսը աժդահա,
Ասաց.—Քեռի՛, քեզ եմ հանձնում իմ քույրերին բոլորն ահա.
Գազպաքաղից ավելի լավ աշխատանք եմ տալիս սրանց,—
Վո՛չ միայն այս աղջիկներին, այլև պարապ կին ու արանց:

Քեզնից կուզեմ քառասուն մարդ, որ հող թալե, խիպա՛ր կրե,
Քեզնից կուզեմ քառասուն մարդ, որ խիճ ջարդե ու կիր կրե,
Քեզնից կուզեմ քառասուն հյուսն ու քառասուն վորմնադիրներ,
Ու քառասուն քարտաշ վարպետ ու քառասուն փայտ կրող ձեռ·

Քեզնից կուզեմ, որ քաղաքի բերդի առաջ, վերին թաղում,
Վորտեղ, որ մի ժամանակ քո ծուռ Դավիթը ճան էր խաղում,
Վորտեղ, որ մի ժամանակ կար կաղամբանոց, ձմերկանոց,
Սրանց համար շուտ շինել տաս մի ընդարձակ ջուլհականոց:

Ու շատ չանցած, բարձրաբարձիկ բերդի առաջ Սասնա հզոր,
Յերբ արևը դեռ չէր թեքվել, յերբ կանգնել էր պայծառ կեսօր,
Ջոքերի տակ աղջիկների, մատների հետ վարժ ու արագ—
Պտտվեցին հարյուրավոր իլի՛կ, մաքո՛ք ու ճախարա՛կ:



# ԴԱՎԻԹՆ ՈՒ ԳՅՈՐԳԻՆ

Քառասուն օր, վորսի յետնեն, վազվըզելով քար—քարից,
Դավիթն հոգնած և ուժասպառ, ներքև իջավ Անդոկ սարից·
Մտավ բերդի նախշուն հողեն, հաց էլ չառավ բերանն իրա,
Քնեց յոթն օր, յոթը գիշեր, անշարժ ընկած մեջքի վրա:

Քնեց ու մի յերազ տեսավ,—իբրև հեռու վրաստանում,
Քառասուն դև յեկել ահա, լցվել ձորի մեծ զնդանում·
Պաշարել են վրաց հսկա Գյորգիի բերդը քարակերտ,
Ու կռիվ է մղում Գյորգին՝ քառասուն քաջ դևերի հետ:—

Ինքն ուզում է գնալ, ոգնել, բայց չի պոկվում պառկած տեղից,
Մինչդեռ Գյորգին զրկըվում է վերջին նետից ու աղեղից·
Ու զարկում են դևերն անվերջ, բաքան գցում, նիզակ նետում,
Ու մեռնում է ահա Գյորգին մեն ու մենակ իրեն բերդում...

Ճչաց Դավիթն ու վեր թռավ ծանր ու տանջող յերազից այդ,
Նստեց, թաղված մտքերի մեջ, կասկածների մեջ չարավատ:
Մտավ Քեռի Թորոսն այնժամ, տեսավ Դավթին գունատ ու լուռ,
Ժպտաց, ասավ—ե՞ր ես թթվել, ե՞ր ես տխուր, Սասունցի՛ ծուռ:

— Յերազ տեսա, Քեռի Թորո՛ս... Ու պատմեց իր յերազը չար:—
Վե՛ր կաց, Քուռկիկ Ջալալին բեր և ինձ իսկույն Վրաստան տար:
Հեծան իրենց նժույգները, կուռ կապեցին զենք ու զրահ,
Արևը՝ թիզ չբարձրացած, յելան Վրաց սարի վրա:

— Եհե՜յ, Գյո՛րգի՛, ո՞ւր ես, Գյո՛րգի, ի՞նչ ես անո՛ւմ, ընկեր-ախպե՛ր,

Դավի՛թն եմ ես, մեր անցկացրած լավ օրերը քո միտը բե՛ր․
Անցավ Դավթի ձայնը թնդուն—վրաց յերկրի մի ծայրից ծայր,
— Հա՛յ, հա՛յ, ասավ հսկա Գյորգին,—Դավի՛թն ե դա իմ խաչեղբայր:

— Դա՛վի՛թ, բարո՛վ, կանչեց Գյորգին,—մինչև քո մի աչքը թարթես,
վրաց կանաչ սարի գլխին կհանդիպի յեղբայրըդ քեզ:
Մինչև Դավիթն աչքը թարթեց՝ տեսավ կանգնեց իրեն առաջ
Մի գեղեցիկ յերիտասարդ, հաղթանդամ ու զինաշառաչ:—

Արծվենի քիթն իջնում եր կեռ բեխերին նրա բարակ,
Գեղանկար ու շողշողուն շրթունքներին կարմիր կրակ․
Սև աչքերը՝ սև եյին քանց հազար գիշեր առած իմի,
Դեմքն սպիտակ ու թափանցիկ—նման նրբին մեղրամոմի:

Հորդ մազերը, ջրվեժի պես, սևափայլուն ու սևահուր,
Վոլո՛ր-վոլո՛ր թափվում եյին, իջնում մինչև ուսերը կուռ,
Վոսկեդեղին սաղավարտը, ամուր նստած գլխին նրա,
Արեգակի նառագո՛ւմն եր բարձրագագաթ սարի վրա:

Ու դեմ ու դեմ յելան սիրով յերկու հսկա, վիթխարի սար,
վորոնց նո՛ւյն հողմն ե ծեծել միշտ, նո՛ւյն արևն ե արևել վառ․
վորոնց բախտը նո՛ւյնն ե յեղել, վորոնց վիշտը յեղել ե նո՛ւյն,—
Ու բաժանել միշտ իրար հետ՝ թե՛ խնդություն, թե՛ դառնություն...

Համբուրեցին նրանք իրար գրկախառնված ու կաթոգին,—
Համբույրի մեջ դրած իրենց ամբողջ ո՛ւժը, սի՛րտն ու հոգին․
Մեկը մեկի թևն արյունեց, ու խմեցին, խաչաձևված․
Ուրախության արցունքն աչքում՝ այն ժամանակ Դավիթն ասաց:

— Դա՛վ ե նյութում կինը հանախ, դավ ե նյութում յեղբայրն յեղբոր,
Դեմ ե գնում հա՛յրը վորդուն, վորդին դե՛մ ե գնում իր հոր․
Բայց յերկուսիս աղն ու հացը, մեր յերկուսիս սերը վկա՝
Արևի տակ՝ լավ ընկերից՝ թանկ-թանկագին վոչինչ չկա:



Ի՜նչ լավ ե, վոր աչքիս առաջ, քեզ քաջառողջ տեսնում եմ յես,
Ցերազ եյի տեսել յես վատ... Մեր Թորոսը կպատմի քեզ:
Խնդաց Գյորգին, յերբ վոր լսեց, ապա ասաց,—Դավի՜թ ախպեր,—
Մեզ իրարից չի՛ բաժանի վոչ մի չար սիրտ, վո՛չ մի սև ձեռ:—

Իսկ այժմ դու և սիրելի Քեռի Թորոսը պատվական,—
Իմ աչքի լո՛ւյս, իմ թանկագի՛ն, իմ հյուրե՛րն եք անզուգական,
Այսպիսի բախտ ո՞վ կտար ինձ, նույնիսկ չքնաղ մի յերազում․
Դե քշեցե՛ք, կպատահի, մի օր ել յե՛ս կգամ Սասուն...

Ու քշեցին յերեք հսկա ձիերն իրենց քառատրոփ․
Վրաց բարձր սարից իջան, արագ, ինչպես շանթ ու վորոտ․
Ու շիկամորթ յեղնիկների մի մեծ յերամ առաջ արած՝
Հաղթ ուսերին յերեք արծիվ՝ հասան Բարձր Բերդը վրաց:

Ու զիլ զնաց անցավ լուրը—վրաց յերկրի մի ծայրից ծայր,—
Թե՝ յեկել ե քաջ Գյորգիի Սասնա Դավի՛թը խաչեղբայր,
Ցեվ, սկսած Բարձր Բերդից, խրճիթներից մոտ ու հեռուն,
Կախեթի թունդ գինին լցվեց ուրախարար բաժակներում:

# ԲՐՁԱ-ԲԱԼԱՔ*)

Մանուկ Միհրն անցավ յերկար ճար ու ճամբա թե լավ թե վատ,
Հոգնած, ծարավ ու անոթի՝ յելավ հասավ Ձղիրու Շատ.
Ձղիրու Շա՛տ, հարյուր քառսուն գետ-գետակի հետ միացած՝
Ափից յելած ծովի նման՝ հորդ իջնում ե սարերից ցած:

Ամեն գարնան՝ գետը յելնում, շառաչում ե ու փրփրում,
Ավերում ե գյուղ ու քաղաք, ու ծով կտրում դուրան դաշտում,
Սարերի սուր կատարները ծածկում խորը, թաղում անհետ,
Ու խեղդում ե սեգ արծըվին իր նոր հանած ձագերի հետ:—

Յերբ վոր հասավ Ձղիրու Շատ. Ձղիրու մեծ քաղաք մտավ,
Գնաց վերջին աղքատ թաղը, մի անշավակ սյառավ գտավ.
Կերավ կտոր մի գարեհաց, թան քաշեց իր սրտի բոլոն,
Ձեռքը դրեց լայն ճակատին, ու ընկավ իր մտքի ծովում:—

— Աշխարհին առա յես վոտքի տակ ու չտեսա արդարություն,—
Մարդը գայլ ե մարդու համար, և ուտում ե մարդը մարդուն,—
Խեղճը դատի՛, հարուստն ուտի՛, խեղճը շահի՛, հարուստն առնի.
Ես աշխարհ չե՛, ես դժո՛խք ե, վորբի համար՝ փուշ ու կռնի:—

Շահի համար՝ թագավորը՝ զորք ե հանում, կռիվ անում,
Շահի համար՝ չար հարուստը՝ խեղճ աղքատի հոգին հանում,
Վոսկի արծաթ բերում, շեղջում, շոր ե հագնում թանգ, թանկագին,
Աղքատները մի հասարակ շիլա շապիկ չունեն հագին:—

Ես աշխարհ չե՛, ես դժո՛խք ե. ու մնում ե միայն մի ճար,—
Ով անտուն ե և անոթի՝ ով ուտում ե սոխ ու բանջար՝

*) Սև ու սպիտակ բերդ:



Յելնեն, զարկեն թագավորին, հարուստներին չար ու խոլոր,
Դառնան իրենց աշխատանքի, իրավունքի տերը բոլոր...

Այս մտքերի մեջն եր Միհրն, յերբ լսվեց մի խուլ դղրդոց,
Բարձրացավ մի սուր վայնասուն, լաց ու կական, ճիչ ու գոռոց.
Ելավ դուրս թռավ, ու տեսավ, վոր տեղից պոկված մի խուռն ամբոխ՝
Նեղլիկ ու ծուռ փողոցներով, խուռնապում ե կրընկակրնկ:—

Ձղիրու Շատն, ինչպես սարից պոկված ջրվեժ մի ահագին,
Ինչպես ծովի կատաղի յելք, ալիքն առած մի ալիքին,
Հեղեղում ե մի ամբողջ թաղ, ծածկում խրճիթ և աշտարակ,
Հոնդում ե, լափում, կորզում հանց հրդեհի անզուսպ կրակ:—

Ու փախչում են մարդիկ ահա այլայլված ու խելակորույս,
Թողած մանկանց որորոցում, ու՝ պապիկին ճերմակմորուս,
Թողած տուն-տեղ, կահ-կարասի, մոլեգնում են խենթ, մթագնած,
Իրար կոխում ու տրորում մեկը մեկի մեջքը մտած...

Տեսավ. աչքերը վառվեցին. վազեց դեմի սարը շտապ,
Սարի գլխից պոկեց մի ժայռ, պոկեց մի ժայռ նա սարի չափ,
Վեր բարձրացրեց հաստ թևերով, ամբողջ ուժով շպրտեց վար,
Յետ դարձրեց հորդ հեղեղը, ժայռը արած պատ ու պատվար:—

Ասես հազա՛ր, հազա՛ր առյուծ մռնչացին միանգամից,
Ջուրն յերկնղվեց, կատաղորեն նահանջելով գերված թաղից.
Յերկնյուղ հունով հոսեց դեպի դաշտերը չոր ու անջրդի,
Վոր վո՛չ մի դաշտ հուր հավիտյան ել անձրևի չկարոտի:

— Դարձե՛ք, գոռաց սարի գլխից,—դարձե՛ք, շինեք տները ձեր,
Շուտ, յե՛տ դարձեք, քաղքըցինե՛ր, շտապ դարձեք, մանուկ ու ծեր.
Ել Ձղիրու Շատը յերբեք ձեր քաղաքը չի հեղեղի,
Քանի վոր կա սարից գցած պատվար-քարը Դավթի տղի:—

Քաղքըցինե՛ր, չվախենա՛ք, ժայռեր պիտի գցեմ նորից,
Ժայռեր պիտի գցեմ նորից, պիտի իջնեմ բարձըր սարից.

Բերդ շինելու գետի ափին, վորտեղից վոր հեղեղը միշտ
Բարձրանում ե, մտնում քաղաք, պատճառելով ձեզ ցավ ու
վիշտ:

Ասաց· պոկեց տասը սև ժայռ, պոկեց տասը սպիտակ ժայռ,
Սարի գլխից, դղրդալի, ամբողջ ուժով շպրտեց վար·
Ապա իջավ, դարսեց մեկ-մեկ, շինեց բերդի հիմքը ամուր,—
Հիմքի վրա վեր բարձրացրեց բերդ-աշտարակը քարակուռ:

Այն որվանից մինչև հիմա Ջզիրու Շատն ամեն տարի
Թեև հորդում, ափից յելնում, բայց դիպչում ե այն վիթխարի
Քարաժայռից ամուր կոփված աշտարակին կո՛ւռ, յերկնառա՛ք·
Միհրաշեն բերդի՛ պատին, վոր կոչվում ե Բրչա-Բալաք:



# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՏՐԻԲՈՒՆԸ

## ԵՄԻԼ ՎԵՐՀԱՐՆ

Կոպիտ կեղև հագած հսկա ծառը ինչպես,
Ժամանակին կախված տներին հին ու խեղճ,
Նա կանգնա՛ծ է ահա համառ, հզոր ու վես,
Եվ ի՞նչ ուժ է արդյոք նա բռունցքել իր մեջ:

Մեծացել է նա մեծ քաղաքների մայթին,
Քոսոտ և խեղանդամ արվարձանում,
Ուր վոր խեղճության մեջ՝ գազանացած մարդիկ՝
Ընդդեմ անցյալների՝ քեն ու սուր են հանում:

Մարդիկ, վորոնք նկուն՝ կուտակել են միայն
Լռին զայրույթ ու մահ, չնչին վաստակ·
վորոնց ծեգն հանգում է թշվառության,
Իսկ վախճանը՝ մթին և անհաստատ:

Ո՛, նրա ընդվզումն աղմուկներում մարտի,
Երբ ինքն անհուն ու մեծ ժողովուրդը
Ծառանում է հանուն հացի՛, բախտի՛,
Կատաղությամբ յելնում, վոր ամեն ինչ քանդի—
Շանթասլաց ցասմամբ
Փշրելով վոսկեզարդ և՛ դուռ, և՛ ապակի,
Եվ նզմե՛լ, փողոցում փռե՛լ, ահագնությամբ,—
Վոսկի՛...

Եվ նրա խոսքերը հզո՛ր, կարմի՛ր, հատո՛ւ,
Դեպի յերկինք ձգված կայծի խուրձեր ինչպես,
Տարերայի՛ն, ազդո՛ւ:
Նրա բարկությունը, սերն ու խինդը հրկեզ,
Թափած շուրջն իր զնգուն, հնչուն:
Գաղափա՛րը նրա,
Նրա այրող մտքի սլաքն յուրաքանչյուր
Ծնված յեռուզեռից, սերված կրծքից իրա,
Շարժումները հախո՛ւռն, մրրկայի՛ն,
Նա նետում է յերազ իր սերմերն հուրհրան
Բյուրավոր, հրավառ, կարմիր ճակատներին...

Նա այն որից դարձավ կրքի վոգու արքա,
Եվ բարձրացավ և դեռ կբարձրանա նորից:

Նրա իշխանությունն ու նոր ու խոլական
Վո՞րտեղից է սերում, և կամ վորի՞ց:

Եվ նա յելնում է. կյանքն սպասում է նրան,
Նա քինոտ սրտերի աղաղակն է հուժկու,
Նա խոսքե՛ր է կրքոտ և հուրհրան,
Նա սարսա՛փ է, վտա՛նգ, տարերք է ահարկու,
Նա և՛ լռություն է, և՛ կամք, և՛ սեր անպարտ,
Եվ ուժ կենտրոնական, ընդդեմ ա՛յն բռնակալ
Ուժերի, վոր պատմության կամքը հպարտ
Թրջում են արյամբ հավերժական:

Ահավասիկ կանգնած է քառուղում,
Ուրկից աշխարհների ճամբարների հունով
Պիտի գան սերունդներ բազմաբեղուն,
Ո՞վ իմանա, թե ի՞նչ լուսայգով նոր:—
Եվ նա մե՛ծ է, մե՛ծ է, բնազդներով իր կույս,
Հյու ճակատագրին անտեսնելի,
Վորից անտեղյակ է, բայց ձեռքին՝ շանթ ու լույս,



Ինչպես առեղծված անլուծելի.
Ճակատից մինչ վոտքերն ընդերքի մեջ մխվող,—
Ժողովրդի գրկում գնում է սնվելու,—
Այնտեղ՝ և մեռնելու,
Համառ և անփոփոխ:

Ի՞նչ փույթ, սակայն, յեթե գործը իր ավարտած
Փոխվի սգի մի որ և լուռ անեանա,
Ժողովրդից առված և կամ փառաբանված,
Մինչդեռ ժամանակը հար կմնա,—
Կգա նորեկ մի մարդ և սերունդը գալիք
Ել չի հետևի հին առաքյալին:
Ինքն առմիշտ կկորչի, սակայն կրկին դարձած՝
Կայրի ամբոխի մեջ,—մինչ ապագան
Նրա մոտ է այնպե՛ս. մոտ են և՛ ծովը բաց,
Ջրերի յերթն ագահ և խոլական,
Եվ իրար հաջորդող նրանց զեղումը թաց:

Նրա ուժն այնտե՛ղ է,—Ովկիանոսի կրծքին,
Նա լեցուն է միշտ կայծակներով.
Եվ նրա մտքերը, այնքան ճշմարտագին,—
Նրա պիրկ մարմինն են—շանթե մկաններով.
Նա կյանքն ալեկոծեց ամբողջությամբ,
Պեղեց նրա խորքը, տարավ իր հետքերով,—
Ինչպես մտածել եր առա՛ջ, միայնությա՛մբ:

# Ա Ն Ձ Ր Ե Վ Ը

ԵՄԻԼ ՎԵՐՀԱՐՆ

Ինչպես թելեր անձայր, անծիր, անհատնում,
Վայր է իջնում անձրևը գորշ ու տրտում,
Գծգծելով դաշտն ու ճահիճն անճանաչ,
Պատուհանի ապակիները կանաչ,
Անձրևն անհո՛ւն, բյուրառե՛չ,
Յերկարառե՛ջ, թունո՛տ, գե՛ջ
Անձրև՛ը:

Այսպես. յերեկ իրիկուն,
Գորշափոշի թխպագույն
Յերկնքից վայր
Մութ ու մառ
Քանդվեց, ինչպես անծիր կծիկ լուսազեղմ,
Իջավ, փռվեց միօրինակ, տարտամ, մեղմ,
Ուղիներին փոշեհագ,
Մարգագետնին զմրուխտի,
Կածանների վրա փակ
Ու դաշտի:—

Մղոնացույց ցից սյուների յերկայնքին,
Հանդարտ դաշտին, արվարձանին ու մարգին,
Ուղիներին անձայր, անծիր, վոլոր, թեք,
Վորտեղից վոր լուռ անցնում են սրտաբեկ
Սև թափորի ձիակառքերը ծածկած.
Կարավանները քրտնաթոր ու հոգնած.

Իջնում է վայր անձրևը մառ ու տամուկ,—
Անիվների ակոսների մեջ բանուկ,
Վորոնք հեռվում խափանվում են զուգահեռ,



Ձուլվում անհուն յերկընքին, վոր սևահեր,
Գիշերն ամբողջ թորում է հար միայն ջուր,
Ու լալիս են տներ, ծառեր ճյուղ առ ճյուղ,
Ամեն մի իր թափանցող գեջ անձրևից.
Միօրինակ, յերկարառեջ անձրևից:

Գետերն իրենց փուխր յեզրերից հորդելով
Դուրս են գալիս դաշտ ու արոտ կուլ տալով.
Ուր ծփում է տխրահեծ
Մի փունջ չոր խոտ ջրահեղձ.
Որրում է հողն՝ ընկույզի
Ծառերն ու ցախ, ցարասի:
Ահազարհուր ու հոգնած,
Մինչև կեսմեջք, հորդ ջրերի մեջ կանգնած,
Յերկինքն ի վեր բառաչում են խելահեղ
Յեզներ սևմորթ ու մարմնեղ:
Չոքում է լուռ գիշերը սև ու մթար՝
Կլանելով դաշտեր, ծովեր ու անտառ,
Յեվ մնում են տակն անհատնում անձրևի.
Անձրևի գորշ մշուշի,
Անձրևն, ինչպես սև ածուխի սև փոշի:

Յերկարտեվ անձրևն այս՝
Նույնանման, ինչպես քանդված թել-թել վարս,
Յեղունգներով իր մշտահոս, անվարան,
Հյուսում է քուրջ ու պարան
Թշվառությա՛ն, խեղճությա՛ն,
Տների և հյուղերի,
Ու վորմերին գյուղերի,
Հին ու խարխուլ;
Կիսափուլ:
Հյուսում է նա ցնցոտի
Վուշի թելով հնոտի
Յերկայնքն ի վար ձողերի,
Ուր քանդվում են քիվերի տակ մառ ու մութ—
Անմեղ ու խեղճ աղավնու բույնը կապույտ,—
Լուսամուտներ ապակեծածկ, գորշ, պղտոր,

Վորոնց վրա մրոտ թուղթ կա ու կտոր,
Բնակարաններ՝ իրենց բախտին անհաղորդ,
Վորոնք ունեն ջրորդաններ ջրով հորդ,
Ջրաղացներ միորինակ, տխրահեծ,
Բլուրներին դրած խարիսխը իրենց,
Ցեկեղեցիք՝ ու գմբեթով ու զանգով,
Ու մատուռներ՝ խուլ հանգով.
Անձրև՛ը,
Ցերկարատև՛ անձրև՛ը,
Զմեռն ի վեր ու մաշում,
Խողխողում է ու տաշում
Նրանց նախկին բուն ձևը,
Անձրև՛ը:

Անձրև՛ը,
Ցերկարատև անձրև՛ը,
Թելերով իր մռայլամած ու թախծոտ,
Ջրային իր վարսերով ծուփ ու ծով-ծով,
Ցերկարատև անձրև՛ը
Ցերկրների վաղաշեջ,—
Հավերժական ու անվերջ:



# ՀԱՎԵՐԺԱՀԱՐՍԸ

## ՊՈՒՇԿԻՆ

Լճափին, խուլ անտառում
Ապրում էր մի ճգնավոր.
Թաղված մռայլ գործերում՝
Պա՛ս էր պահում ամեն որ:
Ձեռքին բռնած մի հին բահ՝
Փորում էր ցուրտ մի շիրիմ,
Վոր ընդուներ հանգիստ մահ,
Աղոթելով սուրբերին:

Մի անգամ ծերը ամռան,
Շեմքին իր հին խրճիթի
Աղոթում էր ջերմեռանդ,
Ցերբ իջավ քողը մութի.
Լճին նստեց բարակ մեգ,
Լուսինն յերկնից ամպերում
Հանգիստ սահում էր անթեք.
Ծերը ջրին էր նայում:

Նայում էր նա ահառած
Ցեվ իր վրա զարմանում,
Տեսնում, վոր լիճը հանկարծ,
Ցեռում է ու մեղմանում.
Ցեվ ահա մեղմ, նրբագին,
Ճերմակ, ինչպես նորեկ ձյուն,
Ջրից յելնում է մի կին,
Լճափ նստում անհրծծյուն:

Նայում է նա ծերունուն
Ցեվ մազերը սանրում թաց,
Ծերը ահից դալկանում,

Բայց նայում է հիացած.
Կույսը կանչում է, ասես,
Ձեռքով ու գլխով արագ,
Եվ չքանում աստղի պես,
Սուզվում հանկարծ ջրի տակ:

Չքնեց ծերն վողջ գիշեր,
Եվ չաղոթեց վողջ որ նա,
Եվ շարունակ տեսնում էր
Դեմքը չքնաղ աղջկա.
Եվ թավ անտառն էր մթնում,
Սահում լուսինը վերից,
Եվ նորից կույսը յելնում,
Գունատ, նստում ափերին:

Նայում, գլխով է անում,
Համբույր տալիս սիրակեզ,
Խաղում, քրքիջ է հանում,
Լաց է լինում մանկան պես.
Կանչում, քնքույշ հառաչում...
«Արի՛ ինձ մոտ, ազնավո՛ր».
Եվ նորից ջրում կորչում,
Լռության մեջ ահավոր:

Լճափին ծերն յերեք որ—
Ու սիրավառ ու տրտում
Սպասում էր, մինչև վոր
Անտառը մութն էր պատում.
Եվ մի որ վաղ՝ չքացավ
Ճգնավորը այդ ծերուկ.
Լոկ մանուկները տեսան
Ջրում ճերմակ մի մորուք:



# ՍԱՏԱՆԱՆԵՐ

## ՊՈՒՇԿԻՆ

Մութ ամպերն են փոթորկալից
Ծածկել լուսնի դեմքը լուրթ,
Ձյունը թռչում, կայծ է տալիս,
Պղտոր յերկինք, պղտոր մութ:
Կառքը դաշտով տանում է ինձ,
Եվ զանգակն է զնգզնգում,
Դաժան ահը, ակամայից,
Ծայր է առնում իմ հոգում:

— Ե՛յ, կառապա՛ն, քշի՛ր, ուշ է.
— Ձիերն, ա՛ղա, ուժ չունին.
Բուքն աչքերըս կուրացնում է,
Փակ են ճամբեքը չորս դին.
Հետք չեմ գտնի թե սպանես,
Մոլորվել ենք, ի՞նչ անել.
Մեզ, չորս կողմից, ա՛յ տեսնո՞ւմ ես,
Սատանեքն են շուրջկալել:—

Նայի՛ր, նայի՛ր, տե՛ս, խաղում են,
Փչում, թքում անամոթ.
Ձորակի մեջ խըռնըրվում են
Խելագարված ձիու մոտ.
Այնտեղ, հեռվում մութ, անզուման,
Դեմըս ցցվում են անվերջ,
Փայլում փոքրիկ պեծի նման,
Նորից կորչում մեզի մեջ:

Մութ ամպերն են փոթորկալից
Ծածկել լուսնի դեմքը լուրթ,

Զյունը թռչում, կայծ է տալիս,
Պղտոր յերկինք, պղտոր մութ:
Մեզ ուժ չկա գնալ առաջ,
Հանկարծ զանգակն է լռում,
Դնաշտում ձիերը կանգ առան,
— Գա՞յլ, թե՞ կոճղ է յերևում:

Բուքն վոռնում է, բուքը լալիս,
Խորդում ձիերը զգոն.
Յերևութքը ծառս է գալիս՝
Աչքերը հուր-կրակով.
Փախցընում են ձիերը մեզ,
Յեվ զանգակն է զնգզնգում,
Վոգիները, տեսնում եմ յես,
Կիտվում են բաց տեղանքում:

Այլանդակ ու անհատնելի,
Ճերմակ դաշտում անսահման,
Մեզ շուրջկալել, պար են գալիս
Տերևների պես աշնան:
Ո՞վ է նրանց առաջ մղում,
Ի՞նչ ձայներ են մորմոքի,
Հարազատի դի՞ն են թաղում,
Թե՞ պսակ է վհուկի:

Մութ ամպերն են փոթորկալից
Ծածկել լուսնի դեմքը լուրթ,
Զյունը թռչում կայծ է տալիս,
Պղտոր յերկինք, պղտոր մութ.
Յեվ, խումբ առ խումբ, իմ առաջով
Սատանաներն են սուրում,
Զա՛ր վոռնոցով ու տրտունջով
Իմ խեղճ սիրտը գալարում:



## Ժ Ա Յ Ռ Ը

ԼԵՐՄՈՆՏՈՎ

Հսկայական ժայռի կրծքին
Վոսկե ամպիկն եր գիշերում.
Իսկ յերբ բացվեց լույսը կրկին,
Սահեց, խաղաց նա յեթերում:

Յեվ ծեր ժայռին մնաց տրտում
Խոնավ մի հե՛տք այն ամպիկից,
Յեվ ժայռն ահա անապատում
Արտասվում է դառնակսկիծ:

## ԿԱԶԲԵԿԻՆ

### ԼԵՐՄՈՆՏՈՎ

Աշխարհից ոտար, մշտարև,
Բռնելով հյուսիսի ճամբան՝
Քե՛զ, Կազբե՛կ, ողջո՛ւյն եմ բերել,
Քե՛զ, արևելքի՛ պահապան:

Սպիտակ չալմայով միշտ դու
Պատել ես ճակատդ կնճռոտ,
Ցեվ հպարտ տրտունջը մարդու
Չի հուզել հանգիստդ խրոխտ:

Բայց սրտիս խնդիրքը, Կազբե՛կ,—
Տանեն թող ժայռերդ անմերժ
Աստղաշատ յերկինքը քո սեգ,
Մինչև գահն ալլահի հավերժ:

Խնդիրքս է, վոր հովիտը ջերմ
Ցեվ փշոտ ուղին իմ որվա
Ձո՛վ լինեն, վորպեսզի հանգչեմ,
Կեսօրին, մի քարի վրա:

Խնդիրքս է, վոր սպառնալի
Փոթորկից պահես ապահով,
Ցերբ մռայլ կիրճի՛ց Դարյալի
Անցնեմ յես իմ հոգնած ձիով:

Ցեվ ունեմ նաև մի այլ իղձ՝
Դողո՛ւմ է սիրտն իմ խոսքերում.
Գուցե ինձ, աքսորման որից,—
Ձեն հիշում հայրենի յերկրում:

Կգտնե՞մ գգվանքը նախկին,
Կողջունե՞ն հին որվա սրտով.
Կիմանա՞ն արդյոք պանդուխտին
Այսքա՛ն տարիներ հետո:

Թե՞ լռին, ցուրտ շիրիմների
Պիտի յես հանդիպեմ անձայն.
Մարդկանց այն բուռներանդ, բարի,
Վորոնց հետ թարմ կյանքըս անցավ:

Ո՛, յեթե այդպես է, Կազբե՛կ,
Շտապի՛ր, ինձ տակովն արա,
Ցեվ փռիր իմ անյունը հեզ
Չորս բոլոր—կիրճերիդ վրա:

## ԱՆԱԿՐԵՈՆԻ ՇԻՐԻՄԸ

ԳՅՈԹԵ

Աստ, ուր վարդն է բողբոջում, ուր վոստեր կան ու դափնի,
Ուր աղավնին է ճախրում, ուր ճպուռն է յերգում մեղմ,
Ո՞ւմ գերեզմանն է, արդյոք, վոր պճնել են աստվածները
Ամեն տեսակ ծաղկունքով: Անակրեո՛նն է հանգչում աստ:
Այդ յերջանիկը ապրեց գարո՛ւն, ամա՛ռ և աշո՛ւն,
Բայց ձմեռից ազատեց նրան—թումբն այս վերջապես:



## ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ

ԼԻ-ԹԱՅ-ՊՈ

Զինվորի կինը տխուր նստած է պատուհանի մոտ,
Մետաքսե բարձին մի ճերմակ վարդ է ասեղնագործում.
Հանկարծ ծակում է մատը ասեղով ու մատն արյունոտ
Մի ճերմա՛կ, ճերմա՛կ վարդի կոկոն է արյունով ոծում:

Ու միտքը կնոջ թռչում է թափով հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,—
Պատերազմի դաշտն, իր սիրածի մոտ, ուր զենքը ձեռին
Գուցե հենց հիմա մեռնում է կյանքի կարոտն աչքերում,
Խառնելով կարմի՛ր, կարմի՛ր արյունը դաշտի ձյուներին:

Ո՛, բա՛խտ, լսում է ձիու վոտնաձայն... ի՞նչ դոփյուն է այդ:
Արդյոք սիրա՞ծն է տուն վերադառնում.—վառ բա՛խտը իրա.
Ո՛, վո՛չ. իր սիրտն է, վոր տրոփում է ուժգին, անընդհատ,
Յեվ խոնջ մի գլուխ կախվում է կարմի՛ր, ցո՛ւրտ բարձի վրա:

Զինվորի կինը տխուր նստած է պատուհանի մոտ,
Թափում է մետաքս բարձին արծաթյա արցունքները իր,
Յեվ լո՛ւռ է շուրջը... Ցավում է նրա մա՛տը արյունոտ,
Յեվ արցունքի մեջ՝ այն ճերմակ վա՛րդն է ցոլցլում կարմիր:

# ԲԱՀՐԱՄ ԳՈՒՐՆ ՈՒ ԳԻՆԻՆ

### ՖԻՐԴՈՒՍԻ

Մի անգամ, յերբ Բահրամ Գուրը համհարզներով մեծանուն,
Ավազանու, Մոգպետի հետ նստած գինի յեր խմում՝
Լուր տվեցին. «Այրա՛ծ մնաս, մեր իմաստուն թագավոր,
Շնորհ արա, մի ինչ վոր մարդ, ինչ վոր գյուղից հեռավոր,
Վոսկեգոտի պահլավների պրեգակիդ ի նվեր՝
Մի կարավան պտուղներ ու ծաղիկներ ե քեզ բերել»:

Ուրախացավ թագավորը համհարզներով իր բոլոր.
Յեվ նստեցրեց նորեկ հյուրին սեղանի մոտ ժպտալով.
Մինչ ուրախ հյուրն՝ հափշտակված նոխ սեղանից մեծազարդ՝
Կանգնեց վոտքի, զվարթաձայն, ինքնավստահ ու հպարտ,
Հինգ չափ տանող բաժակն առավ ընտիր գինով կարմրավառ,
Վեր բարձրացրեց արքայական նոխ սեղանից գինեվար՝
Յեվ, նայելով թագավորին, համհարզներին մեծանուն,—
Ասաց «Յես արդ՝ թագավորի պայծառ կենա՛ցն եմ խմում...»
Ու մոտ տարավ հախնապակյա բաժակն աչքի առաջի,
Խմեց մինչև վերջին ումպը, մինչև մրուրը վերջին,
Զարմացնելով բազմածներին քաջասիրտ ու գինեսեր:
— «Յես Քեբրո՛ւնն եմ, ինձ պես խմող ձեզնից վոչ վոք չի տեսել,
Սա ի՞նչ ե վոր,—հպարտ ասաց,—և սրա ուժը ինչո՞ւմ.
Յոթն այսպիսի լիքը բաժակ՝ կխմեմ յես մի շնչում»:
Յեվ խմեց նա յոթը բաժակ, դրած իրեն առաջին,
Խմեց մինչև վերջին ումպը, մինչև մրուրը վերջին:
Խմեց անբողջ ու վեր կացավ, ու հեծած իր նժույգ ձին,
Ծառաներով նամբա ընկավ ու բավական գնացին.
Քաղաքից դուրս նա զգաց, վոր ներսում գինին հրակեզ
Ափից յելնում, փրփրում ե, ալեկոծվում ծովի պես.
Ծանրացել ե գլուխն ուսին և մշուշը աչքերի,
Վորտեղ վոր ե մի ուժ իրեն թամբից ներքև կբերի:



Բաժանվելով ծառաներից՝ ուժն սպառած ու խորտակ՝
Իջավ թամբից խկույն յեվեթ և ձին թողեց ծառի տակ,
Դրեց հողին գլուխն իրեն ծանրածանրը, անզգա,
Ու քնեց խորն, ու այդ պահին մի ագռավ չար ու ագահ,
Վոր նախրում եր, թևին տալով, անտիրական ձիուն մերձ,
Վար սլացավ և սուր կտցով յերկու աչքերը հանեց:
Վրա հասան նամբորդները ու տեսան վոր, ձիու մոտ
Պառկած ե խեղն Քեբրունն անշարժ ու դեմքն ամբողջ արյունոտ:
Ու հետ ընկած ծառաները սկսեցին կշտամբել,—
Անիծելով և՛ խնձույքը, և՛ բաժակը մահաբեր:

Յեվ յերբ բացվեց առավոտը ծիրանափայլ ու հուրհուր,
Բազմեց Բահրամ Գուրը իրա գահի վրա վոսկեհուռ,
Լուր բերին, թե՝ Քեբրուն գինով՝ ընկել ե վար ու քնել,
Չար ագռավը իջել ամպից և զույգ աչքերը հանել...
Մռայլեցավ գահի վրա թագավորը յերկրակալ,
Յեվ Քեբրունի մասին տխուր խորհեց յերկա՛ր ու յերկա՛ր.
Յեվ հրաման հանեց նա խիստ, և մունետիկը յելավ,
Կանչեց, ասաց. «Լսե՛ք կոչը, դուք ռամիկնե՛ր ու պահլա՛վ,—
Թագավորի հրամանն ե՝ թե՛ մենակ, թե՛ իրար հետ,
Արգելվում ե գինի խմել վողջ աշխարհում այսուհետ»:

Այսպես անցավ մի վողջ տարի, ճիշտ մի տարի բոլորեց,
Ժողովուրդը գինու վո՛չ մի, վո՛չ մի կաթիլ չխմեց.
Ու չեր խմում նաև ինքը՝ թագավորը անսասան,
Թեև գիտեր գինու գերող զորությունը սրբազան.
Յեվ խնջույքի ժամին նրա, առավոտ կամ իրիկուն,
Ճաշին անգամ չեր յերևում վո՛չ մի գինու հոտ ու գույն:

Այդ ժամանակ, իրեն մոր հետ, մի կոշկակար եր ապրում,
Վորը խելոք ու գեղեցիկ հարուստ աղջիկ եր փնտրում.
Բայց լինելով անհամարձակ՝ ձեռնունայն եր մնում միշտ,
Սիրտը կոտոր, միտքը մոլոր, խռոված ու դառնավիշտ:

Մտածում էր խղճուկ մայրը անհուսության մեջ անձել,
Հանկարծ հիշեց, վոր շա՛տ հնուց մի գավ գինի յե պահել․
Հանեց գինին, տվեց վորդուն, ասաց․—«Քե՛զ եմ տալիս այս,—
Յոթը բաժակ յեթե խմես՝ սրտոտություն կստանաս»։
Վորդին առավ տված գինին, ապա խմեց յոթն անգամ,
Թույլ վոտքերը դարձրեց պինդ, տեսք ստացավ առնական,
Գնաց իսկույն սրտի սիրած հարսնացույին իր ուզեց․
Ճանապարհին, սակայն հանկարծ, մի զարմանք բան պատահեց։

Թագավորի գազանանոցն ընկավ մի խուլ թնդանոթ,
Ու բաց դռնից, շղթայազերծ, մի մեծ առյուծ դուրս պրծավ։
Յեվ կոշկակար տղան մինչ այդ, վոր գինով էր ու զվարթ,
Անվախ վազեց գազանի մոտ, ու չանցած մի ակնթարթ,
Ցատկեց նրա ենկուն մեջքին, ականջներից բռնելով,
Առաջ քշեց կուշտ կենդանուն, ծանր ու հանգիստ քայլերով։
Վրա վազեց վերակացուն առած թակարդ ու շղթա,
Ու տեսավ, վոր կոշկակարը առյուծի ուժը հաղթած՝
Հանգիստ նստել, քշում է միշտ, ինքը անվախ ու խնդուն,
Ինչպես մի մարդ վորը էշին առանց թամբի յե նստում։
Նույն վայրկյանին վազեց դեպի ապարանքը բարձր ու մեծ,
Ներկայացավ թագավորին և հրաշք դեպքը պատմեց։

Դիվան կանչեց թագավորը մոգպետներին բանիմաց,
Գիտուններին իր պալատի մեկ-մեկ պատմեց և ասաց․—
«Իմացե՛ք թե ի՞նչ զարմից է կոշկակարը այս ջահել,
Քանզի նման քաջ արարքը պահլավներին է վայել»։

Մարդ ղրկեցին կոշկակարին, ու պառավ մայրը յեկավ,
Յեվ իմացան նրա զարմը և արհեստը իսկական․
Թագավորի առաջ կանգնած՝ պատմեց մայրը մի առ մի,
Յերկա՛ր պատմեց ծագման մասին ու ծնունդի ու զարմի։—
— «Ապրած մնաս, ո՛վ թագավոր, յես եմ ու այս մի վորդին,
Յեվ վոչ մի բան ուժ չէր տալիս նրա հոգուն ու սրտին․
Ապրում էր նա արևից տակ, մտքով խղճուկ ու մոլոր
Անհամարձակ ինչպես յեղեգն իր գլուխը շարժելով։



Մի որ մտքումս ասի՝ նրան յես քա՛ջ պիտի դարձնեմ,—
Յեթե հնուց պահած գինուց մի քանի ումպ խմցընեմ․
Ու խմացրի յոթը բաժակ, կարմրատակեց իմ վորդին,
Ուժ ստացավ, վերջ տվեց իր լեզուն կապող ամոթին․․ ․
Հայրը նրա կոշկակար էր, յոթը պապի գործն է այդ,
Նրա ցեղից բարձրաստիճան՝ չի՛ յեղել և վո՛չ մի մարդ․
Յեվ յես գիտեմ՝ վողջ գաղտնիքը՝ գինու մեջն է զորավոր,
Ահա բոլորն, ինչ վոր ասի, ապրա՛ծ մնաս, թա՛գավոր․․․»։

Խնդաց գահին թագավորը ուրախությամբ լիուլի։
— «Մարդկանցից այս հրաշքն յերբեք թագցընել չի՛ կարելի։
Լսի՛ր, Մոգպետ, այս դեպքն ինքնին մի մեծ խորհուրդ է կրում,
Այսորվանից վերացնում եմ գինու արգելքն աշխարհում․
Թույլ եմ տալիս գինի խմել ամե՛ն մարդուն, ամենքի՛ն,
Քանզի գինին ո՛ւժ է տալիս և կազդուրում է հոգին։
Բայց պետք է վոր այնքա՛ն խմի՝ առյուծ հեծնի կենդանի,
Յեվ վո՛չ այնքան, վոր ագռավը յերկու աչքերը հանի»։

Յեվ նույն ժամին, իր նոր կոչով, մունետիկը յելավ վեր,
Կանչեց հուժկու․—Հե՛յ ռամիկնե՛ր, վոսկեգոտի պահլավնե՛ր,
Հրամանով արեգական թագավորի բարձրագահ—
Գինի՛ խմեք, վորքան կուզեք, վորքան ուժի նշույլ կա․
Յեվ պատահի յեթե մի որ խնջո՛ւյք գնաք լիաշեն՝
Այնպե՛ս քնեք, վոր վերջը ձեր մարմինները չտուժեն»։

1935–1939 *թ.թ.*

# ՑԱՆԿ

## ԵՐԳԵՐ ՈՒԺԻ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ


1. Երգ ուժի և գեղեցկության 7
2. Հեծյալները 9
3. Նավաստիներին 11
4. Գովք՝ մեր յերիտասարդությանը 13
5. Մեր յերկրի աղջիկներին 15
6. Կարմիր Աքիլեսներ 16
7. Պայծառ կենաց 18
8. Տաղ՝ խորհրդային Հայրենիքին 19
9. Մեր գնացքները 20
10. Ղուկաս Ղուկասյանի արձանի առաջ 21
11. Դավթի փառքը 22
12. Լենին 24
13. Արևի պես 26
14. Քեզ եմ բերում 27
15. Դու քեզ պահիր 28
16. Փա՛ռք Կիրովին 29
17. Ժողովուրդ 30
18. Այս գիշեր 31
19. Մանկություն 33
20. Ճախարակներ 35
21. Ծիածան 37
22. Շնորհքը 38
23. Միրաժներ 39
24. Գյուղի իրիկունը 40
25. Երգ՝ Խորհուրդ բառի վրա 41
26 Երգ դափնի ծառի 42
27. Եղնիկները 43
28. Կույրերի մոտ 44
29. Նոր գեղեցկություն 46
30. Նոր յերգի դիցուհուն 47
31. Հայացքներ 49
32. Իմ աչքերին 50
33. Խոհ 51
34. Իմ քնարին 53
35. Սեր 54
36. Մեներգային 55
37. Վողջույն 56
38. Այց 57
39. Ալբոմում 58
40. Լռությունը 59
41. Լոռեցի Ավագը 64


## ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՀԵՏ


42. Սայաթ Նովա 71
43. Քանի աղիզ 73
44. Աբովյանի արձանի առաջ 74
45. Բոշաքարում 75
46. Ժայռերը 76
47. Եմիլ Վերհարն 77
48. Լի-Թայ Պո 79
49. Երգերի գիրք 81
50. Սրինգ 82
51. Մատների անձրև 83
52. Պոետ Լերմոնտովի սոսինները 84
53. Շոթա Ռուսթավելի 86
54. Տաղերգուները 89
55. Թանկագին հյուրը 93
56. Հովհաննես Հովհաննիսյանի հիշատակին 98


## ԽՈՀԵՐ


57. Մարդը հար կհիշի նրան 101
58. Ես գիտեմ 101
59. Մարմարյա այս դամբարանում 102
60. Ո հին ուղժոխք կյանքում 102
61. Եվ չկա վոչինչ 103
62. Ինչ վոր յերազել է մարդը 103
63. Դու վորքան շռայլ ես, պոետ 104

64· Կյանքի վոչ ամեն գործը 104
65· Մեկենասն իմ Հայրենիքն է 105
66· Շուշանը 105
67· Տարբեր են սրտերը մարդկանց 106
68· Ո, դուք, վարպետներ յերգի 106
69· Որն այսօր ավելի ուրախ 107
70· Հին կյանք, դու ինձ չա՛տ ես տանջել 107
71· Ինձ ընդմիշտ սիրելի կմնա 108
72· Նվա՛րդ, քեզ յերգելը միայն 108
73· Միգապատ մի ձմրան գիշեր 109
74· Իմ մեջ 109
75· Յերկու ճերմակ աղավնիներ 110
76· Յես նստեցի մենակ 110
77· Ի՞նչ են ուզում հայացքները 111
73· Միգապատ մի ձմռան գիշեր 109

## ՀԱՅՐԵՆՆԵՐ

79· Հարցմունք արավ 115
80· Դաշտից կուգաս 116
81· Դու վարդի թուփ 117
82· Ասի՝ յեկ, տամ 118
83· Մի մեծ սխալ 119
84· Կարմիր վարդ 120
85· Տեսա յես 121
86· Խեղճ սրտիկըս 122
87· Թող, շուրթերով 123
88· Կանգնել ես 124
89· Դուրս յելա 125
90· Գարնանային ձնհալում 126
91· Լուսին մի՝ 127
92· Պաղ ջուր է բխում 128

## ՔԱՌՅԱԿՆԵՐԻ ԳԻՐՔ

93· Յես, մանկություն 131
94· Ե՛յ մանկություն 131
95· Յես քայլում եմ 131
96· Ճերմակում են 131
97· Վոչ թե մահից 132
98· Լինենք թեկուզ 132
99· Հանդիպեցինք 132



100· Տղաս, հարգիր 132
101· Ամեն մի մարդ 133
102· Չի անցնի մարդն 133
103· Այն շունչը վոր 133
104· Ջուր են վոմանք 133
105· Մարդիկ կան 134
106· Հող, ծաղիկներդ առնեմ 134
107· Այս աշխարհում 134
108· Սիրտ իմ, սիրի՛ր 134
109· Յերբ տեսնում եմ 135
110· Բացում են մեր պոետները 135
111· Յերբ կարդում եմ 135
112· Ազատ ծնվում 135
113· Ջեռքիդ բռնած 136
114· Վոչ մի բանի 136
115· Մարդը հունդ է 136
116· Առավոտյան 136
117· Մարդ, իմացի՛ր, 137
118· Ի սկզբան է 137
119· Մեծ Սաադին 137
120· Անտառի և դաշտի վրա 137
121· Յես չեմ սիրում 138
122· Ով չի կարող 138
123· Յերևույթը, ով իմաստուն 138
124· Յես եմ, վոր կամ» 138
125· Հոգի՛ս 139
126· Յերազիս մեջ 139
127· Մարդը անթիվ 139
128· Խայյամն ասաց 139
129· Յարդը լա՛վ եր 140
130· Դու խմում ես 140
131· Ինձ դյութիչ է թվում 140
132· Թեև մերթ-մերթ 140
133· Դու ժամ առ ժամ 141
134· Ժամանակն ու տարածությանը 141
135· Անթեյի պես 141

## ԲԱԼԼԱԴՆԵՐ ՈՒ ԼԵԳԵՆԴՆԵՐ

136· Ստալինի ձեռքը 145
137· Ֆրունզե 150

138. Դեպք պատահած Բուդյոննու հետ 154
139. Ռմբաձիգը 158
140. Մարա Եֆրոս 160
141. Ցերջանկության գիրքը 166
142. Ձեռքերի գինը 173
143. Դեպի Ջրաղաց 180
144. Հաֆեզի վարդերը 183
145. Կույսի աշտարակը 187
146. Ռուսթավելու վարդը 192
147. Արիոն 199
148. Դավթի ջուլհականոցը 204
149. Դավիթն ու Գյորգին 207
150. Բրջա բալաք 210


## ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ


151. Տրիբունը 215
152. Անձրև 218
153. Հավերժահարսը 221
154. Սատանաներ 223
155. Ժայռը 225
156. Կապրեկլին 226
157. Անակրեոնի շիրիմը 228
158. Կարմիր վարդը 229
159. Բահրամ Գուրն ու գինին 230





Պատ. խմբագիր՝ Եդ. Թոփչյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Ալթունյան
Սրբագրիչ՝ Բ. Ղուկասյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Գարագաշ

Գլավլիտի լիազոր՝ Ջ—1023. Հրատ. № 4916.
Պատվեր 552. Տիրաժ 3000
Թուղթ 62×94 Տպագր. 15 մամ.
Մեկ մամ. 38400 նշան.
Հանձնված է արտադրության 28 մայիսի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 5 հունվարի 1940 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

77

53-68
50-79

ՀՀ Ազգային գրադարան
NL0372043

58047